ՀՃՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ISSN 1829-2798
17
RAA SCIENTIFIC RESEARCHES

ԴԱԴԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 1997-2011 ԹԹ.

ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀՃՈՒ) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Դր.-պրոֆ. Ա. Մութաֆյան (Փարիզ), դր.-պրոֆ. Հ. Հոֆրիխթեր (Քայզերսլաութերն), դր.-պրոֆ. Մ. Հասրաթյան (Երևան), դր.-պրոֆ. Մ. Բունեման-Հախնազարյան (Ախեն), դր.-պրոֆ. Հ. Սուրուզյան (Կահիրե), դր.-պրոֆ. Լ. Զեքիյան (Վենետիկ), դր.-պրոֆ. Պ. Չորանյան (Երևան), դր.-պրոֆ. Ա. Ղազարյան (Մոսկվա), դր.-պրոֆ. Ռ. Գալչյան (Լոնդոն), դր.-պրոֆ. Ն. Մարգսյան (Երևան), Մ. Լալայան (Երևան), Ժ. Մանուչարյան (Լոս Անջելես), դր.-պրոֆ. Մ. Բալայան (Ստեփանակերտ)

ՀՃՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք ԺԷ

ԴԱԴԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 1997-2011 թթ.

ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ

РЕСТАВРАЦИЯ МОНАСТЫРЯ ДАД (ДАДИ ВАНК) 1997-2011 гг.

САМВЕЛ АЙВАЗЯН

THE RESTORATION OF THE MONASTERY OF DAD (1997 to 2011)

SAMVEL AYVAZYAN

ՀՃՈՒ (RAA) ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015

ՀՏԴ 726.5 (091)
ԳՄԴ 85.11
Ա - 551

Ա - 551 Այվազյան Սամվել
Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ. – Եր.:
ՀԵՈՒ հրատ., 2015. – 112 էջ + 16 էջ գունավոր:

ՀՏԴ 726.5 (091)
ԳՄԴ 85.11

ISBN 978-9939-843-24-7

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ (ՀԵՈՒ), 2015
© Այվազյան Սամվել, 2015

Նվիրվում է Դաղի վանքի Կաթողիկե եկեղեցու կառուցման 800-ամյակին
(1214-2014 թթ.)

The publication of this book has been made possible by the generous support of the following sponsors:

An anonymous donor in memory of Adrine Martirossian
and
Research on Armenian Architecture, USA (RAA/USA)

Գրքի տպագրութիւնը հնարաւոր դարձաւ հետեւեալ նուիրատուների
հովանաւորութեամբ՝
Անանուն բարերարի՝ ի յիշատակ Ադրինէ Մարտիրոսեանի
եւ
ԱՄՆ-ի Հայկական Ճարտարապետութիւնն Ուսումնասիրող
Կազմակերպութեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Պատմական համառոտ տեղեկություններ, վանքի կառուցապատման հաջորդականությունը.....6
Դաղի վանքի վերականգնման գործընթացը 18
Գմբեթավոր փոքր եկեղեցու վերականգնումը 20
Կաթողիկե եկեղեցու վերականգնումը 28
Ժամատան վերականգնումը 38
Զանգակատան վերականգնումը 46
Պաշտամունքային կենտրոնական կառույցների վերականգնումը 51
Պաշտամունքային կենտրոնական կառույցների վերականգնման շինարարական աշխատանքները 63
Հյուրատան վերականգնման նախագիծը 77
Տաճարի վերականգնման նախագիծը 85
Հյուրատան վերականգնման շինարարական աշխատանքները 98
Գլխավոր դարպասի վերականգնման նախագիծը 104
Օգտագործված գրականության ցանկ 110

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ միջնադարյան պաշտամունքային առավել աչքի ընկնող վանական համալիրներից է Արցախի Վերին Խաչեն գավառում՝ Տրտու (Թարթառ) գետի ձախ ափից ոչ հեռու գտնվող Դաղի վանքը: Այն բաղկացած է, ըստ ավանդության, առաջին դարից սկիզբ առնող, իսկ ըստ ցարդ պահպանված նյութական մշակույթի հուշարձանների՝ առնվազն ԺԲ-ԺԸ դարերին վերաբերող ավելի քան երկու տասնյակ տարաբնույթ կառույցներից:

Հայտնի է, որ հայ ժողովրդի հավատքին, քաղաքականությանը, գիտությանն ու մշակույթին և կենցաղին առնչվող գործընթացները լավագույնս կենտրոնացվել և միահյուսվել են վանքերում:

Ճարտարապետությունը, որը պետք է կառույցներով ապահովեր մատնանշված ոլորտների գործունեությունը, առավելապես հենց վանական համալիրներում է ներկայանում իր բազմակողմանի դրսևորումներով (հոգևոր բազմաբնույթ կառույցներ, հասարակական, տնտեսական ու արտադրական շենքեր, կոթողներ, գերեզմանոցներ և այլն):

Դաղի վանքն այս առումով բացառություն չէ և ուրույն դերակատարում ունի հայ մշակույթի և պատմության ասպարեզում, հետևաբար խիստ կարևոր է ոչ միայն համալիրի բազմակողմանի ուսումնասիրությունը, այլև վերականգնումը:

ԺԹ դարի կեսերից ի վեր հետազոտողներն անդրադարձել են Դաղի վանքին (Հ. Շահխաթունյանց, Ս. Ջալալյանց, Մ. Բարխուտարյանց, Մ. Տեր-Մովսիսյան, Ս. Բարխուդարյան, Բ. Ուլուբաբյան, Մ. Հասրաթյան, Լ. Դուռնովո, Շ. Մկրտչյան և այլք):

Քարվաճառի շրջանի ազատագրումից հետո (1993 թ.) աննախադեպ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ոչ միայն վանքի հետազոտման, այլև վերականգնման և գործարկման համար (մինչ այդ ադրբեջանական իշխանությունների խստական վերաբերմունքի պատճառով հատկապես հայ մասնագետները նման հնարավորությունից զուրկ էին): Ի թիվս այլոց՝ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպությունը (ՀՃՈՒԿ) նույնպես սկսեց հետազոտել համալիրը: Լույս ընծայվեց Ս. Կարապետյանի «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» աշխատությունը, որի մի բաժինը նվիրված է Դաղի վանքին:

1997 թ. ՀՃՈՒԿ հիմնադիր-նախագահ Արմեն Հախնազարյանի նախաձեռնությամբ կազմվեց համալիրի վերականգնման ծրագիր, որի հիմնական նպատակն էր կառույցների պահպանությունը և դրանց տեղին օգտագործումը:

Ծրագրի իրականացումը կարևորվում է նաև նրանով, որ տվյալ տարածաշրջանում ամրապնդվում է բնիկների ներկայությունը, որոնք դուրս էին մղվել ադրբեջանական իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով: Ծրագիրը կյանքի կոչվեց 1997 թ. և ցարդ շարունակվում է:

ՀՃՈՒԿ-ի կողմից ստանալով հուշարձանախմբի վերականգնման նախագծի պատվեր՝ հնարավորություն ընձեռվեց մասնակցելու այդ ծրագրի իրականացմանը: Նախքան բուն վերականգնումը սկսելը կատարվեցին վանական համալիրի պատմական, մատենագրական, ճարտարապետական հետազոտություններ, չափագրումներ:

Դաղի վանքի վերականգնումը 1997-2011 թթ.

Պատմական համառոտ տեղեկություններ, վանքի կառուցապատման հաջորդականությունը. համալիրը գտնվում է Պատմական Արցախի Վերին Խաչեն գավառում (այժմ՝ Արցախի Հանրապետություն, Նոր Շահումյանի շրջան)՝ Տրտու (Թարթառ) գետի և նրա վտակ Դուտխուի միախառնման տեղից մոտ 10 կմ հոսանքն ի վար՝ գետի ձախ ափին:

Մատենագրական աղբյուրներում Դաղի վանքն առաջին անգամ հիշատակվում է Թ դարում. «...ի խորաձորն, որ կոչի Դաղոյի վանք»[1], իսկ հետագայում՝ նաև վիմագրական աղբյուրներում Դաղի, Դաղոի, Դաղուի, Դաղեի, Դատեի, Թաղեի, Դոթալ, Խութա, Առաքելոց ձևերով:

Գիտական գրականության մեջ այժմ գործածվող Դաղիվանք և Դաղի վանք անուններից ճիշտը կարելի է համարել Դաղի վանք ձևը, որն ավելի ստույգ է արտացոլում վանքը սրբացված Դաղ անունով մարդու հիշատակին կառուցված լինելու փաստը, քանի որ վանքի հիմնադրումն ավանդաբար կապված է Թադեոս առաքյալի աշակերտներից Դաղի նահատակության հետ: Վերջինս մեր թվարկության Ա դարում քրիստոնեություն քարոզելու պատճառով սպանվել է, իսկ նրա գերեզմանի վրա էլ հիմնադրվել է վանքը. «Թադէոս, մի յեւթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէի ի Մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ եւ լուէալ զմահն Արգարու,



Դաղի վանքը 1899 թ. (լուս.՝ Տարագրոսի)

1 **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 340:

2 Ժամանակագրութիւն տեառն **Միխայէլի Ասորւոյ** պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 33:

Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի 1224 թ. արձանագրությունը

դարձաւ եւ եմուտ ի Փոքր Սիւնիք եւ կրօնաւորեալ անդէն ծածկաբար՝ վախճանեցաւ եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ»[2]:

Դաղի գերեզմանի գոյության մասին մինչ այժմ հայտնի է երկու բացատրություն. առաջինը՝ ըստ ավանդության, երկրորդը՝ ըստ վանքի Կաթողիկե եկեղեցու արևմտյան պատի 1224 թ. մի արձանագրության.

Անուամբն ա(ստուծո)յ ես՝ Գրիգոր որդի Հ/ասանա, որ մեծ յուսով տուի ի / Դաղի գերեզմանս :Դ: (4) տուն շի/նակ(ան) վ(աս)ն հոգո իմո յառաջնորդ/ութ(եա)ն տ(եառ)ն Գրիգորիսի, եւ սոքա / տուին ինձ զտաւն սրբոյն Գր/իգորի զամենայն եկեղեցիքս: /Արդ՝ ով խափանի յառաջնոր/դաց զիմ ժամն կամ յաւագա/ց յիմոց կամ յաւտարաց զշ/ինական

Դամբարանախուցն արտաքուստ և ներքուստ

յետ առն(ե)լով իմ մեղ/ացս պարտական է եւ մասն նորա /ընդ Յուդայի եղիցի: ՈՀԳ (1224)[3]:

Եվս մեկ ու բավական համոզիչ փաստարկ է 2008 թ. պեղումների ընթացքում Դաղի «եկեղեցու» (ավելի ուշ կբացատրվի, թե ինչու ենք եկեղեցի բառը վերցրել չակերտների մեջ) նախախորանում՝ խորանում գտնվող կոթողի դիմաց հայտնաբերված թաղման դամբարանախուցը, որը, ենթադրում ենք, Դաղի դամբարանն է, իսկ եթե ոչ, ապա հիմնաղբյուրն է ավանդազրույցի և արձանագրության:

Մինչև ԺԲ դարը Դաղի վանքի պատմության և շինարարական գործունեության մասին էական տեղեկություններ դեռևս հայտնի չեն, սակայն ԺԲ դարի կեսին վանքն արդեն հոգևոր-մշակութային և քաղաքական խոշոր կենտրոն էր: Նրա նշանակությունն անուղղակի կերպով բացահայտվում է 1145-1146 թթ. սելջուկյան պետության դեմ ապստամբած Գանձակի շահապ (քաղաքագլուխ) Խուիտուխտին պատժելու նպատակով Պարսկաստանից եկած Չոլի զորապետի գործողությունների մասին պատմիչի հետևյալ հաղորդումից. «...այրեաց և զառաքելադիր ուխտ սրբութեանն, որ կոչի Դաղուի վանք...»[4]: Սելջուկյան թուլացած պետության դեմ պայքարում էին նաև Խաչենի իշխանները: Հավա-

3 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, կազմող՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1982, էջ 201 (այսուհետ՝ Դիվան..., համապատասխան էջերով): Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 112:

4 **Կաղանկատուացի Մ.**, նշվ. աշխ., էջ 353: Հմմտ. **Կաղանկատվացի Մ.**, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 266: Տե՛ս նաև **Սամուել Անեցի**, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132: **Ալիշան Ղ.**, Հայապատում, հ. Բ, Վենետիկ, 1901, էջ 345: Նույնի՝ Արցախ, Երևան, 1993, էջ 53: **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Երևան, 1952, էջ 101: **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 116-117:

նաբար այդ պատճառով էլ բազմաթիվ վանքերի ու բերդերի հետ միասին ավերվել է նաև Դաղի վանքը:

Հայ ժողովրդի, մասնավորապես՝ Խաչենի իշխանների՝ ԺԲ դարասկզբի պայքարը սելջուկյան իշխանության դեմ տալիս է իր արդյունքը, և նույն դարի կեսերից Արցախում դեռ վաղ միջնադարից հիմնավորված Առանշահիկ տոհմի հետնորդ իշխանները նորից որոշակի ինքնուրույնություն են ձեռք բերում: Սակայն իշխանությունն արդեն եռաճյուղ էր՝ Հաթերքցիներ, Ծարեցիներ և Խոխանաբերդցիներ: Նրանցից մեկը համարվում էր գահերեց իշխան, և այդ գահերեցությունը ԺԲ-ԺԴ դարերում ժամանակ առ ժամանակ մեկից անցնում էր մյուսին[5]: Տնտեսաքաղաքական առումով որոշ չափով բարենպաստ այս իրավիճակում (սելջուկների հետ պատերազմները դեռ շարունակվում էին) Դաղի վանքը մինչև ԺԳ դարի կեսերը գտնվում էր այդ ժամանակ գահերեց իշխաններ համարվող Հաթերքցիների իշխանության ներքո և նրանց հոգևոր առաջնորդանիստ կենտրոնն էր:

ԺԲ դարի երկրորդ կեսին վանքում հավանաբար ծավալվել են հին և ավերված կառույցների վերանորոգման աշխատանքներ: Այդ ժամանակից մեզ են հասել բազմաթիվ խաչքարեր: Դրանցից շատերը կանգնեցվել են Հաթերքի իշխանական տան ներկայացուցիչների հիշատակին, որոնք հավելյալ փաստում են Դաղի վանքի՝ որպես Խաչենի Հաթերքի ճյուղի իշխանների առաջնորդանիստ հոգևոր կենտրոն և միաժամանակ տոհմական գերեզմանատուն լինելու իրողությունը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում խաչքարերից մեկը (հետագայում սեպերով միտումնավոր կտրված և երկու մասի կիսված), որը կանգնեցրել է Վախտանգի որդի իշխանաց իշխան, այսինքն՝ գահերեց իշխան Հասանը 1182 թ.: Խաչքարի կողային (հարավային կողի) մասի արձանագրությամբ նա հայտնում է 40-ամյա իշխանության, մղած պատերազմների (ազատագրական պայքար էր ընդդեմ սելջուկների), տիրապետության տակ գտնվող բերդերի, ինչպես նաև որդիների և կյանքի վերջին տարիներին Դաղի վանքում հոգևորական դառնալու մասին.

Թ(վին Ո)ԼԱ (1182) | ես՝ Հասան, որդի Վա|խտանգա, | տ(եառ)ն Հաթերքո | եւ Հանդաբերդո, Խաչ|ինաբերդո եւ Հաւախ | աղացին, կացի յաւ|ագութեան ամս |: Խ: (40): շատ պատերա|զմաւ եւ յաղթեցի | թշնամեաց իմոց աւ|գնութեամբն ա(ստուծո)յ եւ | եղեն ինձ: Զ: (6) որդի, զ|բերդերս եւ զգաւառ|ս ետու նոցա եւ ես եկ|ի ի վանքս, մաւտ յ|իմ եղբայրս ի տ(է)ր | Գրիգորէս եւ եղե | կրաւնաւոր եւ բ|երի զխաչաքար|ս յազուաշատ | աշխատութե|ամբ եւ բազում | հնարիւք եւ կան|գնեցի ս(ուր)ք նշան | հոգո իմո յի|շատակ. արդ | վասն ձեր հո|գոյդ, որք ընթե|ռնոյք, զիս յաղ|աւթս յիշեցէք[6]:

Հասան Վախտանգյանի՝ 1182 թ. կանգնեցրած խաչքարի՝ միտումնավոր կտրված երկու մասերը

5 **Ուլուբաբյան Բ.**, նշվ. աշխ., էջ 123:

6 **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 118:



Նույն խաչքարի երկու մասի կիսված հարավային կողը

Նույն խաչքարի ստորին կեսը և հյուսիսային կողին փորագրված Հասան Վախտանգյանի ձեռագիրը

Աշխարհիկ կյանքից հեռանալու և կրոնավոր դառնալու պատճառով այս Հասանին անվանում են կրոնավորյալ: Խաչքարի մյուս՝ հյուսիսային կողին նա անձամբ իր ձեռագրով, որ շատ կարևոր փաստ է միջնադարյան ձեռագիր տառերի ուսումնասիրման առումով, գրել է.

Ձեռնայգիր է իմ՝ Հասա/նայ, եղբայրք, զգա/ստ կացայք: Ես յա/շխարհայս չե տ/արա ոչինչ, ի/աւատաց/այք դո(ւ)ք այլ չտ/անիք[7]*:*

Ըստ Հ. Պետրոսյանի՝ միստիկ իմաստ ունեցող այս արձանագրությունը ծածկագիր է՝ ուղղված միայն վանականներին. «Չէր պատշաճում, որ փորագրվեր հույսի և փրկության երաշխիք համարվող խաչքարի վրա՝ ի տես բոլորին»[8]:

Համենայն դեպս, կարծում ենք, որ արձանագրությունը ծածկագիր չէ: Մարդկային կյանքն ու գործունեությունը լավագույնս խրատող փիլիսոփայական այս միտքը՝ ուղղված եթե ոչ բոլորին, թեկուզ միայն վանականներին, ընդհակառակը, նպատակային է փորագրվել խաչքարին, որը հավերժ կհիշեցներ երկրային կյանքի նյութական փառքի ունայնությունը երկնային փառքի նկատմամբ: Կարծում ենք նաև, որ Հասան կրոնավորյալի անվարժ քարգործ-փորագրիչ լինելու պատճառով է, որ դժվարանում ենք կարդալ նրա ձեռագիրը:

Առաջնորդանիստ այլ վանքերի նման Դադի վանքը նույնպես ունեցել է վանական համալիրների գործառույթի նվազագույն պահանջները բավարարելու համար նախատեսված շինություններ: Ցավոք, մինչև ԺԲ դարը գոյություն ունեցած կառույցներից տեղում պահպանվել են միայն անորոշ պատերի մնացորդներ, որոնք էլ ի հայտ եկան 2008 թ.՝ Դադի «եկեղեցու» սրահը պեղելիս: Ի դեպ, հնագիտական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է նաև մի կոթող, որին առկա է հետագայում փորագրված գծային խաչ:

Վերոնշյալ խաչքարերից և դամբարանախցից զատ, բարեբախտաբար, կանգուն վիճակում, սակայն վերակառուցումներով մեզ է հասել ԺԲ դարի սկզբին կամ նույնիսկ ավելի վաղ կառուցված բազիլիկ եկեղեցին[9]:

Ինչպես հայտնի է, ԺԲ դարի վերջին և ԺԳ դարի սկզբին հայ և վրաց ժողովուրդների պատմության մեջ հսկայական դերակատարում ունեցան Զաքարյանները, որոնց հետ խնամիական կապի



2008 թ. Դադի «եկեղեցու» պեղումների ժամանակ հայտնաբերված կառույցների մնացորդները և կոթողը

Ի դեպ, փիլիսոփայական այս միտքն այսօր ևս մահկանացուներին ուղղված լավագույն պատգամներից մեկն է:

7 Արձանագրությունը փայլուն վերծանել է Համլետ Պետրոսյանը (**Պետրոսյան Հ.**, Դադի վանքի ծածկագիր արձանագրությունը, «Իրան նամէ», 1998, № 1-3, էջ 38-40: Տե՛ս նաև **Պետրոսյան Հ.**, Խաչքար, Երևան, 2008, էջ 317-319:

8 **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 319:

9 Բազիլիկ եկեղեցու, ինչպես նաև մյուս պաշտամունքային շինությունների կառուցման ժամանակի մասին տե՛ս **Այվազյան Ս.**, Դադի վանքի հոգևոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը, «ՊԲՀ», Երևան, 2006, № 3, էջ 199-218: Ի դեպ, նշված հոդվածում ներկայացված ուսումնասիրությունների մեծ մասը որոշ փոփոխություններով տեղ կգտնի նաև սույն աշխատության մեջ:

մեջ էին Խաչենի իշխանները: Այս հանգամանքը, ինչպես նաև երկրի քաղաքական վիճակը (սելջուկյան իշխանության թուլացումը) հնարավորություն են տալիս Խաչենցիներին վերականգնելու իրենց ինքնուրույնությունը, որն էլ նպաստում է երկրի սոցիալ-տնտեսական ու մշակութային վերելքին: Դաղի վանքը դեռևս Հաթերքի իշխանների հոգևոր կենտրոնն էր, իսկ ԺԳ դարի 50-ական թվականներից վանքին արդեն տիրում էին ծարեցիները (Դոփյանների իշխանական տուն):

ԺԳ դարի սկզբից Դաղի վանքում ծավալվում է շինարարական նշանակալի գործունեություն: Այս շրջանից պահպանված շինարարական արձանագրությունները[10] վկայում են պաշտամունքային նոր շինություններով կառուցապատումը: Մասնավորապես՝ 1214 թ. կառուցվում է Կաթողիկե եկեղեցին, իսկ 1224 թ.՝ ժամատունը (հիմնադրումը՝ ավելի վաղ):

1211-1224 թթ. ստեղծվում է գմբեթավոր փոքր եկեղեցին (թվագրման խնդրին կանդրադառնանք ավելի ուշ), իսկ նույն դարի կեսերին՝ Դաղի «եկեղեցին», փոքր գավիթը, սյունասրահը, կատարվում են վերակառուցումներ, այդ թվում՝ նաև բազիլիկ եկեղեցին:

ԺԳ դարում վերակառուցվում և կառուցվում են նաև աշխարհիկ նշանակության շենքեր. 1211 թ.՝ տաճարը[11] (հիմնադրումը՝ ավելի վաղ), տեր Գրիգորես և տեր Աթանաս եղբայրների կողմից՝ սրահն ու տները[12]:

ԺԳ դարի վերջին կառուցվում է սեղանատունը խոհանոցով[13]:

Կաթողիկե եկեղեցու արևելյան ճակատին առկա է Զարաբերդի Ներսես եպիսկոպոսի 1253 թ. արձանագրությունը[14], որտեղ ասվում է, որ նա Դաղի վանքի հյուրատանը այգի է նվիրել: Այստեղից հետևում է՝ նշյալ թվականին վանքն ուներ նաև հյուրատուն: Վերջինս հետագայում վերակառուցվել է, ավելացվել է երկրորդ հարկ[15]:

Հյուրատան հարավարևմտյան անկյանը կից գտնվում է իշխանական երկհարկանի ապարանքը, որի առաջին հարկում տեղավորված են հնձանը և մառանը[16]:

Շինարարական տարբեր շերտեր ունեցող իշխանական ապարանքն ավելի վաղ է կառուցվել (մինչև 1253 թ.), քան հյուրատունը, որովհետև դրանց կցման հանգույցում հստակ երևում է ապարանքի պատերի անկյունը, որին պարզապես հպվում են հյուրատան պատերը:

1314 թ. Դաղի վանքում զանգակատունն արդեն կառուցված էր, քանի որ այդ թվականին Դոփյանց Վահրամ իշխանի որդի Սարգիսը վանքին զանգ է նվիրում[17]:

Զանգակատունը կառուցվել է՝ կցվելով արդեն գոյություն ունեցող սյունասրահի արևմտյան պատին: Այդ մասին են վկայում տեղում առկա կառուցողական բազմաթիվ փաստերը:

1283 թ. վանքի ծարեցի առաջնորդ տեր Աթանասը[18] կանգնեցնում է մեծարժեք և հոյակերտ երկու խաչքարեր[19], որոնք հետագայում (ըստ երևույթին, ԺԴ դարում) տեղափոխվել են զանգակատան մեջ, որն էլ այս առիթով վերակառուցվել է:

Ժամատան արևմտյան պատին կից կառուցվել են թաղակապ երկու սենյակներ: Սրանցից հարավայինը ձգվում էր դեպի արևմուտք՝ մինչև պարիսպը, որտեղ էլ գտնվում է վանքի՝ կամարակապ բացվածքով գլխավոր դարպասը: Վերջինիս հյուսիսային պատից սկսվում է ԺԲ դարից հետո[20] կառուցված պարիսպը, որը նախ ձգվում է համալիրի հյուսիսային մասով մինչև Դաղի «եկեղեցու» հյուսիսարևելյան անկյունը, ապա թեքվում հարավ-արևելք՝ մինչև Կաթողիկե եկեղեցու արևելյան կողմում գտնվող վանքի երկրորդ՝ փոքր դարպասը: Այստեղից պարիսպը շարունակվում է դեպի հարավ, որի ավարտը քանդված լինելու պատճառով մնում է անորոշության մեջ:

Վանքի արևմտյան կողմում պահպանվել են բնակելի երկու սենյակներ, որոնցից մեկը երկհարկանի է և կցակառուցվել է իշխանական ապարանքին, իսկ մյուսը կանգնած է առանձին: Սրանք հավանաբար ԺԸ դարի կառույցներ են:

Համալիրի հարավարևելյան մասում՝ «զտներ եւ զսրահս» կառույցներից արևելք, եղել են աշխար-

10 **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 204-205: Տե՛ս նաև Դիվան..., էջ 198-199, 210: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 108 (արձ. № 1), 116 (արձ. № 61):

11 Շինարարական արձանագրությունը տե՛ս **Մեսրոպ մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դաղի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 90ա: Դիվան..., էջ 212, № 749: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 116 (արձ. № 58):

12 Շինարարական արձանագրությունը տե՛ս **Հակոբյան Ա.**, **Սիմոնյան Հ.**, Դաղի վանքի նորահայտ արձանագրությունը և Տպելի տեղադրության հարցը, «ՊԲՀ», 1998, № 1-2, էջ 227-232: Հեղինակները շփոթել են արձանագրության մեջ հիշվող Հասան պարոնին Հասան կրոնավորյալի հետ: Այդ մասին տե՛ս **Այվազյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 204, ծանոթ. 15:

13 **Հասրաթյան Մ.**, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան 1992, էջ 56:

14 Դիվան..., էջ 204: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 111-112:

15 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 61:

16 **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 224-225:

17 «Նոր-Դար», 1892, № 15, էջ 21: Տե՛ս նաև «Արարատ», 1896, էջ 42: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 121:

18 Բացառված չէ, որ մինչև տեր Աթանասը Դաղի վանքի առաջնորդ մի կարճ ժամանակով կարող էր եղած լինել նաև նրա եղբայրը՝ տեր Գրիգորեսը: Այս ենթադրությունը հիմնված է այն փաստի վրա, որ «սրահ և տների» շինարարական արձանագրության մեջ սկզբում հիշվում է հոգևորական երկու եղբայրներից տեր Գրիգորեսը, հետո տեր Աթանասը:

19 Խաչքարերի արձանագրությունները տե՛ս Դիվան..., էջ 213: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 120:

20 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 54:

Զանգակատան ներսում գտնվող զույգ խաչքարերը, 1283 թ. (լուս.՝ 2010 թ.)



ԴԱԴԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-րդ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱԴԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ
11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ



ԴԱԴԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՄԻՆՉ ԺԲ (12) ԴԱՐԻ ԿԵՍ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-րդ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱԴԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ
11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ



ԴԱՂԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԺԲ (12) ԴԱՐ, ԺԳ (13) ԴԱՐԻ ՍԿԻԶԲ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ | ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ | ԵՆԹԱԴՐՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-ՐԴ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱՂԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ
11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ



ԴԱՂԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՄԻՆՉ 1211 Թ.

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ | ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ | ԵՆԹԱԴՐՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-ՐԴ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱՂԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ
11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ.ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ



ԴԱԴԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
1214 Թ.

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-րդ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱԴԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ

ԵՆԹԱԳՐՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ



ԴԱԴԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՄԻՆՉ 1224 Թ.

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-րդ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱԴԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ


ՀՅՈՒՍԻՍ
7
18
6
7
1
2
3
4
8
9
10
19
17
21
20
5
22
14
16
15
11
13
12
10 8 6 4 2 0
ԴԱՂԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԺԳ (13) ԴԱՐԻ ԿԵՍԵՐ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
ԵՆԹԱԴՐՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-ՐԴ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱՋԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱՂԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ
11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ


ՀՅՈՒՍԻՍ
8
18
6
7
1
2
3
4
8
9
10
19
17
21
20
5
22
14
16
15
11
13
12
10 8 6 4 2 0
ԴԱՂԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԺԳ (13) ԴԱՐ, ԺԴ (14) ԴԱՐԻ ՍԿԻԶԲ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
ԵՆԹԱԴՐՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-ՐԴ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱՋԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱՂԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ
11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ



ԴԱԴԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԺԴ (14) ԴԱՐ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-ՐԴ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱԴԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍԱՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ
11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ



ԴԱԴԻ ՎԱՆՔ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԺԷ-ԺԸ (17-18) ԴԱՐԵՐ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 ԴԱՄԲԱՐԱՆԱԽՈՒՑ
2 13-ՐԴ ԴԱՐԻՑ ՎԱՂ ԿԱ ՌՈՒՅՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
3 ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
4 ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214թ.
5 ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿ.
6 ԺԱՄԱՏՈՒՆ 1224թ. ՀԻՄՆԱԴՐ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
7 ՍԲ.ԴԱԴԻ ՍՐԲԱՏԵՂԻ
8 ՓՈՔՐ ԳԱՎԻԹ
9 ՍՅՈՒՆԱՍԱՐԱՀ
10 ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ
11 ՏԱՃԱՐ 1211թ. ՀԻՄՆ. ԱՎԵԼԻ ՎԱՂ
12 ՀՆՁԱՆ
13 ՄԱՌԱՆ
14 ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
15 ՍՐԱՀ ԵՎ ՏՆԵՐ
16 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
17 ՏՆՏ. ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
18 ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐ
19 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ
20 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
21 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ (ԲՆԱԿԵԼԻ)
22 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ



հիկ նշանակության (բնակելի խցեր կամ ձիանո՞ց) շենքեր, որոնցից այժմ հողի մակերևույթից վեր նկատվում են պատերի որոշ հատվածներ: 1899 թ. լուսանկարում (տե՛ս էջ 6) նշված հատվածում հստակ երևում է երկայնական մի պատ, որի վրա կան տասից ավելի կամարակապ որմնախորշեր: Այս պատն այժմ ծածկված է հավանաբար վերևից թափված հողով, որն անհրաժեշտ է մաքրել և բացել, իսկ հնարավորության դեպքում՝ վերականգնել փլատակված կառույցները:

Մատնանշված լուսանկարում՝ համալիրի հարավային մասում, երևում են նաև հենապատեր և պարսպապատեր: Դրանց մի մասը վստահաբար ուշ շրջանի է (հավանաբար ԺԹ դարի), որոնցից նույնպես շատ քիչ հատվածներ են պահպանվել:

Այսպիսով՝ ԺԴ դարում վանական համալիրը կազմավորված էր իր գործառական նշանակության գրեթե բոլոր շինություններով, ընդ որում, իրենց տեղադրությամբ հստակ առանձնանում են համալիրի հյուսիսային մասում գտնվող պաշտամունքային կառույցները հարավային մասում գտնվող աշխարհիկ և տնտեսական կառույցներից: Քանիցս վերակառուցված այս բոլոր շինություններն առանց ակնհայտ էական փոփոխությունների քայքայված վիճակով հասել են մինչև մեր օրերը, որոնց կազմավորման ու զարգացման ժամանակագրությունը ներկայացված է հատակագծային սխեմաներով:

ԺԸ դարի վերջին նկատելիորեն թուլացած վանական կյանքը որոշակի աշխուժացում է ապրում ԺԹ դարի ընթացքում՝ Արցախի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո, որը տևում է մինչև Ի դարի սկիզբը՝ խորհրդային կարգերի հաստատումը, երբ վանքը հայտնվում է Խորհրդային Ադրբեջանի կազմում: 1920-ական թվականներից ի վեր՝ մինչև 1990-ական թթ. վերջերը, անխնամ վիճակում գտնվող վանական համալիրը հետզհետե քայքայվում է:

Դաղի վանքի վերականգնման գործընթացը. սկիզբ է դրվում 1997 թ.: Ինչպես հայտնի է, նախքան բուն վերականգնման շինարարական աշխատանքներին անցնելը հուշարձանի գիտական վերականգնման (վերականգնում, մասնակի վերականգնում, ամրակայում, տեղափոխում, հարմարեցում և օգտագործում, մաքրման աշխատանքներ) հիմնական սկզբունքներից է նրա համակողմանի հետազոտությունների, այդ թվում՝ պատմական, ճարտարապետական, ճարտարագիտական և սրանց զուգահեռ պեղման-մաքրման աշխատանքների իրականացումը: Այս ամենից հետո միայն պետք է կազմվի գիտավերականգնման նախագիծ՝ համապատասխան փուլերով: Աշխատանքների հերթականության այս սկզբունքը հստակորեն կա-

րելի է կիրառել ինչպես համեմատաբար փոքր՝ 2-3 կառույցից բաղկացած տեխնիկական բարդություններ չունեցող, այնպես էլ առանձին հուշարձանների վերականգնման դեպքում:

Դաղի վանքի պարագայում հնարավոր չէ ամբողջ համալիրի համար հետևել վերոնշյալ սկզբունքին, և նույնիսկ դա կարող էր համարվել վերականգնման ծրագրի ոչ ճիշտ կազմակերպում: Բացատրությունը հետևյալն է. համալիրի կառույցների ճարտարապետական և ճարտարագիտական հետազոտություններ, մասնավորապես՝ չափագրումներ, կառույցների տեխնիկական ուսումնասիրություններ և եզրակացություններ հնարավոր չէր իրականացնել, քանի որ կառույցների մեծ մասը փլատակների մեջ էր (Դաղի «եկեղեցի», գմբեթավոր փոքր եկեղեցի, համալիրի դարպասները, տաճարից զատ՝ գրեթե բոլոր աշխարհիկ կառույցները): Որպեսզի իրականացվեին նշյալ աշխատանքները, առաջնահերթորեն կամ առնվազն զուգահեռաբար անհրաժեշտ էր լինելու պեղել և մաքրել ամբողջ համալիրի տարածքը, որի տեխնիկական հնարավորությունները չկային, քանի որ

ա. Տարածքի սղության պատճառով պեղումներից հայտնաբերվելիք բեկորները հնարավոր չէր խմբավորված տեղադրել համապատասխան հատվածներում՝ ուսումնասիրելու և հետագայում գործածելու նպատակով:

բ. Պեղումների կատարման և ուսումնասիրման համար անհրաժեշտ կլիներ մեծ ժամանակահատված, որի ընթացքում կարող էին վթարային վիճակում գտնվող որոշ շենքեր փլուզվել, ինչպես 1990-ական թվականների երկրորդ կեսին փուլ եկան հյուրատան երկրորդ հարկի արևելյան սենյակի արևելյան և հարավային պատերը:

գ. Եթե պեղումներ և հետազոտական աշխատանքներ կատարվեին ամբողջ համալիրի տարածքում, ապա հարկավոր էր երկար ժամանակով փակել համալիրի տարածքը և նույնիսկ հյուսիսային կողմով անցնող մեքենայի ճանապարհը: Դա հնարավոր չէր, քանի որ ճանապարհը բանուկ է, իսկ վանք այցելողների հոսքը չպետք է դադարեր:

դ. Մեծածավալ պեղումները և հետազոտական աշխատանքները կպահանջեին մեծ թվով մասնագետներ, նրանց հետ կապված, ինչպես նաև ժամանակավոր ամրակայման լրացուցիչ ծախսեր: Դա 1990-ական թթ. վերջերին հնարավոր չէր՝ չափազանց վատ ճանապարհների, հեռահաղորդակցության և էլէկտրականության բացակայության, կենցաղային վատագույն պայմանների պատճառով:

Հաշվի առնելով առկա բարդությունները՝ որոշվեց վերականգնման ծրագիրն իրագործել փուլերով, ընդ որում, այդ դեպքում արդեն կարելի էր հետևել վերը նշված գիտամեթոդական սկզբունքներին:

Նախատեսվում էր առաջնահերթ ընտրված կառույցի համար կատարել պեղման, մաքրման աշխատանքներն այն ծավալով, որը կբավարարեր նախագծի գիտական հիմնավորմանը, այնուհետև դրան համընթաց՝ չափագրական աշխատանքներ և պատմագիտական հետազոտություններ: Համապատասխան փուլերով մշակել գիտավերականգնման նախագիծը, որից հետո անմիջապես կարելի էր սկսել վերականգնման շինարարական աշխատանքները: Որևէ կառույցի վերականգնմանը զու-

Գմբեթավոր փոքր եկեղեցու արևմտյան և արևելյան ճակատները

գահեռ պետք է ընթանային հաջորդ կամ մի քանի կառույցների հետազոտական ու նախագծային աշխատանքներ և այսպես շարունակ: Առաջնահերթությունը տրվում էր այն կառույցներին, որոնք առավել վտանգված էին և միևնույն ժամանակ ունեին պատմական ու մշակութային համեմատաբար ավելի մեծ արժեք: Ելնելով այս նկատառումներից՝ նախապատվությունը տրվեց համալիրի հյուսիսային հատվածի պաշտամունքային կառույցների վերականգնմանը՝ առանց բացառելու ի հայտ եկող որևէ հրատապ աշխատանք ցանկացած մյուս կառույցների համար:

Գմբեթավոր փոքր եկեղեցու վերականգնումը. նպատակահարմար եղավ վերականգնումների գործընթացում առաջնահերթությունը տալ գմբեթավոր փոքր եկեղեցուն, որը գտնվում է տաճարի հյուսիսային պատից մոտ 1,5 մ հեռու:

Կառույցն արևմուտքից և արևելքից մեծ ճաքեր ուներ և կարծես երկու մասի էր բաժանված:

Արևմտյան ճակատի վերին մասում ճաքի բացվածքը հասնում էր 15 սմ-ի[21], և ցանկացած պահի եկեղեցին կարող էր քանդվել: Ահա սա էր պատճառը, որ առաջնահերթորեն պետք էր ամրացնել և պահպանել հենց այս կառույցը:

Խնդրի լուծումը սկսեցինք եկեղեցու պարագծով կուտակված հողի պեղման-մաքրման աշխատանքներից, որի ընթացքում արևմտյան ճակատի դիմաց բացվեցին տապանաքարեր: Այնուհետև կատարվեցին չափագրություններ, տեխնիկական վիճակի և պատմական տեղեկությունների ուսումնասիրություններ:

Հորինվածքով միջնադարում մեծ տարածում գտած մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճի տիպի կառույց է, որն արևելքում՝ խորանի աջ և ձախ կողմերում, ունի ավանդատներ: Արտաքին չափերն են՝ 6.45 x 7.93 մ: Կառուցված է կոպտատաշ տեղական ամուր քարատեսակներով (բազալտ, գլաքար, կրաքար) և աղյուսով:

Եկեղեցու արևմտյան ճակատի՝ ԺԲ դարի խաչքարերը և դրանց արձանագրությունները, վանքին առնչվող պատմական տվյալները, հարակից շինությունների կառուցապատման և դրա իրականացման տեխնիկայի վերլուծությունն օգնեցին ճշտելու ստեղծման մոտավոր թվականը[22]: Եկեղեցին կառուցվել է ԺԳ դարում[23], սակայն ճշգրիտ թվականը հայտնի չէ:

Նախքան կառուցումը տեղանքն ունեցել է բավական մեծ թեքություն և 1211 թ. տաճարը վերակառուցելիս (տե՛ս համապատասխան տեղում) ուղղվել է (տեղանքի հարավային կողմից որպես հենապատ



21 Տե՛ս էջ 19-ի լուսանկարները:

22 Այս խնդրին մասնակի կերպով անդրադարձել ենք նաև մեր հոդվածում (**Այվազյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 205-206):

23 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 52:


ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՅՈՒՍԻՍ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀՅՈՒՍԻՍ
ԿՏՐՎԱԾՔ ԴԵՊՈՒՄ ԱՐԵՎԵԼՔ
ԿՏՐՎԱԾՔ ԴԵՊՈՒ ԱՐԵՎՄՏՔՍ



Կտրվածք դեպի հարավ

է ծառայում տաճարի հյուսիսային պատը, որը նախքան վերակառուցումն ավելի ցածր է եղել), դրա շնորհիվ էլ հնարավոր է դարձել եկեղեցու կառուցումը տաճարից մոտ 1,5 մ հեռու: Սրանից հետևում է, որ գմբեթավոր եկեղեցին կարող էր հիմնված լինել 1211 թ. հետո, իսկ թե հատկապես ո՞ր թվականին, դա պարզում է հենց եկեղեցու ուսումնասիրությունը:

Գմբեթավոր փոքր եկեղեցու կառուցման ժամանակ պատերի մեջ՝ հատկապես արևմտյան ճակատին, ագուցվել են գեղաքանդակ և մեծ մասամբ արձանագիր խաչքարեր: Վերջիններիցս յոթը թվակիր են և վերաբերում են 1172, 1173, 1179, 1181 (2 միավոր), 1182, 1190 թթ.[24]: Սրանք մինչև եկեղեցու պատերի մեջ տեղադրվելը որպես գերեզմանական հուշարձաններ կանգնեցված են եղել ի հիշատակ իշխանական ընտանիքի անդամների և լրացուցիչ վկայում են, որ 1190 թ. եկեղեցին դեռևս կառուցված չէր[25]:

Այսուհանդերձ, անորոշ է մնում, թե որտեղից և ինչու են խաչքարերը տեղափոխվել: Դեռևս 1997-1998 թթ. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում՝ անմիջապես ճակատի մոտ հայտնաբերված տապանաքարերն ու խաչքարերը փաստեցին տեղում գերեզմանոցի գոյության մասին, իսկ 2008 թ. նույն հատվածում կատարված հետախուզական պեղումների (դեռ բավական անելիք կա) ժամանակ բացված դիաթաղումները հավելյալ հաստատեցին գերեզմանոցի գոյությունը, որը, ամենայն հավանականությամբ, նախքան Կաթողիկե եկեղեցու կառուցումը տարածված է եղել նաև վերջինիս տեղում: Գտնում ենք, որ հենց ԺԳ դարի սկզբին էլ վանքում ծավալված շինարարական բուռն գործունեության ընթացքում, երբ անհրաժեշտ էր կառուցել Կաթողիկե եկեղեցին, նրա տարածքում գտնվող խաչքարերն ի մի են բերվել և հավաքվել գմբեթավոր փոքր եկեղեցու որմերում: Հարկ է նկատել, որ այդ տարիներին ժամատունը, որը նաև տապանատուն է, որպես այդպիսին դեռևս կառուցված չէր, հետևաբար խաչքարերն էլ չէին կարող այնտեղ հանգրվանել, ինչպես պատշաճ կլիներ իշխանական տան խաչքարերին: Սա է պատճառը, որ մինչև 1224 թ. ժամատան կառուցումը կամ վերակառուցումը (տե՛ս համապատասխան տեղում) խաչքարերն ամփոփվել են գմբեթավոր փոքր եկեղեցում: Հնարավոր է, որ հանգուցյալների շիրիմները նույնպես վերաթաղվել են, և այս գողտրիկ եկեղեցին կառուցվել է որպես մատուռ-դամբարան: Իհարկե, վանքի տարածքում կան ևս երեք խաչքարեր, որոնք այդ ժամանակ չեն ագուցվել եկեղեցու որմերում: Դրանք են կրոնավորյալ Հասան Վախտանգյանի՝ 1182 թ. կանգնեցրած հայտնի խաչքարը (մահարձան չէ, այլ խորհրդամատույց կոթող, ուստի և կարող էր չգտնվել ժամատան մեջ), նրա կնոջ՝ Մամա թագուհու՝ 1182 թ.[26] կանգնեցրած խաչքարը (մահարձան չէ և այժմ գոյություն չունի), եղբոր՝ տեր Գրիգորեսի՝ 1190 թ.[27] կանգնեցրած խաչքարը՝ ի հիշատակ մոր՝ Շուշիկի, որը թերևս ի սկզբանե Կաթողիկեի տարածքում չի եղել:

Ամփոփելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ գմբեթավոր փոքր եկեղեցին կարող էր կառուցվել 1211-1224 թթ. ընկած ժամանակահատվածում:

Եկեղեցին յուրահատուկ է ոչ միայն որմերում առատորեն ագուցված գեղաքանդակ խաչքարերով, այլև կառուցողական և ճարտարապետական առանձնահատկություններով: Մասնավորապես մեծ

24 **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 115, արձ. № 43-46, 51, 56-57:

25 Սրանով հերքվում է Շ. Սկրտչյանի հայտնած այն կարծիքը, որ եկեղեցին 1182 թ. արդեն կառուցված էր (**Սկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան 1985, էջ 45):

26 Դիվան…, էջ 215, արձ. № 762: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 120, արձ. N 81:

27 Դիվան…, էջ 213, արձ. № 752: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 117, արձ. N 71:





կիրառություն ունի աղյուսը, որով էլ կառուցված են թմբուկը, թաղերը, ավանդատների՝ խորանին հարող պատերը և մուտքերի, ինչպես նաև պատուհանների ներսի կամարները: Թմբուկի շարվածքը յուրահատուկ է: Հիմքը մեկ շարքով սրբատաշ քար է, որի վրա բարձրանում է աղյուսի դասական հորիզոնական շարվածքը մինչև առանցքային տեղադրված չորս պատուհանների պսակների մակարդակը, որոնք սրբատաշ քարով են: Այնուհետև աղյուսի եղնաձև շարվածքով մի գոտի է ձգվում, որի նմանն էլ առկա է թմբուկի վերին քիվից 15 սմ ցած: Այս երկու գոտիների միջև (շուրջ 50 սմ) կրկնվում է աղյուսի դասական հորիզոնական շարվածքը, որի մեջ մեդալիոնների նման հորիզոնական ուղղությամբ միմյանցից 50-55 սմ հեռավորությամբ զետեղված են 20 x 30 սմ չափերով ուղղանկյուն սրբատաշ քարեր:

Թմբուկի քիվը կազմված է երկու կտոր սրբատաշ քարից: Առաջինը շատ փոքր՝ 3 սմ ելուստով պարզ քիվ է, որի վրա ուղղանկյուն հատվածքով և ևս 3 սմ ելուստով երկրորդ քարաշարն է: Աղյուսի տարբեր շարվածքները և նրանց հետ ներդաշնակ զուգորդվող սրբատաշ քարաշարերը ստեղծում են գորգի նմանվող պատկեր: Չնայած եկեղեցին ունի Ժ դարից սկսած և արդեն ԺԳ դարում քաջ հայտնի ու ավանդական դարձած ծավալահատակագծային «տիպային» հորինվածք, այնուամենայնիվ, թմբուկի ծավալը սակավադեպ լուծում ունի: Նրա

Գմբեթավոր փոքր եկեղեցու տանիքին բացված կղմինդրածածկը



Նույնաոճ քիվեր ունեցող հուշարձաններ. ա. մատուռ Դադիվանքում, բ, դ. եկեղեցի և սյունասրահ Տրտուի Սբ. Աստվածածնի վանքում և գ. եկեղեցի Մեծարանց վանքում

տրամագիծը, հիմքից սկսած մինչև քիվատակ, աստիճանաբար նեղանում է: Նման (սակայն համեմատաբար քիչ թեքությամբ) լուծում ունի Արցախի Պողոսագոմեր գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին:

Ծածկերն իրականացված են եղել կղմինդրով: Չափագրության ընթացքում տանիքում 1998 թ.՝ հետախուզական մաքրումների ժամանակ (ամբողջությամբ չմաքրվեց, այլապես կմեծանար անձրևաջրերի ներթափանցման վտանգը, այն նախատեսվեց վերականգնման ընթացքում), հողաշերտի տակից բացվեց կղմինդրե նախնական տանիքը, որը շատ կարևոր վկայություն է ԺԲ-ԺԳ դարերի Արցախի կառուցողական արվեստի մասին: Այստեղ պահպանվել է տանիքի կառուցվածքը շինարարական շերտերով. միակոր թաղի վրա կատարվել է կրաբետոնե լիցք: Այնուհետև ճակտոնի թեքություններին համապատասխանող հարթությունները ստացել են որոշ մասերում երկշերտ, իսկ որոշներում էլ՝ միաշերտ աղյուսի շարվածքով: 4-5 սմ հաստությամբ անմշակ սալաքարերով ճշգրտել են ճակտոնների թեքությունները, որը ստանալուց հետո պատրաստել են կղմինդրե տանիքը:

Քիվերն ունեն հետևյալ լուծումը. տեղադրվել են 10-15 սմ կողմերով անկանոն ուղղանկյուն կտրվածքով, 40-50 սմ երկարությամբ քարեր, որոնք դուրս են գալիս ճակատային հարթությունից և ստեղծում քիվի ելուստը, որոնց վրա տեղադրվել են կիսամշակ բնականից հարթ սալաքարեր: Դուրս եկած այս քարերի և սալաքարերի համադրությամբ էլ կազմվել է քիվերի կառուցվածքը: Նման հորինվածքը նման է հենակահեծանային համակարգի, որի անհրաժեշտությունը, կարծում ենք, առաջացել է Արցախում մշակվող բարձրորակ քարատեսակների սակավությամբ և դրանք հայթայթելու դժվարություններով: Քիվերի հորինվածքային նման լուծումը կիրառված է ոչ միայն Դադի վանքում, այլև վանքի շրջակայքում գտնվող մատուռներում և ողջ երկրամասի՝ ԺԲ-ԺԳ դարերի բազմաթիվ այլ հու-

շարձաններում (Տրտուի Սբ. Աստվածածին վանք, Մեծարանց Սբ. Հակոբա վանք և այլն):

Հայտնաբերված կղմինդրածածկի որոշ հատվածներ պահպանվել էին նախնական տեղում, մի քանիսն էլ տեղաշարժված էին: Չափագրելուց հետո մշակվեց ծածկի վերակազմության նախագիծը (տե՛ս էջ 23): Այն կառուցված էր երկու տիպի՝ ա. հարթ սեղանաձև՝ վերևից ներքև նեղացող, կողավոր և բ. ուռուցիկ՝ կիսագլանի նմանվող վերևից ներքև լայնացող, վերևում՝ ելուստավոր վրաղիր կղմինդրներից: Ծածկի և գմբեթատակ քառակուսու հատման գծերով ջրահեռացումը կազմակերպելու համար գործածվել են վրաղիր կղմինդրներ, որոնք տեղադրվել են շուռ տված դիրքով՝ դրանով ստեղծելով ջրատար առվակներ: Կղմինդրները կառուցվածքով և չափերով նման են վաղ միջնադարի, մասնավորապես՝ Աշտարակի Կարմրավոր եկեղեցու կղմինդրներին: Նկատելի է, որ դրանց պատրաստման մեջ առկա են կառուցվածքային թերություններ, որոնց թերևս ժամանակին՝ շինարարության ընթացքում, էական նշանակություն չի տրվել: Սեղանաձև կղմինդրի երկարությունը 42,5 սմ է, լայնությունը վերևի մասում՝ 28,5 սմ, իսկ ներքևում՝ 23,7 սմ: Կողի բարձրությունը 4,2 սմ է, հաստությունը՝ 1,8-2 սմ: Նեղ մասի տակից՝ անկյուններում, առկա է 3 սմ երկարությամբ թեք կտրվածք՝ իր նախորդի մեջ հեշտությամբ տեղավորելու համար: Այս կառուցվածքով շարելու ընթացքում սեղանաձև կղմինդրների օգտակար երկարությունը ստացվում է 42,5-3=39,5 սմ, այսինքն՝ սեղանաձև կղմինդրների կարանները հաջորդում են միմյանց 39,5 սմ պարբերությամբ: Վրաղիր կղմինդրի չափերն են՝ երկարությունը՝ 41,5 սմ, լայնությունը՝ վերևում՝ 13,5 սմ, ներքևում՝ 17,2 սմ, հաստությունը՝ 1,8-2 սմ: Վերևում տեղադրված ելուստը, որ պետք է հենարան դառնա հաջորդ վրաղիրի համար, եզրից հեռացված է 6,5 սմ-ով: Շարելու ընթացքում վրաղիրի օգտակար երկարությունը ստացվում է 41,5-6,5=35 սմ, այսինքն՝ վրաղիրի կարանները հաջորդում են միմյանց 35 սմ պարբերությամբ: Ստացվում է, որ ծածկը կառուցելիս վրաղիրի կարանները հաջորդում են միմյանց 4,5 սմ (39,5-35=4,5 սմ) պակաս պարբերությամբ, քան սեղանաձև կղմինդրների կարանները: Սրանից հետևում է, որ վրաղիր և սեղանաձև կղմինդրների կարաններն իրար չեն համընկնում, այլ շարքերի քանակի ավելացմանը համընթաց՝ միմյանցից հեռանում են և նորից կարող են համընկնել միայն մոտ 9 (39,5:4,5=8,78) շարքից հետո (տե՛ս նույն գծագիրը):

Մի հանգամանք ևս, վրաղիր կղմինդրները նեղ մասում՝ ելուստից հետո, վերջանում են ոչ թե լեզվակի տեսքով (ընդունված դասական տարբերակ), այլ ամբողջական կիսակլոր են: Այդ պատճառով վրաղիրը որոշ շարքերում մինչև վերջ չի նստում սեղանաձև կղմինդրին, և երկուսի մեջ ամբողջ երկարությամբ առաջանում են ձգված եռանկյունաձև ու ուղղանկյուն ճեղքեր, որտեղ կառուցումից հետո երևացել է կրային շաղախը: Այս հանգամանքը նույնպես հետևանք է կարանների անհամապատասխանության, որովհետև, եթե վրաղիրները պատրաստվեին դասական տարբերակով, միևնույն է, դրանք սեղանաձևին 3-4 շարքերում միայն ամբողջապես կնստեին (տե՛ս նույն գծագիրը):

Նման անհամապատասխանությունները կամ, եթե կարելի է ասել, թերությունները ժամանակին անտեսվել են, որովհետև, չնայած գեղագիտական տեսքի կորուստներին, դա հնարավորություն է տվել պատրաստելու վրաղիրի ավելի պարզ կաղապար

Պեղումներից հետո Հանդաբերդի վանքի եկեղեցուն կից հյուսիսակողմյան մատուռի տանիքին բացված կղմինդրածածկի հետքերը

(լեզվակի դեպքում այն կբարդանար): Միևնույն ժամանակ պակասեցվել է կարանների ճշգրիտ համընկնման համար վարպետի հմտության և ուշադրության անհրաժեշտությունը, որով ավելի դյուրին ու քիչ ծախսատար է դարձել ծածկի կառուցման գործընթացը:

Տանիքի կառուցողական շերտերի մեջ հետաքրքիր և յուրօրինակ է աղյուսի կիրառումը: Այն թերևս կատարված է տանիքի ջրամեկուսացումն առավել ապահովելու նկատառումով: Նման երևույթի

հանդիպում ենք Հանդաբերդի (ԼՂՀ, Քարվաճառի շրջան, Լև գետի աջ ափին) հարևանությամբ գտնվող վանքի եկեղեցուն կից մատուռների (ԺԳ դար) ծածկերի կառուցվածքում: Այստեղ չեն պահպանվել տանիքի կղմինդրները, սակայն պահպանված շաղախի վրա հստակ ընդգծված են կղմինդրների շարքերը և նույնիսկ չափերը:

Կղմինդրյա տանիքի տակ մոտ 15 սմ հաստությամբ մի շերտ է՝ բարձրորակ կրաշաղախի մեջ 2-3 շերտով իրար վրա տեղադրված կոտրատված կղմինդրներ, որոնք նախկինում եղել են ինչ-որ կառույցի տանիքի ծածկանյութ, իսկ հետագայում, ըստ երևույթին, դրա ավերումից հետո հնարամտորեն օգտագործվել են մատուռների ծածկն իրականացնելիս (կոտրատված կղմինդրները կառուցվածքով և չափերով միատեսակ չեն: Կան այնպիսիները, որոնց ուրիշ հուշարձաններում դեռ չենք հանդիպել: Դրանցից մեկը ձևով կրկնում է կիսաշրջան գլանիկավոր (վալիկավոր) քարե ծածկասալերին և կարող է լինել վերջիններիս կղմինդրյա նախօրինակը, որի կիրառումը հասել է մինչև ԺԳ դարը): Դաղի վանքի աղյուսի փոխարեն Հանդաբերդում գործածվել է կղմինդր: Ըստ էության, այս շինանյութերը՝ և՛ աղյուսը, և՛ կղմինդրը, թրծված կավ են: Կարծում ենք, որ երկու դեպքում էլ դրանք ջրամեկուսիչ շերտի դեր են կատարել:

Գրավոր աղբյուրների և տեղում կատարված ճարտարապետական, կառուցողական ուսումնասիրություններից և չափագրումից հետո որոշվեց իրականացնել գմբեթավոր փոքր եկեղեցու ամբողջական վերականգնում, քանի որ առկա էին գիտամեթոդական բոլոր հիմնավորումները.

—հնարավոր էր պարզել կառուցման մոտավոր թվականը.

—արժևորվում է կառույցի մշակութային, կառուցողական և պատմական նշանակությունը.

—պահպանվել էին ելակետային բոլոր տվյալները՝ վերստեղծելու նախնական տեսքը.

—առկա էին վերականգնումն իրագործելու տեխնիկական հնարավորությունները.

—վերականգնումից հետո եկեղեցին կարող էր ընդգրկվել համալիրի որևէ գործառույթում նույնիսկ նախնական նշանակությամբ:

1998 թ. կազմվեց վերականգնման նախագիծը (տե՛ս էջ 20-23), որի համաձայն՝ քանդում-վերաշարումով և նոր քարերի ավելացումով ամբողջացվում են եկեղեցու պատերը:

Ճակտոնների հորինվածքային լուծումը՝ կենտրոնական երկթեք և անկյունային միաթեք ծածկերով, վերստեղծվում է արևմտյան ու արևելյան ճակատներում առկա ճակտոնների մնացորդներով և թմբուկի վրա երկթեք ճակտոնների պահպանված կրաշաղախի հետքերով: Գմբեթի ծածկի ձևը (եզրագիծը) և բարձրությունը որոշվել են՝ հաշվի առնելով դեռ վաղ միջնադարից մշակված կղմինդրյա գմբեթածածկերի տարբերակների բազմազանությունը և ԺԳ դարի գմբեթների համաչափությունները:

Լանջերի կղմինդրածածկը նախատեսվում է համապատասխան ճակտոնների ուրվագծերով և կառուցողական արվեստի նախնական հորինվածքով (գծ. տե՛ս էջ 23): Այստեղ շատ կարևոր էր պահպանել ծածկի կառուցողական շերտերը և քիվային հանգույցների հորինվածքը, որ յուրահատուկ է Արցախի ճարտարապետական դպրոցին:

Եկեղեցու հատակն ի սկզբանե հարթեցված է եղել կրաշաղախով, սակայն նախատեսվեց քարե սալապատում՝ հաշվի առնելով եկեղեցու շահագործման մերօրյա խնդիրները:

Կառույցի ամրությունը և երկարակեցությունն ապահովելու նպատակով արևմտյան ճակտոնի քիվերի ետնամասից նախատեսվեց անցկացնել երկաթբետոնե կապեր (նախագծի կոնստրուկտորներ՝ Կառլեն Ղահրամանյան, Սերգեյ Նալբանդյան): Այս հատվածում մետաղական կառուցատարրի (կոնստրուկցիայի) կիրառումն անհրաժեշտ էր, քանի որ, ինչպես վերը նշվեց, հուշարձանի ամենավնասված հատվածն է և փաստորեն ապահովում է երկու իրարից անջատված մասերի կապը:

Վերականգնման նախագիծը հաստատվեց ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության գիտամեթոդական խորհրդի կողմից (26.08.1998 թ., № 01):

1998 թ. սեպտեմբերին սկսվեցին եկեղեցու վերականգնման աշխատանքները[28]: Շինարարության պատասխանատուն էր Արմեն Մնացականյանը, որը ղեկավարել էր նաև տարածքի մաքրման աշխատանքները:

Վերականգնումը սկսվեց արևմտյան ամենավնասված ճակատից: Եկեղեցու արևմտյան հատվածի տանիքից մաքրվեցին խոտածածկույթը և դարերով կուտակված հողը: Բացվեց մշակութային և կառուցողական մեծ արժեք ներկայացնող 80 %-ով քայքայված կղմինդրե տանիքը: Ըստ նախագծի՝ համարակալվեցին և քանդվեցին խարխլված քարերը՝ հետագայում վերաշարելու համար:

Մինչև տարեվերջ ավարտվեցին արևմտյան ճակատի վերականգնման հիմնական աշխատանքները. վերաշարվեցին համարակալված քարերը, վերականգնվեց արևմտյան պատուհանը, նոր քարերով լրացվեցին ճակատի բացակայող հատվածները: Ըստ կոնստրուկտորական նախագծի՝ իրականացվեց երկաթբետոնե գոտու այն մասը, որը գտնվում էր ճակատի վերին՝ ամենավնասված հատվածում:

Քարտաշ վարպետն էր Սարգիս Ցականյանը: Աշխատանքները կատարվում էին նույն շինանյու-

28 Դաղի վանքի վերականգնման ծրագրի այս մասի մեկենասներն էին արքեպիսկոպոսներ Մեսրոպ Աշճյանը և Պարգև Մարտիրոսյանը, Շահեն և Մարթա Հարությունյանները, Քարին և Գուստավ ամուսինները, Ջոն Վարդանը:

թերով, ինչ նախնականն էր. կոպտատաշ և սրբատաշ մասերում՝ համապատասխան քարերով, աղյուսե հատվածները՝ աղյուսով: Միայն չհաջողվեց ստանալ այնպիսի որակի կրաշաղախ, ինչպիսին նախկինում էր: Այս բացը մեր օրերում առկա է գրեթե բոլոր վերականգնվող հուշարձաններում, իսկ խնդրի լուծումն ընդհանուր է և արդիական: Այստեղ շատ կարևոր է գտնել կրաշաղախի մեջ հավելյալ լցանյութերի տեսակը և նրանց հարաբերակցությունը կրազանգվածի հետ, որը պետք է ապահովի կրաշաղախի սկզբնական արագ ամրացումը: Ներկայումս դա կատարվում է գլխավորապես ցեմենտի և հազվադեպ գիպսի լցանյութերով:

1999 թ. վերականգնման աշխատանքները վերսկսվում են միայն ամռանը մի շարք դժվարությունների պատճառով. վատթարագույն վիճակում էին վանք հասնելու ճանապարհները, տարածաշրջանում չկային կապի միջոցներ և հոսանք, վերականգնման համար նյութական միջոցները նվազագույնն էին, անգամ սնունդ հայթայթելը դժվար էր: Համենայն դեպս, ըստ նախագծի՝ այդ տարի քանդվեցին և վերաշարվեցին արևմտյան աղյուսե թաղը և առագաստը, հարավային թաղի վնասված մասերը, եկեղեցու հարավային, արևելյան և հյուսիսային ճակատների խարխլված մասերը նախապես համարակալելուց հետո, ինչպես նաև նոր քարերով լրացվեցին պատերի բացակայող կոպտատաշ հատվածները: Գործածվում էին նույն շինանյութերը, ինչ նախորդ տարի:

2000 թ. աշխատանքները շարունակվեցին: Նախագծի համաձայն՝ ծածկերը պետք է կառուցվեին պահպանված նախնական կղմինդրների կրկնօրինակմամբ: Դրանք պատրաստվեցին Երևանում: Թմբուկի վերին վնասված հատվածները նորոգելուց հետո կառուցվեց վեղարի կղմինդրածածկը: Վերականգնվեց նաև հարավային ճակատի կղմինդրե ծածկը: Ներսում հեռացվեց հին սվաղի քայքայված շերտը, և խորանի հատվածում կատարվեցին կիր-ավազե սվաղման աշխատանքներ:

Գմբեթավոր փոքր եկեղեցու հյուսիսային կողմում գտնվող սյունասրահի սյուները որոշ մասերում քայքայված էին, քարերը՝ թափված, միաժամանակ տանիքի հողը բավական բեռ էր վնասված սյուների համար: Այդ պատճառով անհրաժեշտ էր շեղվել վերականգնման ծրագրից և սյունասրահի կայունությունն ապահովելու համար բեռնաթափել վերջինիս ծածկը՝ հեռացնելով հողաշերտը, միաժամանակ ամրացնել վնասված սյուները: Վերջիններիս ամրացումն արվեց վերականգնման սկզբունքներին համապատասխան: Կատարվեցին քանդման-վերաշարման աշխատանքներ և բացակայող մասերի լրացումներ: Այսքանով վերականգնվեց սյուների նախնական տեսքը՝ ապահովելով նրանց կայունությունը:

Սյունասրահը նախքան վերականգնումը և 2000 թ. ընթացքում կատարված աշխատանքներից հետո

Նյութական և տեխնիկական դժվարությունների պատճառով վերականգնողական աշխատանքները ժամանակավորապես ընդհատվեցին: Տարվա շինարարական աշխատանքների քարտաշ վարպետն էր Մարտիրոս Չալումյանը (ի դեպ, նա Դաղի վանքում մինչ այժմ գործող վարպետներից լավագույնն էր, որը, ցավոք, շատ կարճ ժամանակ աշխատեց):

Համալիրի վերականգնման շինարարական աշխատանքները 2001 թ. ընդհանրապես դադարեցված էին:

Գմբեթավոր եկեղեցու վերականգնումը շարունակվեց միայն 2006 թ. ապրիլից (վարպետն էր 2004 թ.-ից համալիրում աշխատող Վազգեն Ղուկասյանը):

2005 թ. հոկտեմբերին Երևանից Դաղի վանք էր փոխադրվել կղմինդրների երկրորդ խմբաքանակը: Նախնական նմուշների մերօրյա վերարտադրության բարդության և այս ոլորտում փորձառության պակասի խնդրի հետ կապված՝ արդյունքն այնքան էլ գոհացուցիչ չէր: Սրանով հանդերձ՝ ավելի լավ էր եկեղեցին ծածկել այդ կղմինդրով, քան օգտագոր-



Գմբեթավոր փոքր եկեղեցին արևմուտքից և արևելքից 2007 թ. վերականգնման աշխատանքներից հետո

ծել ժամանակակից գործարանային արտադրության կղմինդր: Նույնիսկ ոչ բավական ամուր այս կղմինդրն ապահովելու էր ոչ միայն եկեղեցու նախնական տեսքի հավաստիությունը, այլև առնվազն մեկ տասնամյակ պահպանելու էր հուշարձանը քայքայումից: Հետագայում, երբ հնարավորություն լիներ պատրաստելու լավորակ կղմինդր, կարելի էր այն փոխել:

2007 թ. գարնանը, բացի աղոթասրահի սալապատումից, ավարտվեցին գմբեթավոր եկեղեցու վերականգնման հիմնական աշխատանքները:

2002-2011 թթ. շինարարական աշխատանքների աշխղեկն էր Վոլոդյա Հարությունյանը:

Կաթողիկե եկեղեցու վերականգնումը. համալիրի վերականգնման ծրագրի առաջին փուլի մեջ մտնող հաջորդ կառույցը Կաթողիկե եկեղեցին էր: Ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի ջանքերով վերականգնման մեկենասությունը ստանձնել էր նյույորքաբնակ Էդիլ Հովնանյանը: Կազմակերպչական որոշակի հարցերում աջակցություն ցույց տվեց Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Հուշարձանի վերականգնման համար անհրաժեշտ բազմակողմանի ուսումնասիրությունները և նախագծային աշխատանքները սկսվեցին 2001 թ. ամռանը և ավարտվեցին դեկտեմբերին: Չափագրմանը մասնակցում էին նաև ճարտարապետներ Հովհաննես Ջանշյանը և Սարգիս Խարազյանը: Նախագծի կոնստրուկտորներն էին Կառլեն Ղահրամանյանը և Սերգեյ Նալբանդյանը:

Մշակութային և բազմաբնույթ այլ արժեքներով համալիրի զարդը համարվող Կաթողիկե եկեղեցին 1214 թ. կառուցել է Վերին Խաչենի Հաթերքի ճյուղի իշխանաց իշխան, ինչպես նաև թագավորազն (հիշվում է շինարարական արձանագրության մեջ) Հասան կրոնավորյալի որդու՝ Վախթանգի կինը՝ Արզու Խաթունը: Շինարարական արձանագրությունը փորագրված է եկեղեցու հարավային ճակատին[29]:

Արզու Խաթունը Տփխիսի ամիրա և Մահկանաբերդի տեր Քրդի դուստրն էր, իսկ պետական ու քաղաքական հայտնի գործիչներ Իվանե և Զաքարե Զաքարյանները նրա հորաքրոջ որդիներն էին: Մատենագրական և վիմագրական աղբյուրներից գիտական աշխարհին քաջ հայտնի այս իշխանուհին ժամանակին մեծ դերակատարում է ունեցել հայ մշակութային կյանքում:

Եկեղեցին կառուցվել է հյուսիսային խմբի՝ պաշտամունքային կառույցների արևելյան ծայրում: Այն իր հյուսիսարևմտյան անկյունով կից է բազիլիկ եկեղեցուն: Ժամանակին տեղանքի թեքությունն էր հավանաբար պատճառը, որ հնարավո-

29 **Քարխուտարեանց Մ.**, նշվ.աշխ., էջ 204-205: Տե՛ս նաև Դիվան..., էջ 198-199: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 108:







Կաթողիկե եկեղեցին հարավ-արևմուտքից և հյուսիսային ճակատի կենտրոնական հատվածը

Կաթողիկե և բազիլիկ եկեղեցիների կցման անկյունը, հատված Կաթողիկեի մուտքի վերնամասից

րինս դեպի հյուսիս տեղադրվելով՝ Կաթողիկեն կցվել է բազիլիկին, քանի որ այդ ժամանակ դեռ չկային տեր Գրիգորեսի և տեր Աթանասի՝ ԺԳ դարի երկրորդ կեսին կառուցած «զտներ եւ զսրահս»-ը, որոնք Կաթողիկեի հարթակի համար հարավային կողմից ծառայում են որպես հենապատ: Այն, որ Կաթողիկեն հիմնվել է բազիլիկ եկեղեցուց հետո՝ կցակառուցվելով նրան, ակնհայտ երևում է բազիլիկի արևելյան և Կաթողիկեի հյուսիսային պատերի հատման անկյան ուսումնասիրությունից.

ա. Կաթողիկեի հյուսիսային պատն ուղղակի հպվում է բազիլիկին, և վերջին քարերն անկյունաքարեր չեն:

բ. Հուշարձանի բոլոր ճակատներում դեկորատիվ հարդարանքի հորինվածքային հիմնական տարրն է որմնակամարաշարը: Այն կազմված է թվով հինգ՝ կենտրոնական բարձր և դրա երկու կողմերում ավելի ցածր զույգ որմնակամարներից: Հյուսիսային ճակատում այս օրինաչափությունը խախտված է, և սրա արևմտյան հատվածում՝ բազիլիկին հարող մասում, վերջին որմնակամարը բացակայում է: Իսկ դա հետևանք է, որ հյուսիսային ճակատի արևմտյան կեսը բազիլիկին կցելու պատճառով ավելի կարճ է ստացվել, քան արևելյան կեսը, և այստեղ որմնակամար կառուցելու դեպքում այն իրեն սիմետրիկ արևելյան որմնակամարից



Կաթողիկե եկեղեցու վերականգնման էսքիզային նախագիծը. հատակագծեր

կլիներ փոքր և նեղ, հետևաբար դրա նկատմամբ անհամաչափ:

գ. Բացի նշվածներից՝ Կաթողիկեի կցակառուցման ժամանակ բազիլիկի արևելյան պատուհանի ներքևի մի փոքր մասը մնացել է Կաթողիկեի հյուսիսարևմտյան ավանդատան ծածկի հետևում:

դ. Եվս երկու փաստարկ. Կաթողիկեի արևմտյան ճակատի գետնախարիսխներն ընդհատվում են՝ հանդիպելով բազիլիկի հարավային պատի որմնասյանը, իսկ նույն ճակատի դեկորատիվ կամարաշարը չի շարունակվում՝ դիպչելով բազիլիկի պատին (տե՛ս էջ 29-ի վերջին լուսանկարը):

Եկեղեցու հորինվածքը լայն տարածում ուներ ԺԳ դարի հայկական ճարտարապետության մեջ. արտաքինից ուղղանկյուն, ներքուստ խաչաձև, իսկ անկյուններում երկհարկ ավանդատներով գմբեթավոր կառույց է (մասնավորապես՝ Արցախում նման հորինվածք ունի Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին): Կաթողիկեն, բացի արևմտյան կողմից, մուտք է ունեցել նաև հյուսիսից: Կառուցված է հիմնականում բաց գույնի դեղնակարմրավուն սրբատաշ կրաքարով: Գործածված է նաև քիչ քանակությամբ ավազաքար (հարավարևելյան գետնախարիսխը և այլն): Սա համալիրի՝ ամբող-



Կաթողիկե եկեղեցու վերականգնման էսքիզային նախագիծը. ճակատներ



Կաթողիկե եկեղեցու վերականգնման էքիզային նախագիծը. կտրվածքներ

ջությամբ սրբատաշ քարով իրականացված միակ կառույցն է:

Բազմաթիվ հետազոտողներ են անդրադարձել եկեղեցու հորինվածքին, ճարտարապետական վերլուծությանը, մշակութային և պատմական արժեքներին: Առավել հիմնավոր ուսումնասիրել է ճարտարապետության տեսաբան դր. Մ. Հասրաթյանը[30], իսկ եկեղեցու ներսի՝ ԺԳ դարի որմնանկարները՝ Լ. Ա. Դուռնովոն[31]:

Ի լրումն նախկին ուսումնասիրությունների՝ ստորև ներկայացնում ենք խնդրին առնչվող մեր կողմից տեղում իրականացված հետազոտությունների մանրամասները: Այսպես՝ եկեղեցու գմբեթարդի և վեղարի միջև գոյություն ունի դատարկ տարածություն, որի մեջ տեղադրված են մեծածավալ կարասներ՝ բեռնվածությունը թեթևացնելու, շինանյութը խնայելու, հնարավոր է նաև ակուստիկ խնդիրներ լուծելու համար: Սրանք ծածկվել են կոտրտված, անորակ կղմինդրներով, որոնք ներքուստ ստեղծել են հենք-կաղապարամած՝ վեղարի լիցքի համար:



Կաթողիկե եկեղեցու վեղարի լիցքի մեջ զետեղված կարասները

Նույնաձև դատարկություններ կան նաև ճակտոնների հետևում՝ թաղերի վրա:

ԺԳ դարի երկրորդ կեսին, ինչպես նաև ավելի ուշ՝ հավանաբար ԺԷ-ԺԸ դարերում, կատարվել են վերակառուցումներ, որոնց հետևանքով

30 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 44-49:

31 **Дурново Л.,** Очерки изобразительного искусство средневековой Армении, Москва, 1979, с. 154. Ի դեպ, ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոս. և պատմ. միջ. պահպ. վարչության նախաձեռնությամբ 2014 թ. ամռանն իտալացի վերականգնող նկարիչ Քրիստին Լամողուեն և ճարտ. Արա Զարյանն իրականացրել են եկեղեցու հարավային պատի որմնանկարի մաքրման և ամրակայման աշխատանքներ:

Կաթողիկե եկեղեցու հարավային և արևելյան ճակատների բարձրաքանդակները

ա. Արևելյան ճակատի՝ ի սկզբանե ամբողջ հասակով (ինչպես հարավային ճակատում է) կտիտորական քանդակների՝ գոտկատեղից ցած մասերն անհետացել են, և նրանց տեղում այժմ մանրաչափ քարերով հարթ շարվածք է[32]: Այստեղ պատի շարվածքն ակնհայտորեն տարբերվում է մյուսներից:

բ. Բարձրացվել է հյուսիսարևմտյան երկրորդ հարկի ավանդատան տանիքի նիշը, իսկ արևմտյան ճակտոնի հյուսիսակողմյան ոտքը՝ մեկ շարք քարի բարձրությամբ, ընդ որում, տեղադրվել են հարթ քարեր վերջինիս նախնական քիվի վրա:

Կաթողիկե եկեղեցու հյուսիսարևմտյան ավանդատան տանիքի վերակառուցման հետքերը

32 Մ. Հասրաթյանի և Շ. Մկրտչյանի կարծիքով քանդակներն ի սկզբանե այդպես էլ եղել են՝ մինչև գոտկատեղը (**Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 43: **Մկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 43): Ըստ Ս. Մնացականյանի՝ քանդակների՝ գոտուց ներքևի հատվածները հետագայում տաշվել են (**Մնացականյան Ս.**, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դարերում, Երևան, 1976, էջ 111): Նա նշում է նաև, որ հարավային ճակատի կտիտորական կոմպոզիցիայի մաս կազմող եկեղեցու մոդելի գմբեթի հետևում կլոր պատուհան է արված, որի հետևանքով մոդելի գմբեթը երևում է նաև եկեղեցու ներսից (նույն տեղում): Նույն կարծիքն ունեն նաև Բ. Ուլուբաբյանը և Մ. Հասրաթյանը (Դաղի վանք, «Հայկազյան հայագիտական հանդես», հատոր Ը, Պէյրութ, 1980, էջ 37): Նշենք, որ տեղում կլոր պատուհանի հետքեր չհայտնաբերեցինք: Այստեղ արևելյան ճակատի քանդակային կոմպոզիցիայի նման մոդելի գմբեթի հետևում խորը փորված կլոր խորշ է, որը, իրոք, կտիտորական քանդակային կոմպոզիցիայի ստեղծագործական նոր մտահղացում է:

Ավանդատան տանիքը բարձրացվել է 18 սմ-ով, որը հստակ երևում է նախնական և վերակառուցված տանիքների պահպանված կրաշաղախե հետքերից (տե՛ս էջ 33-ի վերջին լուսանկարը):

Վերակառուցման ժամանակ ավանդատան նախնական ծածկի հարթ սալերը (պահպանվել են ծածկի տարբեր հատվածներում) փոխարինվել են ուղղանկյուն գլանիկավոր ծածկասալերով: Պահպանվել են տեղում մեկ և տեղաշարժված բազմաթիվ գլանիկավոր ծածկասալեր, որոնցից գործածվել են նաև հարավարևմտյան ավանդատան ծածկը վերակառուցելիս, որտեղ արդեն տեղում էին ավելի մեծ թվով սալեր:

Այս վերանորոգումները, ամենայն հավանականությամբ, կատարվել են բազիլիկ եկեղեցու վերա-

Կաթողիկե եկեղեցու հարավարևմտյան ավանդատան տանիքին հայտնաբերված ծածկասալերը

կառուցման ընթացքում, որովհետև վերջինիս հարավարևելյան պահպանված միակ քիվի և Կաթողիկեի ճակտոնի հատման տեղում առկա է եկեղեցիները միմյանց կապող քար, որը միգուցե պետք է ապահովեր բազիլիկի ծածկասալի կախվածքի երկարացումը (փաստորեն ջրհորդան)՝ Կաթողիկեի ճակտոնից ջրերը հեռացնելու համար:

գ. Եկեղեցու հարավային ճակատի արևմտյան մասը՝ արևմտյան որմնակամարի հատվածում, վերանորոգվել է մանրաչափ քարերով (տե՛ս էջ 29-ի առաջին լուսանկարը):

դ. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում՝ գերեզմանոցի և հյուսիսարևմտյան մասում, Սբ. Դաղի գերեզմանի գոյությունը (թեկուզ և ավանդությամբ ենթադրյալ գերեզմանի) հավաստում է, որ վանքի այս հատվածը սրբացված տարածք է համարվել, որով և կարելի է բացատրել Կաթողիկե եկեղեցու՝ հյուսիսային կողմից մուտքի առկայությունը (ինչպես հետո կտեսնենք, նման բացատրություն ունի նաև բազիլիկ եկեղեցու և նրա գավթի հյուսիսային մուտքերի գոյությունը):

Հետագայում՝ Դաղի «եկեղեցին» կառուցելուց հետո, երբ նշված տարածքը պատերով մասամբ պարփակվել էր, և կտրվել էր Կաթողիկեի անմիջական կապը Դաղի գերեզմանի հետ, եկեղեցու մուտքը դառնում է ոչ այնքան կիրառելի և փակվում: Դա տեղի է ունենում մինչև 1263 թ., քանի որ եկեղեցու ներսում այդ թվականին արված արձանագրության սվաղը շարունակվում է մուտքի մակերեսին[33]:

1998 թ. դրությամբ եկեղեցու ամբողջ ծավալի կայունությունը խաթարված չէր: Ճիշտ է, առանցքային ուղղություններով ճաքեր կային, սակայն դրանք վտանգավոր չէին: Ուշադիր զննությունը թույլ է տալիս ասել, որ մեծ մասն առաջացել էր դեռ միջնադարում, և ժամանակին դրանք կարանախցվել էին կրաշաղախով, ընդ որում, բացառված չէ, որ կրաշաղախի հետ կարմրավուն երանգի պիգմենտ խառնված լինի (միգուցե քարի փոշի՝ կրաքարի գույնին համապատասխանելու համար):

Կաթողիկե եկեղեցու արևելյան ճակատի՝ միջնադարում արված կարանախցումը

33 **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 114:

Այս կարանախցումներն այսօր նաև նշանացույցի դեր են կատարում և հաստատում, որ տվյալ ճաքերը չեն ավելանում, այսինքն՝ հուշարձանի ձևախեղումները չեն շարունակվում:

Կառույցի արտաքին մակերևույթները քայքայման էին ենթարկվել: Լանջերի ծածկերից պահպանվել էին քայքայված մի քանի փոքր հատվածներ:

Վեղարի պահպանված ծածկասալերն ամբողջովին քայքայվել, մամռակալել ու սևացել էին: Լանջերի և վեղարի վրա առատ բուսականություն էր աճել, նույնիսկ՝ ծառեր: Ճակտոնների վերին հատվածները և քիվերի զգալի մասը թափվել էին: Բարեբախտաբար, պահպանվել էին հուշարձանը



Կաթողիկե եկեղեցու գմբեթը հարավ-արևմուտքից

նախնական տեսքին բերելու սկզբունքային նշանակություն ունեցող բոլոր հանգույցները և բացակայող մասերի հետքերը՝ որոշ մասերում կրաշաղախի, որոշներում էլ՝ մեկ կամ երկու պահպանված քարի տեսքով: Այսինքն՝ հնարավորություն կար գիտամեթոդական սկզբունքներով իրականացնելու ամբողջական վերականգնում:

2001 թ. ամռան ընթացքում կատարված չափագրական և հետազոտական աշխատանքներն ավարտելուց և գրավոր սկզբնաղբյուրներն ուսումնասիրելուց հետո որոշվեց եկեղեցին վերականգնել նախնական տեսքով՝ պահպանելով, սակայն, հետագայի վերոնշյալ վերանորոգումները: Վերջինիս նպատակն է պահպանել հուշարձանի կառուցողական պատմությունը և տարբեր ժամանակների նորոգությունների տեխնիկական ու ճարտարապետական արժեքները:

Նույն թվականի վերջին պատրաստ էր վերականգնման նախագիծը, որով նախատեսվում էր.

ա. Ամբողջությամբ քանդել վեղարի քայքայված (կոտրտված) ու սևացած ծածկասալերը և փոխարինել նորերով: Սա պետք է կատարվեր՝ պահպանելով վեղարի հորինվածքային բոլոր մանրամասները: Միաժամանակ նախատեսվում էր առողջ մնացած ծածկասալերը (թեկուզ և փոքրաթիվ) վերաշարել՝ հավաստիությունն ամրագրելու համար:

բ. Թմբուկի վրա պահպանված կրաշաղախի հետքերով վերականգնել գմբեթատակ քառակուսին, որից հատվածաբար պահպանվել էին հարթ երեսապատի քարեր:

գ. Վերականգնել բոլոր ճակտոնները նույնպես կրաշաղախի պահպանված հետքերով, իսկ մի քանի տեղ՝ նաև քիվերով, որոնցով ճշտվում էին ճակտոնների թեքությունները: Թուլացած մասերն անհրաժեշտ էր քանդել-վերաշարել, իսկ բաց տեղերը՝ լրացնել նոր քարերով:

դ. Ծածկել բոլոր լանջերը տանիքում՝ հարավային ճակտոնի արևելյան լանջին բավականաչափ պահպանված, սակայն քայքայված հարթ ծածկասալերի նմանությամբ: Միայն նախատեսվեց պահպանել հյուսիսարևմտյան ավանդատան վերափոխված ծածկի ուղղանկյուն գլանիկով ծածկասալերը:

ե. Ձեռք չտալ պատերի՝ որմնանկարներ (տե՛ս գունավոր ներդիրում) և արձանագրություններ կրող հատվածներին և դրանք պահպանել այնպես, ինչպես որ կային մինչև եկեղեցու ներսում որմերի որոշ սվաղված հատվածներում առկա ԺԳ դարի մեծարժեք որմնանկարների պահպանման ու վերականգնման համար հնարավորություններ ստեղծվելը:

զ. Վերականգնել բեմական մասի ծավալային հորինվածքը, քանի որ պահպանված հանգուցային լուծումները տալիս են այդ հնարավորությունը: Վերջինիս ճակատային մասում նախատեսվում էր հարթ երեսապատ (հնարավոր է, որ այդ հարթ մակերեսը լիներ զարդաքանդակներով պատված, սակայն ոչ մի փաստացի նյութ չհայտնաբերվեց):

է. Եկեղեցու գործառույթի մերօրյա պահանջները բավարարելու նպատակով սալարկել խորանի և աղոթասրահի հատակը, չնայած ի սկզբանե եկեղեցու հատակը կրաշաղախով էր հարթեցված:

ը. Տեղադրել դուռ, իսկ պատուհաններին՝ մանր գործվածքով մետաղական ցանցեր՝ թռչունների մուտքն արգելելու համար:

Վերականգնման նախագծով առաջարկվում էր հնարավորինս պահպանել կառուցողական նախ-

կին տեխնոլոգիաները: Պետք է օգտագործվեր կիրավազային բարդ շաղախ՝ բացառելով երկաթբետոնե կառուցատարրերի (կոնստրուկցիաների) կիրառումը: Նախատեսվում էր նաև հայթայթել նույն կրաքարը, որով կառուցվել էր եկեղեցին, իսկ հատակը սալարկել Վանք գյուղի քարհանքի կարծր քարատեսակով, որը որոշակի համընկնում էր կրաքարի գույնին:

Հարկ է նշել, որ հակառակ որոնումների՝ չհաջողվեց գտնել այն քարհանքը, որից ժամանակին օգտվել էին եկեղեցին կառուցողները:

Հետագայում՝ 2002 թ., երբ սկսվեցին վերականգնման աշխատանքները, քարատեսակի ընտրության հարցը դրվեց ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության գիտամեթոդական խորհրդի քննարկմանը: Ներկայացվեցին Անիի քարհանքի տուֆերի, Վանք գյուղի և մի քանի այլ քարատեսակների նմուշներ: Քննարկումների արդյունքում որոշվեց (13.12.2002 թ., № 09 որոշում) օգտագործել Անիի քարհանքի տուֆի այն տեսակը, որը գունային երանգներով ավելի մոտ էր հուշարձանի կրաքարին:

2001 թ. դեկտեմբերին նույն գիտխորհրդի նիստում հաստատվել էր Կաթողիկե եկեղեցու վերականգնման նախագիծը (14.12.2001 թ., № 9 որոշում):

2002 թ. աշնանը սկսվեցին վերականգնման շինարարական աշխատանքները: Որոշվեց այն իրականացնել երկու փուլով՝ սկզբում սկսել և ավարտել գմբեթի վերականգնումը, ապա ավարտել ամբողջությամբ: Տարվա ընթացքում կատարվեցին նախապատրաստական աշխատանքներ. թմբուկի շուրջը բարձրացվեց մետաղական տախտակամած, և ձեռք բերվեց սալապատման համար անհրաժեշտ քարը:

2003 թ. մայիսից շարունակվեցին աշխատանքները, որի ժամանակ, ինչպես և նախատեսված էր, քանդվեցին վեղարի ծածկասալերը, հեռացվեց նրանց տակի թուլացած կրաշաղախը: Հենց այս ժամանակ վեղարի արևմտյան կողմում քայքայված շաղախը հեռացնելիս բացվեց վեղարի և գմբեթարդի միջև սնամեջ տարածություն տանող անցք, որտեղից և կարողացանք ուսումնասիրել գմբեթի կառուցվածքը (տե՛ս էջ 32-ի լուսանկարը): Հին ծածկույթը հեռացնելուց հետո սկսվեց նոր վեղարի կառուցումը տուֆ քարով: Մետաղական ամրաններով նախապես խարսխվեցին վեղարի քիվերը բավարար ամրությունը պահպանած հին կրաբետոնի հետ: Նույն կերպ ամրացվեցին նաև ծածկասալերի առաջին շարքի քարերը: Վեղարի վերականգնման աշխատանքներն ավարտվեցին 2003 թ. նոյեմբերին: Վարպետներն էին Էդիկ Գյուլնազարյանն ու Սերգեյ Կարախանյանը:

Աշխատանքները վերսկսվեցին 2004 թ. հունիսից և շարունակվեցին մինչև նոյեմբեր: Սկսած այդ

տարվանից՝ վերականգնող վարպետն էր Վազգեն Ղուկասյանը:

Տարվա ընթացքում մաքրվեց լանջերի վրա կուտակված հողը բուսածածկույթի հետ միասին:

Կաթողիկե եկեղեցու՝ վերականգնված վեղարով գմբեթն արևմուտքից և վերականգնված ծածկերի հյուսիսարևմտյան հատվածը

Քանդվեցին պատերի թուլացած մասերն ու վերաշարվեցին: Նոր քարերով լրացվեցին ճակտոնները, տումբաները և նրանց ծածկերը[34]:

34 Աշխատանքները կատարվում էին միջին որակով: Չնայած բազմաթիվ ցուցումներին և բացատրություններին՝ չկարողացանք դրանց որակը հասցնել փոքր-ինչ բարձր մակարդակի: Սա պայմանավորված էր տասնյակ տարիներ Արցախում հուշարձանների վերականգնման գործընթացի բացակայությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հատուկ վերականգնման հիմնարկների կազմալուծմամբ (1991 թ.):

Կաթողիկե եկեղեցու վերականգնված խորանը և հայտնաբերված պուլիկն ու դրամները

Եկեղեցու ներսում վերականգնվեց բեմը, սալապատվեց սրահը, որի ընթացքում հյուսիսարևմտյան ավանդատան անկյունից մեկ մետր հեռու՝ հատակից 20 սմ խորությամբ, հայտնաբերվեց կավից փոքրիկ պուլիկ արծաթե դրամներով, որոնք թողարկված էին Սեֆյան Իրանում Թահմասպ Ա (1524-1576) և Մուհամմեդ Խուդաբանդա (1578-1587) շահերի օրոք Թավրիզ, Սպահան, Խոյ, Բարֆրաշ, Նախիջևան, Երևան, Գյանջա, Շեմախի, Օրդու քաղաքներում: Դրամներից մեկը հատվել է ակ-կոյունլուների տիրակալ Աբու-ալ-Մուզաֆարի (1501-՞) օրոք: Կավե անոթը և դրամները, որոնք հետազոտել է Հայաստանի պատմության թանգարանի դրամագիտության բաժնի աշխատակից, դրամագետ, պ. գ. թեկնածու Արմինե Զոհրաբյանը, այժմ գտնվում են Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում:

Վերականգնման հիմնական աշխատանքներն ավարտվեցին 2004 թ.:

Եկեղեցու արևմտյան ճակատին փակցվեց տուֆե սալաքար՝ հետևյալ հուշագրով.

Եկեղեցիս վերանորոգեցաւ 2004 թ. հովանավորութեամբ Էդիլ Յովնանեանի (ԱՄՆ), ի յիշատակ Ալթոն Արա Յովնանեանի (1987-2002), յառաջնոր-

դութեան Պարգեւա արքեպիսկոպոսի և հայրապետութեան Գարեգնի Բ կաթողիկոսի:

Գլխավոր խորանի սբ. սեղանը տեղադրվեց 2005 թ.: Որոշ հանգույցներ, ցավոք, չեն համապատասխանում նախագծին, և շինարարը պարտավորվել էր ուղղել սխալները:

Ավանդատների սբ. սեղանները դեռևս (2014 թ.) չեն տեղադրվել:

Կաթողիկե եկեղեցու վերականգնման հուշագիրը, 2002 թ.

Ժամատան շինարարական արձանագրությունը, 1224 թ.

Ժամատան վերականգնումը. Կաթողիկե եկեղեցու վերականգնման աշխատանքներին զուգընթաց՝ 2003 թ.-ից սկսվեց ժամանատան վերականգնման գործընթացը: Նախապես կատարվեցին չափագրական և հետազոտական աշխատանքներ: Չափագրությանը մասնակցեցին նաև Հովհաննես Ջանշյանը, Սարգիս Խարազյանը, իսկ կոնստրուկտորական հետազոտությունները և եզրակացությունը կատարեցին Կառլեն Ղահրամանյանը, Սերգեյ Նալբանդյանը:

Ըստ հարավային ճակատի արձանագրության՝ ժամատունը ներկայիս Դադի «եկեղեցու» տեղում ավելի վաղ գոյություն ունեցած մեկ այլ կառույցի արևմտյան մասում 1224 թ. կառուցել է վանքի առաջնորդ Վասակ Նահատակի որդին՝ տեր Գրիգորիսը, որը Հաթերքի իշխանական տնից էր՝ վերոնշյալ Հասան կրոնավորյալի թոռը: Հետագայում նրան արևելքից կցակառուցվել է Դադի «եկեղեցին» (այս մասին քիչ հետո):

Հորինվածքով կենտրոնական քառամույթ, գմբեթավոր, հյուսիս-հարավ ուղղությամբ ձգված ուղղանկյունաձև կառույց է՝ կողմերի 1 : 1,46 հարաբերությամբ: Ներսում հատակագծային չափերն են՝ 14 x 9,6 մ: Ի տարբերություն ԺԳ դարում տարածված կենտրոնական քառամույթ ժամատների, որոնց հատակագիծն ավելի մոտ է քառակուսու, ինչպես իրավացիորեն նկատել է Մ. Հասրաթյանը, սրա հատակագիծը կհամապատասխաներ բազիլիկի[35]:

Ծավալային հորինվածքով ժամատունը խիստ տարբերվում է հայկական ճարտարապետության համանման կառույցներից:

Հայտնի է, որ ԺԲ-ԺԳ դարերի հայկական ավանդական քառամույթ գավիթները և ժամատները հիմնականում ունեն ծածկի ծավալային հորինվածքի երեք սկզբունքային լուծումներ[36].



Ժամատան էսքիզային նախագիծը. հատակագիծ

ա. Խաչաձև հորինվածքով, որի դեպքում ներսում՝ խաչաթևերի հատվածներում, ծածկերը կա-

35 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 51:

36 Գավիթների ճարտարապետության մասին տե՛ս **Мнацаканян С.**, Архитектура Армянских притворов, Ереван, 1952:





Ժամատունը հարավ-արևմուտքից, արևելքից, հյուսիս-արևելքից, հատված արևելքից և ներքին տեսքը դեպի արևելք

ռուցվում էին թաղերով և առնվում երկթեք տանիքի տակ՝ դրանով իսկ ճակատների կենտրոնական հատվածներում ստեղծելով երկթեք ճակտոններ, իսկ անկյունային հատվածները ներսից կառուցվում էին կորագիծ, հատած բրգաձև, հարթ սալաքարերի կոնստրուկցիաներով կամ այլ տարատեսակ լուծումներով, որոնք ծածկվում էին հիմնականում միաթեք տանիքով:

բ. Ճակտոնային հորինվածքով, երբ բոլոր ճակատներում կառուցվում էին երկթեք ճակտոններ ամբողջ ճակատի երկայնքով և համապատասխան երկթեք քիվերով, որի արդյունքում ներքին ամբողջ տարածությունը վերցվում էր եռանկյուն պրիզմաների խաչաձև փոխհատումից ստացվող հովհարաձև ութանիստ տանիքի տակ:



ա

բ

գ

Գավիթներ՝ երեք հիմնական ծավալային լուծումներով. արտատպված Мнацаканян С., “Архитектура Армянских притворов” **գրքից**

գ. Քառալանջ բրգաձև հորինվածքով, որի դեպքում ներսի ողջ տարածությունը ծածկվում էր քառանիստ հատած բրգաձև տանիքով, իսկ ճակատներում ստացվում էին հորիզոնական ձգված տանիքաքիվեր:

Դաղի վանքի ժամատան ծածկի ծավալային լուծումը եզակի է և նման չէ վերը նշված կառույցներին: Հիմնական տարբերությունն առաջացել է ծածկի ձևի և գմբեթի համադրումից: Այստեղ ամբողջ ներքին տարածությունն առնված է երկկենտրոն՝ սլաքաձև կորություն ունեցող մեկ ընդհանուր թաղի տակ, իսկ կենտրոնում չորս քառակուսի մույթերի վրա հենված գմբեթն ուղղակի ծակում է թաղը և վերևում ավարտվում երդիկով (տե՛ս 39-41 էջերի լուսանկարները): Տանիքը համապատասխանում է թաղի հորինվածքին և ունի երկթեք լանջեր:

ԺԲ-ԺԳ դարերում հայկական ճարտարապետության քառամույթ գրեթե բոլոր գավիթների կենտրոնական մասի ծածկերը հորինվածքային ու կառուցվածքային բազմազան լուծումներով երդիկներ են և չունեն էապես արտահայտված թմբուկներ: Տվյալ դեպքում կենտրոնական չորս կամարներով միացված մույթերի վրա նստում է 4 մ բարձրությամբ ութանիստ թմբուկը, որին էլ հետևում է կենտրոնում բացված անցքով 16 նիստանի գմբեթարդը:

Արտաքուստ թմբուկն իր ծավալի միայն վերևի մասով է արտահայտվում և այնքան է խրված կառույցի ներքին տարածության մեջ, որ գմբեթների ավանդական արտաքին գմբեթատակ քառակուսին կառուցելու կարիք չի եղել: Նույն պատճառով էլ չէին կարող նաև պատուհաններ կառուցվել թմբուկի վրա: Դրանց փոխարեն ներսում նիստերին արվել են եռանկյունաձև խորշեր, որոնք ներկայանում են որպես դեկորատիվ հարդարանքի տարրեր:

Ներսում թաղածածկը հենվում է արևելյան և արևմտյան երկայնական պատերին, սակայն 9,6 մ թռիչք ունեցող այս թաղն ունի լրացուցիչ հենարաններ՝ ի դեմս կենտրոնական մույթերից դեպի արտաքին որմերը ձգված 8 կամարների վրա հանգչող

Ժամատան գմբեթը ներքուստ

պատերի: Վերջիններս ծառայում են նաև որպես թեքահենծաններ (կոնտրֆորսեր)՝ գմբեթի ծանրությունն արտաքին պատերին փոխանցելու նպատակով:

Գմբեթի և ծածկի՝ միջնադարի հայկական ճարտարապետությանը ոչ բնորոշ հորինվածքային

Ժամատան հյուսիսարևելյան անկյանը հարող հատվածը



Ժամատունը հարավից

տարօրինակ միակցությունը մտորումների տեղիք էր տալիս, և անհրաժեշտ էր հասկանալ նման հորինվածքային լուծման իմաստն ու պատճառները:

Այս կապակցությամբ Մ. Հասրաթյանը նշել է. «Կառուցողները չեն կարողացել մինչև վերջ հաղթահարել տարածված ձևերից հրաժարվելու պատճառով առաջացած ստեղծագործական խնդիրների բարդությունները, մի բան, որ բերել է ծավալի վերին մասի անհաջող լուծման»[37]:

Արդյո՞ք դա այդպես է: Այս հարցը պարզաբանելու համար տեղում կատարեցինք մանրազնին հետազոտություններ և կառուցողական առանձնահատկությունների վերլուծություններ: Պարզվում է, որ ժամատունը մեզ է ներկայանում ոչ նախնական հորինվածքով, այլ ակնհայտ վերակառուցմամբ, որի արդյունքում նոր ծածկ է կառուցվել, և փոխվել են կառույցի ծավալային ձևերը: Այսօրինակ եզրահանգումը հիմնված է հետևյալ փաստարկների վրա.

ա. Թաղի կորության փոփոխությունը հիմքից մոտ 1,8 մ բարձրության վրա.

բ. Արևմտյան ճակատի վերին՝ անմիջապես քիվատակի երեք շարքերի շարվածքի տարբերությունը ներքևի շարքերից (տե՛ս էջ 39-ի առաջին լուս.).

գ. Հարավային ճակատում՝ ներկայիս ճակտոնից 1,5 մ ցած, այլ ճակտոնագծի առկայությունը, որով առանձնանում են պատի ստորին և վերին շարվածքները: Այս ճակտոնագիծն ունի մոտ 1 մ երկարությամբ հորիզոնական հատվածներ, որոնց բարձրությունները համընկնում են արևմտյան ճակատի շարքերի շարվածքի տարբերության մակարդակին:

Այսպիսով՝ վերակառուցման փաստն ակնհայտ է, ըստ որի՝ կառույցի վերին հատվածի ծավալները վերափոխված են: Փոփոխվել և նորից է կառուցվել ծածկի և տանիքի ամբողջ համակարգը: Վերակառուցման ժամանակի մասին այժմ դժվար է ճշգրիտ որևէ բան ասել, սակայն կարող ենք միայն առաջ քաշել հավանական մի վարկած, որի համաձայն՝ դա կարող էր տեղի ունենալ ԺԲ դարի վերջին կամ ԺԳ դարում՝ Դաղի վանքի համար պատմաքաղաքական բարենպաստ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ վերակառուցվում էին ավերված հին շինությունները, ստեղծվում՝ նորերը: Ամենայն հավանականությամբ, այս վերակառուցումն իրականացրել է վանքի առաջնորդ տեր Գրիգորիսը 1224 թ., իսկ շինարարական արձանագրության մեջ նա իրեն իրավունք է վերապահել «շինեցի ժամատունս» բառերը գրելու՝ հաշվի առնելով կատարված աշխատանքի մեծ ծավալը, որի արդյունքում էապես վերափոխվել է կառույցի ողջ վերնահատվածը:

Հուշարձանն ուսումնասիրելիս հարավային մուտքի կամարի մեջ հայտնաբերվեց ծածկագրված կարճառոտ, հայելային անդրադարձումով,

37 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 52:

կրասվաղով արված ելնդագիր մի արձանագրություն.

Զտ(է)ր Գրիգորէս յ(ի)[շ](եցէք)[38]*:*

Ժամատունը կառուցված է կոպտատաշ տարատեսակ քարերով (կրաքար, գլաքար, ավազաքար և տեղական ամուր այլ տեսակներ): Սրբատաշ կրաքարով են կառուցված գմբեթակիր մույթերը, արևելյան շքամուտքը (շքեղ շրջանակը հետագայում է ավելացվել՝ Դաղի «եկեղեցու» և փոքր գավթի կառուցման ժամանակ) և թմբուկը: Բացակայում էր տանիքի ծածկույթը:

Չնայած կառույցը պահպանվել էր գրեթե ամբողջական ծավալներով և կանգուն էր, տարիներ

38 **Այվազյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 211 (արձանագրության մեջ հիշվող Գրիգորեսը, ըստ երևույթին, տեր Աբանասի եղբայրն է):



Ժամատան հարավային մուտքի կամարի արձանագրությունը և գրչանկարը



Ժամատան էքիզային նախագիծը կղմինդրի և քարի ծածկասալերի տարբերակներով. ճակատներ

շարունակ մնալով անխնամ՝ որոշ հատվածներ մաշվել էին և տեղ-տեղ քայքայվել:

Հարավային պատի արևմտյան անկյունում մոտ 4 սմ լայնությամբ խոր միջանցիկ ճաք էր առաջացել (տե՛ս էջ 41-ի երկրորդ լուսանկարը): Սրանից զատ՝ ճաքեր կային նաև ներսի պատերին և կամարների կենտրոնական մասերում (մոտ 2-3 սմ): Ծածկանյութի բացակայության պատճառով անձրևաջրերը տանիքից ներծծվում էին՝ ներսում կաթոցներ առաջացնելով թաղի ամբողջ մակերեսով:

Ժամատան ամբողջական վերականգնումը որևէ կասկած չէր հարուցում: Կառույցի ճարտարապետական, ծավալային լուծումները հայտնի էին: Հիմնականում անհրաժեշտ էր լուծել ծածկի խնդիրը: 2004 թ. կատարվեց վերականգնման նախագիծը և հաստատվեց ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչության (պետ՝ Սլավա Սարգսյան) գիտխորհրդի նիստում (17.06.2004 թ. որոշում): Նախատեսվում էր.

ա. Պատերի ճաքերն ամրացնել մետաղե ամրանային խարիսխներով և բարդ շաղախի ներարկումով:

բ. Վերականգնել մուտքերը՝ լրացնելով բացակայող քարերը, ընդ որում, արևելյան մուտքի այն հատվածներում, որտեղ ի սկզբանե քարերը եղել էին զարդանախշերով և այժմ բացակայում էին, նախատեսվեց լրացնել նոր քարերով, սակայն առանց զարդանախշերի՝ պահպանելով միայն դրանց տրամատները (պրոֆիլներ): Վերականգնման այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս խուսափելու կրկնօրինակը բնօրինակի փոխարեն ընկալելու վտանգից և ընդգծում է բնօրինակային հատվածները:



Ժամատան էքիզային նախագիծը. կտրվածքներ

գ. Ուղղել հատակի կենտրոնական մասում տեղաղրված ու իրենց տեղից խախտված տապանաքարերը և ամրացնել նախկին դիրքով: Հատակն ի սկզբանե սալարկված չէր, սակայն, ինչպես նախորդ կառույցներում, այստեղ ևս հաշվի առնվեց հետագայում գործածելու խնդիրը. որոշվեց սալապատել:

Ժամատան արևելյան շքամուտքը վերականգնումից առաջ և հետո

դ. Հեռացնել քայքայված կրային սվաղը և որոշ ժամանակ անց (մեկ-երկու տարի հետո, երբ կառույցի պատերը կչորանային տարիների խոնավությունից) կատարել նոր սվաղ:

ե. Տանիքի ծածկանյութից ոչինչ չէր պահպանվել: Կրաբետոնե լիցքն ամբողջովին մերկացած էր, և դժվար էր ճշգրտել, թե նախապես ինչ նյութով էր տանիքը կառուցվել: Հողե տանիք չէր կարող լինել, ինչպես տաճարի ծածկն է, այլապես գոնե ինչ-որ հատվածում պահպանված կլիներ: Բացի այդ, քանի որ տանիքն ունի մեծ թեքություն, քիվի վրա առնվազն պետք է քարի մեկ-երկու շարք պահպանված լիներ, ինչպես համալիրի կառույցներից տաճարի և ապարանքին հյուսիսից կից բնակելի շինության վրա՝ որպես պարապետ՝ հողածածկույթը պահելու համար: Կասկածելի էր կղմինդրի կամ հատկապես քարի սալապատումը, որովհետև դրանցից նույնպես ոչինչ չկար, ինչպես և կրաշաղախի որևէ մնացորդ՝ ծածկասալի կամ կղմինդրի դաջվածքային հետքով:



Ժամատան արևելյան լանջը վերականգնման ընթացքում և աշխատանքների ավարտից հետո

Այս ամենից եզրակացրինք, որ ծածկը նախապես կրաշաղախով է հարթեցված եղել, որն էլ տարիների ընթացքում քայքայվել ու վերացել է: Ըստ երևույթին, ժամանակին տանիքը կսալապատեին կղմինդրով կամ քարով, եթե չլինեին դրանց ձեռքբերման հետ կապված դժվարությունները և ծախսատարությունը:

Հաշվի առնելով, որ համալիրի վերականգնվելիք մյուս շինություններն էլ պետք է կառուցվեին նույն նյութով (Կաթողիկեի ծածկն արդեն իսկ տուֆով էր կառուցված, իսկ բազիլիկը, փոքր

գավիթը, սյունասրահն ակնկալվում էր կառուցել տուֆով, որովհետև, ինչպես վերը նշվեց, գիտխորհուրդը կրաքարի փոխարեն տուֆ քարի օգտագործման առաջարկությունն էր հաստատել), նախագծով որոշվեց ծածկն իրականացնել տուֆ քարով:

Ժամատունը հատակի սալապատումից և տապանաքարերն ուղղելուց հետո

գ. Մուտքերին տեղադրել փայտե դռներ, իսկ պատուհաններին՝ մետաղյա մանրացանցեր:

2004 թ. աշնանը Կաթողիկե եկեղեցուն զուգահեռ սկսվեցին նաև ժամատան վերականգնման աշխատանքները: Մինչև նոյեմբերի կեսերը ծածկը մաքրվեց բարակ շերտով խոտածածկույթից, նախապատրաստվեց ծածկասալերի շարումը: Նախապես հեռացվեցին կրաբետոնի մակերևույթի թուլացած հատվածները, իսկ ամուր մասերը լվացվեցին: Կրաբետոնի հեռացման ժամանակ թմբուկի հարավարևելյան նիստին կից ծածկի կրաշաղախե զանգվածի մեջ հայտնաբերվեց դատարկ տարածություն՝ ծածկված անտաշ սալաքարերով: Այն, վստահաբար կարելի է ասել, արված էր ծածկի բեռը թեթևացնելու և շինանյութը խնայելու նպատակով: Ամենայն հավանականությամբ, նման տարածություններ կհայտնաբերվեին նաև թմբուկի հարավարևմտյան, հյուսիսարևմտյան և հյուսիսարևելյան նիստերին կից, սակայն այդ մասերում լիցքը բավական ամուր էր պահպանված, և կրաշաղախի քանդման աշխատանքների կարիք չկար: Ուսումնասիրությունների համար գտնված այդ մեկ դատարկ տարածությունն էլ բավարար էր:

Կառույցի հարավարևմտյան անկյան շաղախից անջատված քարերը քանդվեցին և վերաշարվեցին, իսկ ճաքը վերևից ներարկվեց կրային բարդ շաղախով: Շարվեցին բացակայող քիվերը, կառուցվեցին արևմտյան լանջի հինգ շարք ծածկասալերը:

2005 թ. ապրիլին վերսկսվեցին շինարարական աշխատանքները և շարունակվեցին մինչև դեկտեմբեր: Կառուցվեց երկթեք լանջերի ծածկը: Երդիկի ութանիստ թմբուկի նիստերը վերականգնվեցին քանդում-վերաշարումով, ամրացվեցին թուլացած, և լրացվեցին բացակայող քարերը: Երդիկի ծածկը նախատեսված էր նիստերին համապատասխան՝ ութանիստ հատած բուրգի տեսքով, ինչպես և վերականգնվեց: Ներսում կատարվեց հատակի բա-

զալտե սալապատում նախապես տոփանած հողի և խճի շերտի վրա: Այս աշխատանքներն իրականացնելու ժամանակ հողի մակարդակը հյուսիսային մասում 15 սմ իջեցնելուց հետո հայտնաբերվեցին խառնիխուռն թափված մարդկային ոսկորներ: Ըստ երևույթին, վերջիններս տակնուվրա էին արվել գանձախույզների ձեռքով, որի հետևանքով էլ տեղաշարժվել էր տապանաքարերի մեծ մասը: Ստեղծված իրավիճակը հնարավորություն չէր տալիս կատարելու գիտական որևէ եզրակացություն: Հայտնաբերված ոսկորները վերստին ամփոփվեցին սալահատակի տակ: Տապանաքարերն ուղղվեցին և տեղադրվեցին սալահատակից 3 սմ բարձր: Վերականգնվեց արևելյան շքամուտքը վերոնշյալ մեթոդով առանց զարդանախշերը փորագրելու (տե՛ս էջ 44-ի լուսանկարները):

Հյուսիսային պատը խոնավությունից զերծ պահելու համար դրսում՝ ժամանակի ընթացքում պատի տակ կուտակված մոտ 1,2 մ հաստությամբ հողաշերտը հեռացվեց, և բետոնե հարթեցնող շերտով կազմակերպվեց ջրահեռացումը՝ թեքություններ տալով դեպի արևմուտք և արևելք, իսկ հյուսիսակողմի թեք սարալանջի ջրերի հոսքը կանխելու համար վերականգնվեց նաև վանքի պարսպի՝ ժամատան հյուսիսային պատից 1,5-2 մ հեռավորության վրա գտնվող հատվածը (տե՛ս գունավոր ներդիրի լուսանկարը):

Երդիկի անցքից 20 սմ բարձրության վրա էլ տեղադրվեց ապակե ծածկ՝ անձրևաջրերի ներթափանցումը կանխելու համար: Այսպիսով՝ հիմնականում ավարտվեցին վերականգնողական աշխատանքները:

Ինչպես և նախատեսված էր, հետաձգվեց ներսի ծեփապատումը, սակայն ներքուստ ճաքերի ներարկումը շինարարը չկարողացավ իրականացնել:

Վերանորոգման քարտաշ վարպետներն էին Վազգեն Ղուկասյանը և Տարոն Գևորգյանը: Ժամատան վերականգնման աշխատանքների բոլոր ծախսերը հոգում էր Էդիկ Աբրահամյան-Էրմիյանը Թեհրանից:

Արմեն Հախնազարյանի կողմից ղեկավարվող ծրագրի այս փուլում կազմակերպչական օժանդակություն էր ցույց տալիս Էդիկ Աբրահամյան-Էրմիյանի ընկերը՝ Ալեք Ենիգոմշյանը: Վերականգնման աշխատանքների վերջում հարավային պատին՝ տեր Գրիգորիսի արձանագրության տակ, փակցվեց տուֆե սալաքար՝ հետևյալ հուշագրով.

Ի հայրապետութեան ՏՏ Գարեգնի Բ կաթողիկոսի Ամենայն հայոց և յառաջնորդութեան Տ Պարգևայ արքեպիսկոպոսին Արցախայ նորոգեցաւ ժամատունս, ի յիշատակ նահատակաց ազգիս ի պատերազմին Արցախայ, արդեամբք Էդկայ յԱբրահամեանց-Էրմիեանց տոհմէ (Իրան) յամին ՍԶ:

Ժամատան վերականգնման հուշագիրը

Զանգակատան վերականգնումը. 2005 թ. որոշվեց վերանորոգել նաև զանգակատունը, որի մեկենասն էր գերմանուհի Մարգրիթ Բունեման-Հախնազարյանը՝ Արմեն Հախնազարյանի կինը:



Զանգակատունը հյուսիս-արևմուտքից

Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ զանգակատունը կառուցել է Դոփյանց Վահրամ իշխանի որդին՝ Սարգիս եպիսկոպոսը[39]: Ցավոք, նա այս վկայության սկզբնաղբյուրը չի նշում, սակայն, ինչպես արդեն ասվել է, Սարգիս եպիսկոպոսը Դաղի վանքին 1314 թ. զանգ է նվիրում, և միգուցե այս նվիրատվու-

39 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 207-208: Նույնը կրկնել է Շ. Մկրտչյանը (**Մկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 44):





Զանգակատան ներսում գտնվող զույգ խաչքարերը, 1283 թ. (լուս.՝ 1993 թ.) և հատվածներ

Զանգակատան հյուսիսակողմյան խաչքարի քիվը

թյունն է Բարխուտարյանցի համար հիմք դարձել զանգակատան հիմնադրման ժամանակի վերաբերյալ: Կարելի է միայն վստահորեն պնդել, որ զանգակատունը նշյալ թվականին արդեն գոյություն ուներ:

Միջնադարի հայկական ճարտարապետության մեջ զանգակատան համար դեռ չկային սկզբունքորեն մշակված հորինվածքային որոշակի տիպեր, ինչպես դա տեսնում ենք արդեն ուշ շրջանում՝ ԺԷ-ԺԹ դարերում, երբ կառուցվում էին չորս հզոր մույթերի վրա հենված երկհարկ կամ եռահարկ զանգակատներ, որոնց վերջին հարկը սյունազարդ ռոտոնդան էր:

ԺԲ-ԺԴ դարերում կառուցվում էին հորինվածքով իրարից տարբեր, բայց նույնպես վերասլաց շինություններ, որոնք լինում էին կա՛մ առանձին կառուցված, կա՛մ որևէ շինությանը կից՝ կախված համալիրի ընդհանուր հատակագծային և ծավալատարածական հորինվածքի առանձնահատկություններից (ինչպես, օրինակ, Հաղպատի, Սանահինի, Հանդաբերդի, Խաթրավանքի զանգակատները և այլն)[40]:

Դադի վանքի զանգակատունն էլ ունի ծավալատարածական ուրույն հորինվածք: Կառույցը երկհարկանի է: Առաջին հարկը հատակագծում անկանոն ուղղանկյուն է, 3,27 x 2,36 ներքին չափերով: Տեղանքի բնական թեքության պատճառով հատակի մակարդակը գետնից բարձրացված է 2,2 մ: Արևմտյան ճակատն ամբողջ բարձրությամբ ունի սլաքաձև կամարով ավարտվող բացվածք, իսկ մյուս երեք ճակատները խուլ են: Հետագայում արևմտյան ճակատին կցակառուցվել են առաջին հարկ բարձրացող աստիճանները (երևում է կցման կարանը):

Երկրորդ հարկը կանոնավոր քառակուսի հատակագծով (2,6 x 2,6 մ), քառանիստ բրգաձև վեղարով քառասյուն ռոտոնդան է, որը հատակագծում առաջին հարկաբաժնի վրա մոտ 4 աստիճան շեղ է տեղադրված: Դա արված է այն նպատակով, որ ռոտոնդայի և առաջին հարկի արևմտյան՝ գլխավոր ճակատները միմյանց զուգահեռ լինեն: Մյուս ճակատներում համապատասխանաբար միմյանց զուգահեռ չեն՝ առաջին հարկի անկանոն ուղղանկյուն հատակագծի պատճառով:

Զանգակատունը կառուցված է հիմնականում կոպտատաշ տարատեսակ քարերով: Ռոտոնդան և արևմտյան ճակատի վերին հատվածը՝ սկսած կամարի հիմքից, սրբատաշ դեղնավուն կրաքարից են:

Ներսի հոյակերտ խաչքարերն ի սկզբանե զանգակատան մեջ չեն եղել, այլ տեղադրված էին քարե պատվանդանների (բաժակ) մեջ, որովհետև ունեն հատուկ այդ նպատակով ատամնաձև կտրված խարիսխներ և կարող էին գտնվել մեկ այլ վայրում[41]:

Զանգակատունը կառուցվել է՝ կցվելով սյունասրահի արևմտյան ճակատին: Այս եզրակացության ենք հանգում հետևյալ փաստարկների համաձայն.

ա. Զանգակատան հարավային և հյուսիսային որմերը հպվում են սյունասրահի արևմտյան պա-

40 Այս նյութին ավելի մանրամասն չենք անդրադառնում, քանի որ այն դուրս է ներկա ուսումնասիրության շրջանակից:

41 Բացառված չէ, որ նախքան զանգակատան կառուցումը զույգ խաչքարերը գտնված լինեին նույն վայրում, սակայն ոչ ներկա տեղադրությամբ:



Զանգակատան հարավակողմյան խաչքարի քիվը

տին, որտեղ և հստակ երևում են ուղղահայաց կարանները (տե՛ս 49-50 էջերի լուսանկարները), ընդ որում, հարավային ճակատում՝ հպման մասում, սյունասրահի քարերն անկյունաքարեր են, իսկ զանգակատանը՝ ո՛չ:

բ. Զանգակատան նշյալ որմերը բարձրության միջին մասից արդեն նստած են սյունասրահի արևմտյան պատին:

գ. Զանգակատան արևելյան պատը մի փոքր բարդ կառուցվածք ունի: Նրա ներքևի մասը կազմում են սյունասրահի արևմտյան պատին հենված տեր Աթանասի հայտնի խաչքարերը և դրանց կողքի ազատ տարածքը լրացնող պատերը (ներքևի աջ և ձախ կողմերում առկա են կամարաձև վերջացող խորշեր), իսկ վերնամասը շարված է հաստության կես մասով նստած խաչքարերի, մյուս կեսով՝ սյունասրահի արևմտյան պատի վրա (տե՛ս 47, 50 էջերի լուսանկարները): Պատի այսպիսի կառուցվածքն ինքնին վկայում է, որ կառուցվել է սյունասրահից հետո:

Զանգակատունը ենթարկվել է վերակառուցման, որի փաստարկները հետևյալն են.

ա. Ներսում թաղն իր հիմքից 0,8 մ բարձրության վրա կոտրվում է՝ փոխելով և՛ կորությունը, և՛ շարվածքը:

բ. Դրսում հյուսիսային պատն ամբողջ բարձրությամբ մեկ հարթության մեջ չի գտնվում, այլ ճակատային կամարի հիմքի մակարդակում հատակագծային շեղում է կատարում, որն արևմտյան անկյունից մինչև արևելյանը կազմում է համապատասխանաբար 0-20 սմ: Այս մակարդակից վերև պատի շարվածքը հստակ տարբերվում է ստորին հատվածից: Շեղման արդյունքում հյուսիսային պատի վերնամասը ռոտոնդայի հյուսիսային ճակատին դառնում է զուգահեռ:

գ. Նույն մակարդակից վերև փոխվում է նաև հարավային պատի շարվածքը:

Այս բոլոր հետքերը գտնվում են հորիզոնական

Զանգակատան հատված հյուսիս-արևմուտքից





Զանգակատունը հարավ-արևելքից վերականգնումից առաջ և հետո

գրեթե նույն՝ զանգակատան արևմտյան ճակատի՝ սրբատաշ քարերով շարվածքի մակարդակի վրա, որտեղ և խաչքարերի վերևի նիշերն են: Հետևաբար տեղի է ունեցել վերակառուցում, որը պայմանավորված էր խաչքարերի տեղադրմամբ, քանի որ հաշվի է առնվել դրանց բացարձակ չափերը (բարձրությունները): Խաչքարերի վրայի պատը թաղածածկի հետ միաձույլ է, իսկ դա նշանակում է, որ զանգակատան ծածկը և դրա վրա նստած ռոտոնդան կառուցվել են այն ժամանակ, երբ խաչքարերը տեղադրվել են զանգակատան մեջ, այսինքն՝ վերակառուցման ժամանակ: Հակառակ դեպքում, եթե կառուցված լիներ զանգակատունը, և խաչքարերը տեղափոխվեին նրա մեջ, ապա խաչքարերի վրայի պատն օրգանապես կապված չէր լինի թաղի հետ:

Զանգակատան հիմնադրման թվականը, ինչպես վերը նշվեց, հստակ չէ, սակայն արդեն պարզ է, որ կարող էր կառուցված լինել միայն սյունասրահից հետո՝ միգուցե ԺԳ դարի վերջին քառորդին կամ էլ ԺԴ դարի սկզբին:

Վերակառուցումն էլ տեղի է ունեցել թերևս ԺԴ դարում՝ 1283 թ. խաչքարերը կերտվելուց և մեզ անհայտ պատճառով (միգուցե տեր Աթանասն այստեղ է թաղվել) դրանք զանգակատուն տեղափոխելուց հետո, սակայն ոչ երբեք ԺԹ դարում[42]:

Զանգակատունը մեզ է հասել առաջին հարկի վերին հատվածները քանդված, սակայն կանգուն վիճակում: Պատերի մեջ կային թուլացած որոշ հատվածներ, իսկ ռոտոնդայի ծածկի վերին մասում քարերն անջատված էին շաղախից:

Չափագրումից և հետազոտություններից հետո կազմվեց վերականգնման նախագիծը: Նախնական տեսքը ստանալու համար անհրաժեշտ էր

42 Ս. Ջալալյանցը խաչքարերը տեսել է զանգակատնից արևելք գտնվող մատուռների մեջ (նշվ. աշխ., էջ 223): Սրանից հետևում է, որ խաչքարերը կարող էին և զանգակատան մեջ տեղափոխվել ԺԹ դարում: Ջալալյանցի այս վկայությունը հավաստի չէ, որովհետև, ինչպես իրավացիորեն նկատել է Ս. Կարապետյանը (նշվ. աշխ., էջ 98), այդպիսի մատուռներ նույնիսկ գոյություն չունեն:



Վանքի պաշտամունքային կառույցները հարավ-արևմուտքից Ի դարի սկզբին

գտնել արևելյան և արևմտյան ճակտոնների թեքությունները, որոնք, իհարկե, կարտահայտեին զանգակատան տեսքը ժամանակի վերակառուցումներով հանդերձ: Ռոտոնդայի քառակուսի հիմնատակի քարերի վրա որոշ տեղերում կրաշաղախի տեսքով պահպանվել էին ծածկասալերի հետքերը, որոնք հնարավորություն տվեցին գտնելու ճակտոնի գագաթի նիշը, իսկ ոտքի մակարդակը որոշվեց ճակատներում պահպանված քարերի և հավանական թեքության համադրմամբ: Ստացված թեքությունը լիովին համատեղելի է դարասկզբին կատարված լուսանկարում նկատվող թեքության հետ:

Ըստ նախագծի՝ նախատեսվեց առաջին հարկի կրաշաղախով հարթեցված և արդեն քայքայված հատակը փոխարինել քարե սալահատակով, թուլացած բոլոր հատվածները՝ այդ թվում վեղարի ծածկասալերի մի մասը, քանդել-վերաշարել, ինչպես նաև կրաշաղախով ներարկել ճաքերը:

Անհրաժեշտ էր նոր քարերով լրացնել պատերի բացակայող մասերը, դրսում վերականգնել առաջին հարկ բարձրացող կիսաքանդ աստիճանները:

Խիստ հրատապ չլինելու պատճառով որոշվեց ներսում սվաղի վերականգնման աշխատանքներն ավելի ուշ կատարել, քանի որ ընդհանրապես գերադասում էինք միջոցները ծախսել կառույցները վերականգնելու նպատակով:

Շինարարական աշխատանքները սկսվեցին 2005 թ. և ավարտվեցին 2006 թ.:

Այստեղ նույնպես փակցվեց տուֆե սալաքար՝ վերականգնման հետևյալ հուշագրով.

Զանգակատան վերականգնման հուշագիրը (2006 թ.)

Յամին տեառն ՍԶ (2006), ի հայրապետութեան ՏՏ Գարեգնի Բ կաթողիկոսի Ամենայն հայոց, յաւուրս Պարգեւայ արքեպիսկոպոսին Արցախայ թեմի նորոգեցաւ զանգակատունս մեկենասութեամբ (գերմանուհւոյ) Մարգրետայ Հախնազարեանց:

Պաշտամունքային կենտրոնական կառույցների վերականգնումը. համալիրի վերականգնման ծրագրի հաջորդ փուլով նախատեսվում էր իրականացնել պաշտամունքային կառույցների կենտրոնական մասում գտնվող հուշարձանախմբի նորո-

գումը, որի մեջ մտնում են Դադի «եկեղեցին», բազիլիկ եկեղեցին, փոքր գավիթը և սյունասրահը:

Նշված շինությունները ստեղծվել են ոչ միաժամանակ և ունեն կառուցողական բազմաթիվ շերտեր և վերակառուցումներ: Տեղում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ոչ միայն այս խմբում, այլ ամբողջ համալիրում պահպանված վերգետնյա շենքերից ամենավաղը բազիլիկ եկեղեցին է, որը կարող էր կառուցված լինել մինչ ԺԲ դարի կեսերը:

ԺԳ դարի կեսերին նշյալ խմբից կառուցվել են Դադի «եկեղեցին», փոքր գավիթը, սյունասրահը, որը նախապես ծածկված էր կղմինդրով, իսկ բազիլիկ եկեղեցին վերակառուցվել է:

ԺԴ դարում սյունասրահը և փոքր գավիթը վերակառուցվել են:

Այժմ առավել մանրամասն պարզաբանենք և հիմնավորենք համալիրի այս խմբի կառուցողական շերտագրությունը և ժամանակագրությունը:

Դադի «եկեղեցի». արդեն նշվել է, որ վանքի հիմնադրումն առնչվում է նահատակ սուրբ Դադի հետ, և գրեթե բոլոր ուսումնասիրողների կարծիքով նրա գերեզմանը կարող էր լինել վանքի ամենավաղ կառույց համարվող Դադի «եկեղեցու» մեջ:



Պաշտամունքային կառույցների կենտրոնական մասի հատակագիծը. էսքիզային նախագիծ

Ի հաստատումն այս տեսակետի, ինչպես նաև այն կարծիքի, որ վանքի տարածքի այդ մասը, իրոք, սրբագործված է համարվել, և այդտեղ պետք է լինեին գերեզման և հնագույն կառույց, կարելի է ավելացնել ևս երկու փաստարկ.

ա. Ներկայիս Դադի «եկեղեցուն» արևմուտքից կից ժամանատունը (ինչպես ստորև կտեսնենք, ավելի վաղ կառույց է, քան Դադի «եկեղեցին») և հարավից կից գավիթը, դեկորատիվ հարդարանքներից զուրկ լինելով, ունեն Դադի «եկեղեցու» մեջ

Բազիլիկ եկեղեցու հյուսիսային փակված մուտքը և Սբ. Դադի «եկեղեցու» տեսքը դեպի արևելք

բացվող պերճ հարդարված շքամուտքեր, որոնցով շեշտվել է վերջինիս բացառիկ՝ սրբացված վայրի նշանակությունը:

բ. Դադի «եկեղեցուն» հարավից կից բազիլիկ եկեղեցին (ավելի վաղ կառույց է, քան Դադի «եկեղեցին», փաստարկները՝ ստորև) հյուսիսային պատի վրա ունեցել է 70 սմ լայնությամբ մուտք[43], որն այժմ Դադի «եկեղեցու» կողմից փակված է, սակայն

43 **Այվազյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 200:

Պաշտամունքային կառույցները հարավ-արևմուտքից

Սբ. Դադի «եկեղեցու» հյուսիսային ավանդատանը հարող հատվածը

բազիլիկ եկեղեցու կողմից խորը (110 սմ) խորշի ձևով բաց է, և երևում են մուտքի վերևի կամարն ու ներքև իջնող պատի անկյունները: Հայկական ճարտարապետության մեջ քիչ են հանդիպում հյուսիսային մուտք ունեցող եկեղեցիներ: Նմանատիպ հորինվածքը թելադրվում է կա՛մ տեխնիկական հնարավորություններից (երբ չի հաջողվում մուտք



Սբ. Դադի «եկեղեցու» հարավային ավանդատանը հարող հատվածը

բացել արևմուտքից կամ հարավից), կա՛մ պայմանավորված հոգևոր որևէ արարողակարգով: Այս դեպքում կարող ենք ենթադրել (ինչպես և տեսանք Կաթողիկեի պարագայում), որ բազիլիկ եկեղեցու՝ հյուսիսային մուտք ունենալը պայմանավորված է եղել այդ կողմում գտնվող Դադի գերեզմանի և հնագույն կառույցի գոյության հետ:

Սբ. Դադի «եկեղեցին» կիսաշրջան խորանով, 22,2 մ x 11,46 մ չափերով միանավ բազիլիկ է: Խորանի երկու կողմերում ունի ավանդատներ: Կառույցը զուրկ է որևէ ծածկույթից, թաղով են ծածկված միայն ավանդատները: Տեղանքի թեքության պատճառով հյուսիսային որմը ծառայում է որպես հենապատ: «Եկեղեցու» հյուսիսային և հարավային պատերը ջլատված են բավական առաջ եկած (80 սմ) երեքական որմնասյունով: 5 մ բարձրությամբ այս որմնասյունե-

Սբ. Դադի «եկեղեցու»՝ փոքր գավիթ տանող հարավային մուտքը

րը երկայնական ուղղությամբ որմնակամարներով կամ լայնական կամարներով միմյանց կապված չեն, իսկ նույն բարձրությամբ պահպանված պատերի վրա թաղի որևէ հետք չի նկատվում:

Ժամանակին այս փաստերը նկատելով՝ Մ. Հասրաթյանն իրավացիորեն նշել է եկեղեցու անավարտ մնալու հավանականության մասին[44]: Այս

44 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 50:

ենթադրությունը հաստատելու համար բերենք նոր փաստարկներ: Խորանի հարավային պատի վրա պահպանվել են ավանդատան երկու ծածկասալեր, որոնք կախվում են խորանի մեջ, հետևաբար պատերը չէին կարող շարունակվել դրանցից բարձր: Եկեղեցու ներսում փլված ծածկի բեկորների բացարձակ բացակայությունը նույնպես ենթադրում է, որ կառույցը զուրկ է եղել որևէ ծածկույթից:

Հուշարձանը հիմնականում կառուցված է կոպտատաշ քարատեսակներով և կրաշաղախով: Որմնասյունները և նախախորանի պատերի խորշերը սրբատաշ կրաքարից են: Որմերում առկա են մեծ ու փոքր որմնախորշեր, որոնցից հյուսիսային պատի խորանին հարող մասի (նախախորանի) երկու խորշերից ձախակողմյանի մեջ պահպանվել է մի անցք, որտեղից, ըստ երևույթին, ջուր է հոսել: Այն հավանաբար բերվել է համալիրի հյուսիսային մասում գտնվող մատուռի տարածքից բխող աղբյուրից՝ վանքի կարիքների համար, իսկ խորշը, որոշ վերապահումով հնարավոր է, որ ծառայել է որպես մկրտարան:

Պատուհաններ ունեն միայն ավանդատները՝ արևելքից: Մուտքերը երեքն են, երկուսը՝ հարավից, մեկը՝ արևմուտքից: Արևմտյան՝ ժամատան մեջ և հարավային՝ գավթի մեջ բացվող մուտքերը հարդարված են զարդանախշերով:

Ինչ վերաբերում է կառուցման ժամանակագրությանը, ապա գիտական գրականության մեջ գրեթե բոլոր ուսումնասիրողները Դաղի «եկեղեցին» թվագրել են ԺԳ դարով, սակայն սխալմամբ նշել, որ միանավ բազիլիկ եկեղեցին, գավթով հանդերձ, հարավից և ժամատունն արևմուտքից կցվել են «եկեղեցուն»[45]:

Իրականում Դաղի «եկեղեցին» է կցակառուցվել միանավ բազիլիկին և ժամատանը, որը կարելի է վստահորեն պնդել՝ ուսումնասիրելով «եկեղեցու» պատերի հաստությունները և կառույցների միացման հանգույցները. Դաղի «եկեղեցին» բավական մեծ չափերի (ներսում՝ 20,7 x 9,4 մ) բազիլիկ է, որը կանգուն մնալու համար պետք է հաստ և հուսալի պատեր ունենար: Դրան հակառակ՝ արևմտյան պատի հաստությունն ընդամենը 55 սմ է: Նման հաստություն ունի նաև հարավային պատի արևելյան՝ բազիլիկին կից հատվածը: Այսքան բարակ պատեր ունեցող կառույցն ինքը պետք է հենվեր, այսինքն՝ կցվեր ուրիշ կառույցների, որոնք և նշված որմերի ետևում գոյություն ունեն՝ ի դեմս ժամատան և միանավ բազիլիկի: Վերջիններիս որմերի հաստությունը 1,2 մ է: Ուսումնասիրելով նշված երկու կառույցների հետ «Դաղի եկեղեցու» միացման հանգույցները՝ պարզորոշ նկատվում է նաև, որ վերջինիս պատի շարվածքի քարերն ուղղակի հպվում են ժամատան և բազիլիկի պատերին: Հետևաբար Դաղի «եկեղեցին» կառուցվել է այդ շինություններից, մասնավորապես՝ ժամատան կառուցումից՝ 1224 թ. հետո:

ԺԳ դարի 60-90 թվականներին «եկեղեցին» արդեն գոյություն ուներ, որովհետև հյուսիսային ա-



Սբ. Դաղի «եկեղեցու» հյուսիսային ավանդատան թաղի արձանագրության լուսանկարն ու գրչանկարը

վանդատան թաղի սվաղի վրա ուռուցիկ տառերով առկա է նշյալ թվականներում վանքի առաջնորդ տեր Աթանասի արձանագրությունը[46].

Տ(է)ր Աթանաս:

Կաթողիկեի հյուսիսային մուտքի փակման թվականով մոտավորապես կարելի է ճշտել Դաղի «եկեղեցու» կառուցման թվականի վերին սահմանը, որովհետև, ինչպես արդեն ասվել է, պատճառը եկեղեցու» կառուցումն էր: Մուտքի փակման այս թվականը ճշտում է Դաղի «եկեղեցու» կառուցման ժամանակի վերին սահմանը, այն է՝ մինչև 1263 թ.:

Կառույցի թվագրման այս սահմանն ավելի որոշակիանում է հետևյալով. ժամատան հարավային մուտքի կամարին՝ սվաղի վրա, ուռուցիկ տառերով արձանագրված տեր Գրիգորեսը, հնարավոր է,

45 **Մկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 40-41: Տե՛ս նաև **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 50-51: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 93, 102: **Մանամյան Հ.**, Դաղի վանքի կառուցապատման փուլերը ըստ շինարարական շերտագրության, «Հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողով. զեկուցումների դրույթներ», Երևան, 2005, էջ 150-155: Հեղինակն իրավացիորեն Սբ. Դաղի «եկեղեցին» համարում է ժամատանը կցված, սակայն սխալմամբ փոքր բազիլիկը նույնպես համարում է կցված Սբ. Դաղի «եկեղեցուն»:

46 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 51:

տեր Աթանասի եղբայրն է, որոնք միասին շինարարական գործունեություն են ծավալել: Ըստ երևույթին, եղբայրներն իրականացրել են նաև ժամատան և Դաղի «եկեղեցու» սվաղման աշխատանքները, որի պատճառով երկուսի անուններն էլ ելնդագրված են սվաղով:

Այս արձանագրություններն առիթ տվեցին հանգելու տրամաբանական մի հետևության, որը զուգորդվում է պատմական և կառուցողական փաստացի նյութերի հետ, այն է՝ տեր Աթանասը չի կառուցել Դաղի ներկայիս «եկեղեցին» (նրա թողած արձանագրության պատճառով կարելի է կարծել, որ նա է եկեղեցու կառուցողը), այլ կատարել է սոսկ սվաղման, հնարավոր է նաև վերանորոգման աշխատանքներ, այլապես կթողներ շինարարական ավելի խոսուն արձանագրություն, ինչպես արել է այլ դեպքերում (օրինակ՝ զանգակատան խաչքարերի և «զտներ եւ զսրահս»-ի արձանագրություններում): Մինչդեռ տվյալ դեպքում ելնդագիր արձանագրությունն իրականացվել է աննկատ տեղում՝ ավանդատան թաղի սվաղի վրա:

Այստեղից էլ այն կռվանը, որ Դաղի «եկեղեցին» կարող էր կառուցվել մինչև տեր Աթանասի առաջնորդության սկզբնական տարիները՝ 1260-ական թթ.:

Դաղի «եկեղեցու» կառուցման ժամանակագրությունն ուսումնասիրելուց հետո անհրաժեշտ է անդրադառնալ նաև նրա գործառական նշանակությանը, քանի որ բոլոր ուսումնասիրողների կարծիքով կառույցը եկեղեցի է:

Հարկ ենք համարում նշել, որ Դաղի «եկեղեցու» գործառական նշանակությունը չի համապատասխանում եկեղեցու գործառույթին (ըստ այդմ էլ եկեղեցի տերմինը գործածում ենք չակերտներով), որն էլ հիմնավորում ենք հետևյալ կերպ.

ա. Կառույցն ունի անսովոր երկար (4,06 մ) նախախորան, որը աղոթասրահից բարձրացված է մինչև խորանի մակարդակը (1,10 մ), ինչը չի հանդիպում միջնադարի որևէ այլ եկեղեցում: Նույնիսկ վաղ միջնադարի բազիլիկներում (Եղվարդ, Դվին, Մրեն, Տեկոր, Բագավան և այլն) խորանները, որոնք ունեին ձգված նախախորաններ, ցածր էին կառուցվում:

բ. Սրահի և նախախորանի հյուսիսային և հարավային պատերի մեջ առկա են եկեղեցիներին ոչ հատկանշական մեծ ու փոքր որմնախորշեր (6-ը՝ նախախորանում, 4-ը՝ սրահում): Առավել հետաքրքրական է նախախորանի հյուսիսային պատի ձախակողմյան խորշը, որ մյուսների համեմատ առավել զարդարուն է և, ինչպես արդեն նշվել է, կենտրոնական մասում ունի կլոր անցք, որտեղ կարող էր կավե ջրատար խողովակ տեղադրված լինել, ինչը նույնպես կասկածի տակ է դնում կառույցի՝ որպես եկեղեցի գործառույթը:

2007 թ. պեղումների ժամանակ խորանում հայտնաբերված դիաթաղումը

գ. 2007 թ. կառույցի խորանում կատարված հետախուզական պեղումներով կոթողի արևելյան կողմում հայտնաբերվեց դիաթաղում[47], ինչը չէր կարող լինել եկեղեցու պարագայում:

դ. Կառույցի շինարարությունը չի ավարտվել, մնացել է առանց ծածկի կամ հենց այդպես է նախագծվել, իսկ եկեղեցու գործառույթի պարագայում այն պետք է ծածկ ունենար:

ե. Բոլոր ժամանակներում հայ առաքելական եկեղեցիները կառուցվում էին արևելք-արևմուտք առանցքով և խորանի կենտրոնում ունեին լուսամուտ, որը թերևս կապվում է արևի լույսի, այսինքն՝ Քրիստոսի փրկարար լույսի հետ: Տվյալ դեպքում «եկեղեցին» լուսամուտ չունի, չնայած որ տեխնիկապես միանգամայն հնարավոր է լուծել այդ խնդիրը:

զ. Կառույցը չունի սուրբ սեղան, որն անհրաժեշտ է հոգևոր ծիսակատարությունների համար: Բեմի կենտրոնում տեղադրվածը մեծածավալ կո-

47 Տե՛ս Հ. Պետրոսյանի՝ 2007 թ. ՀՃՈՒ հ/կ.-ին հանձնած պեղումների հաշվետվությունը, որտեղ վերծանված է նաև կոթողի վրայի արձանագրությունը. «...իսկ խաչաքանդակներով ու հավանական է տարեթիվ ներկայացնող արձանագրությամբ՝ («Թ:ՊԺ:»-1361 կամ «ՊԺԹ»-1370») վերաբերում է 13-14-րդ դարերին...»:

Բազիլիկ եկեղեցու և փոքր գավթի տանիքներն արևմուտքից, բազիլիկ եկեղեցու խորանը

թող է՝ խաչաքանդակներով և արձանագրությամբ, որի վերնամասում փորվածք է արված, ըստ երևույթին, խաչքար տեղադրելու համար: Կոթողը չէր կարող ծառայել որպես սբ. սեղան, քանի որ ունի մարդահասակ՝ 1,9 մ բարձրություն:

Բերված փաստարկներով հավաստում ենք, որ Դաղի «եկեղեցին» իր գործառույթով եկեղեցի չէ: Այս համոզմունքը դիտարկելով 2008 թ. պեղումներից հայտնաբերված դամբարանախցի, ինչպես նաև ժամատնից, փոքր գավթից և բազիլիկ եկեղեցուց դեպի Դաղի «եկեղեցի» բացվող մուտքերի՝ որպես սրբավայր տանող ճանապարհի գոյության հետ համատեղ՝ կարող ենք ասել հետևյալը. Դաղի «եկեղեցու» մեջ է այն սրբացված տարածքը, որի շուրջը դարերի ընթացքում ձևավորվել է վանական համալիրը, և ներկայիս Դաղի «եկեղեցի» կառույցը ծառայում է որպես դամբարան-սրբատեղի:

Բազիլիկ եկեղեցի. ներկայումս պահպանված ամենավաղ վերգետնյա կառույցն է: Նախնական հորինվածքով եղել է արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված, ուղղանկյուն սրահով և ուղղանկյուն աբսիդով միանավ (չափերը՝ 9,7 մ x 5,9 մ) կառույց: Իրականացված է կոպտատաշ քարերով և կրաշաղախով: Պատերը սվաղված են, հատակը՝ կրաշաղախով հարթեցված: Մուտքերը բացված են արևմուտքից, հարավից և հյուսիսից, ընդ որում, հյուսիսայինը, ինչպես տեսանք, փակվել է Դաղի սրբատեղին[48] կառուցելիս: Երեք մուտքերն էլ վերին մասում եղել են կամարաձև: Հետագայում հարավայինի և արևմտյանի կամարաձևությունը ձևափոխվել է ուղղանկյան:

Աբսիդը, որն իր լայնությամբ հավասար է սրահին, անջատված է նրանից մեկ զույգ ուղղանկյուն որմնասյուներով, իսկ երկու զույգ որմնասյուներով ջլատված սրահի ներքին տարածությունը հետագայի վերափոխման արդյունք է: Ընդ որում, որմնասյուների կառուցողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը պարզում է, որ դրանք հետագայում են հավելվել: Մասնավորապես՝ որմնասյուներն օրգանական միասնություն չեն կազմում բազիլիկի պատերի հետ, այլ պարզապես հպված են և ոչ թե ագուցված, ինչպես կլիներ ի սկզբանե միասնաբար կառուցված լինելու դեպքում: Այժմ էլ հստակ տեսանելի են որմնասյուների և պատերի միացման մասերում ուղղահայաց, չընդհատվող կարանները: Բացի այս՝ որմնասյուներից մեկը մասամբ ծածկում է հարավային մուտքը, ինչը նույնպես չէր կարող լինել եկեղեցու միասնական հորինվածքի դեպքում: Որմնասյուներ ավելացնելու անհրաժեշտություն է առաջացել հավանաբար բազիլիկի պատերն ամրացնելիս և թաղի ու ճակտոնի մակարդակները բարձրացնելիս: Այս ենթադրու-

48 Հաշվի առնելով վերը ներկայացված Դաղի «եկեղեցու» ոչ որպես եկեղեցի, այլ որպես սրբատեղի գործառույթի փաստարկումը՝ այսուհետ օգտագործում ենք Դաղի սրբատեղի եզրը:

թյան հիմք են տալիս պատերի շարվածքի մեջ նկատվող տարբերությունները և թաղի ու որմնասյուների միաձույլ կառուցվածքը: Միևնույն ժամանակ բազիլիկի հարավային պատի 120 սմ հաստությունը վերևում՝ սյունասրահի թաղից բարձր մակարդակում, բարակում է և կազմում 65 սմ: Այս փոփոխությունը, անշուշտ, պայմանավորված է սյունասրահը և գավիթը բազիլիկին կցելու իրողության հետ (կցակառուցման փաստարկները՝ քիչ ներքև): Փոփոխվել՝ բարձրացվել է նաև արևմտյան պատուհանի մակարդակը: Ներկայացվածից հետևում է, որ բազիլիկը ենթարկվել է մեծածավալ վերակառուցման, որի ժամանակ սրահում ավելացվել են երկու զույգ որմնասյուներ, ինչպես նաև վերակառուցվել՝ բարձրացվել է եկեղեցու թաղածածկը:

Եկեղեցու հարավային պատն արտաքինից ունի որմնասյուներ, որոնք այժմ լինելով սյունասրահի ներքին տարածության մեջ՝ ընկալվում են որպես սյունասրահի տարրեր: Միգուցե նաև սա է պատճառը, որ, ըստ մի ենթադրության, սյունասրահն ավելի վաղ է կառուցվել, քան բազիլիկը[49]: Իրականում որմնասյուները միաձույլ կառուցված են բազիլիկի հարավային պատի հետ և հուշում են վերջինիս հարավային կողմում նրա մի մասը կազմած երբեմնի կառույցի մասին: Դա կարող էր լինել սյունազարդ գավիթ, որը քանդվել է Կաթողիկեի կառուցման ժամանակ՝ նախքան ներկայիս սյունասրահի կառուցումը:

Կառուցողական առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ բազիլիկ եկեղեցուն կից բոլոր կառույցները՝ Դաղի սրբատեղին, փոքր գավիթը, սյունասրահը և Կաթողիկե եկեղեցին, հետագայում են կցակառուցվել:

Ինչ վերաբերում է բազիլիկ եկեղեցուն արևմուտքից կցված ուղղանկյուն հատակագծով գավթին, ապա այստեղ ևս պարզ երևում են պատերի միացման տեղերում կցակառուցումների կարանները:

Կցակառուցումների վերոնշյալ փաստերը ցույց են տալիս, որ բազիլիկ եկեղեցին հիմնվել է իրեն կից բոլոր կառույցներից ավելի վաղ՝ թերևս 1143 և 1145/46 թվականներից առաջ, քանի որ վերակառուցման անհրաժեշտություն կարող էր ծագել Չոլի զորապետի գործած ավերածությունների հետևանքով[50]:

Փոքր գավիթ. բազիլիկ եկեղեցուն կցակառուցված գավիթն ուղղանկյուն հատակագծով թաղակապ սրահ է: Շինանյութը կազմում են կոպտատաշ տեղական քարատեսակները և կրաշաղախը: Պատերը և թաղը սվաղված են եղել: Լուսավորվում է թաղի վրայի երկու անցքերից (երդիկ): Այս գավթի մեջ է բացվում Սբ. Դաղի սրբատեղիի հարավային

Փոքր գավթի ներքին տեսքը դեպի արևելք

շքամուտքը: Բազիլիկ եկեղեցու հետ հաղորդակցվում է վերջինիս արևմտյան մուտքով, իսկ հարավային կողմից մուտք ունի դեպի սյունասրահ: Կառույցի ներքին չափերն են՝ 8,23 x 3,68 մ: Ծածկված է աննշան կորություն ունեցող սլաքաձև թաղով, ընդ որում, սլաքի անկյունը բավական մեծ է, ուստի, կարելի է ասել, երկթեք թաղ է՝ նման սյունասրահի թաղի հորինվածքին:

Գավթի ծածկը նախնականը չէ, այլ վերակառուցված է, որն արտահայտվում է պատերից թաղին ոչ սահուն անցման մասում:

Վերակառուցման ավելի ակնառու փաստարկ՝ նախնական քիվերի հորինվածք, հայտնաբերվեց վերականգնման շինարարական աշխատանքների ընթացքում (այդ մասին քիչ հետո): Գավթի հյուսիսային պատը կազմում է Դաղի սրբատեղիի հարավային պատի արևմտյան մասը և ընդհանուր է երկուսի համար: Այստեղից կարելի է եզրակացնել, որ փոքր գավիթը և Դաղի սրբատեղին կառուցվել են մի փուլով կամ նույնիսկ միաժամանակ:

Փոքր գավթի արևելյան պատ է ծառայում բազիլիկի արևմտյան ճակատը, իսկ վերջինիս և գավթի հարավային որմերը միասին՝ որպես սյունասրահի հյուսիսային պատ (փաստարկները՝ համապատասխան տեղում):

Փոքր գավիթն արևմտյան ճակատում ունեցել է պատուհան, որն այժմ փակված է, սակայն հարթ պատի շարվածքի մեջ երևում են եզրագծերը: Ըստ երևույթին, պատուհանը փակվել է զանգակատան կառուցումից հետո, որով և գավթի արևմտյան ճակատը փաստորեն լուսազրկվել է:

Սյունասրահ. արևելք-արևմուտք ուղղությամբ, 18,7 մ x 5,7 մ չափերով թաղածածկ, հարավային կողմից սյունակամարաշարով սրահ է: Ձգվում է Կաթողիկեի արևմտյան ճակատից մինչև զանգակատուն և կցակառուցված է բազիլիկ և Կաթողիկե եկեղեցիներին: Ակնառու է, որ կառուցվել է Կաթո-

49 **Սանամյան Հ.**, նշվ. գեկ., էջ 151:
50 **Ուլուբաբյան Բ.**, նշվ. աշխ., էջ 117:

Սյունասրահի ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք

ղիկեից հետո: Մենք ևս համակարծիք ենք բոլոր ուսումնասիրողների հետ, ուստի հարկ չկա անդրադառնալ խնդրի մանրամասներին, իսկ բազիլիկին կցակառուցվելը փաստվում է սյունասրահի հյուսիսային պատի ուսումնասիրությամբ, որի արևելյան կեսը բազիլիկի հաստ պատն է, իսկ արևմտյան կեսն ընդհանուր է փոքր գավթի հետ: Այս երկու մասերի կցման ուղղահայաց կարանը, որը պարզ նկատելի է, հենց այն է, որն առաջացել է գավիթը բազիլիկ եկեղեցուն կցակառուցելիս: Փաստորեն սյունասրահը հյուսիսային միաձույլ պատ չունի, քանի որ արևելյան կեսի դեր է կատարում բազիլիկը:

Փոքք գավթի հարավարևմտյան և սյունասրահի հյուսիսարևմտյան անկյուններն օրգանապես միաձույլ են կառուցված, այսինքն՝ ունեն մեկ ընդհանուր պատ, հետևաբար սյունասրահը և փոքր գավիթը համաժամանակյա կառույցներ են: Այն, որ գավիթը և Դադի սրբատեղին էլ մի փուլով են կառուցված, հետևում է, որ սյունասրահը, փոքր գավիթը, Դադի սրբատեղին միաժամանակյա կառույցներ են՝ հիմնված ԺԳ դարի կեսերին՝ մինչև 1260-ական թվականները:

Սյունասրահի ծածկն անկյունային մեծ բացվածքով և փոքր բարձրությամբ սլաքաձև թաղ է, որի կորությունները այնքան փոքր են, որ մոտենում են ուղիղ գծերի: Այն հյուսիսային կողմում նստում է վերոհիշյալ որմին, իսկ հարավայինում՝ հինգ հաստ՝ 1,5 մ տրամագիծ ունեցող կլոր և երկու ուղղանկյուն կտրվածքի սյուներով (արևելյան ծայրինը՝ Կաթողիկեին կցվածը, այժմ քանդված է) կամարաշարին: Ի դեպ, կլոր սյուների հաստությունը կոնստրուկտիվ կրողունակությամբ (թաղը կրելու համար) բացատրել դժվար է, քանի որ այդպիսի սյուները կարող էին կրել շատ ավելի ծանր բեռ: Հնարավոր է, որ դրանք ինչ-որ ժամանակ վերակառուցման հետևանքով են ձևափոխվել:

Սյունասրահը ենթարկվել է հետևյալ վերակառուցումների. կամարաշարի վեց կամարներից արևմտյան ծայրինը նստում է ուղղանկյուն կտրվածքով սյան վրա, որը կցված է արևմտյան պատին (երևում է կցման կարը): Հարավային ճակատում, արևմտյան և արևելյան ծայրերում, կամարաշարի բարձրությունից մի փոքր վերևի նիշով պահպանվել են պատի հարթությունից դուրս ցցված ուղղանկյուն քարեր (ինչպիսիք կան գմբեթավոր փոքր եկեղեցու ճակտոններին՝ անմիջապես կղմինդրածածկի տակ), որոնց վրա պետք է նստեին հարթ սալեր և միասին կատարեին նախնական տանիքի քիվերի դերը: Ավելի վեր պատի հարթությունը դեռ շարունակվում է, հետևաբար այն վերակառուցման արդյունք է, մանավանդ որ շարվածքով էլ տարբերվում է նույն պատի ստորին հատվածի շարվածքից: Վերակառուցմամբ փոխվել՝ բարձրացվել է սյունասրահի տանիքի մակարդակը: Հետաքրքրական է,

Սյունասրահի և զանգակատան կցման հատվածը

որ այն կատարվել է զանգակատունը սյունասրահին կցելուց հետո, որովհետև նշված պատն ընդհատվում է զանգակատան արևելյան որմով, որն իր հերթին նստած է սյունասրահի արևմտյան սկզբնական պատին:

Ենթադրում ենք, որ սյունասրահը նախապես եղել է կղմինդրածածկ, որովհետև նկատված դուրս ցցված քարերով և նրանց վրա նստող հարթ սալերով հորինվածք ունեցող գմբեթավոր փոքր եկեղեցին կղմինդրածածկ է:

Անփոփոխ չի մնացել նաև թաղը: Այժմ այն ունի ընդամենը երկու թաղակիր կամարներ, որոնք հորինվածքով չեն համապատասխանում հարավային գլանաձև հինգ և ուղղանկյուն սյուներին ու հյուսիսային որմնասյուներին: Չնայած որ գլանային սյուները այժմ բավական թեքված են դեպի դուրս, որը, վստահորեն կարելի է ասել, հետագայի ձևախեղումների արդյունք է, սրահի թաղի վրա չկան նկատելի ճաքեր, ինչն անխուսափելի կլիներ, եթե թաղը կառուցված լիներ նախքան սյուների թեքվելը: Հետևաբար կարելի է նշել, որ ներկայիս թաղը կառուցվել է նախնական թաղի վնասվելուց հետո: Սրահի ամբողջ երկարությամբ միմյանցից մոտ 50 սմ հեռավորության վրա գտնվող անցքեր են պահպանվել ներկայիս թաղի հիմքի մակարդակից քիչ ներքև: Դրանք, ամենայն հավանականությամբ, փայտե ծպեղնատքերի բներ են, որոնք նախնական փայտածածկի գոյության վկայությունն են (բնական է, որ Կաթողիկեի արևմտյան ճակատին փայտածածկից հետքեր կարող էին չպահպանվել): Հետևաբար նախնական թաղը եղել է ոչ թե քարաշեն, այլ փայտյա, իսկ տանիքը՝ կղմինդրապատ:

Վերը նկարագրված վերակառուցումները, կառուցողական առանձնահատկությունները և պատմական տվյալները թույլ են տալիս կատարել որոշակի եզրահանգումներ[51]:

Նախ հարկ է նկատի ունենալ, որ սյունասրահի արևելյան կեսի տեղում, ինչպես վերը նշվեց, եղել է բազիլիկին կից և նրա մի մասը կազմող կառույց՝ սյունազարդ գավիթ, որը Կաթողիկեի կառուցման ժամանակ (1214 թ.) թերևս խարխլված և քայքայված լինելու պատճառով քանդվել է: Ներկայիս սրահը կառուցվել կամ հիմնավերակառուցվել է մինչև 1260-ական թվականները և ունեցել է կղմինդրապատ փայտածածկ:

Այնուհետև զանգակատան կառուցումից հետո՝ հավանաբար վերջինիս վերակառուցման ժամանակ, նորից է ձևափոխվել՝ ձեռք բերելով քարե ծածկ և մի փոքր ավելի բարձր մակարդակի հասցված տանիք:

Ինչ վերաբերում է սրահի և փոքր գավթի թաղերի վերակառուցմանը, ապա ճարտարապետական միանման լուծումներն ու շինարարական առանձնահատկությունները վկայում են, որ աշխատանքներն իրականացվել են միաժամանակ:

Վերևում հիշատակված պաշտամունքային կառույցների որմերը հիմնականում վտանգավոր ճաքեր կամ շեղումներ չունեն: Առավել թուլացած էր սյունասրահի հարավային պատը, իսկ բոլոր կառույցների որմերի վերնամասերը քայքայված էին: Սբ. Դաղի սրբատեղիի սրբատաշ հատվածների երեսապատը մեծ մասամբ թափված էր (միտումնավոր պոկված, թալանված): Բազիլիկի, փոքր գավթի և սյունասրահի պատերը ներսից սվաղված են եղել, որն այսօր հիմնականում քայքայված և մասամբ թափված է: Առաջին երկուսի թաղերը կայուն վիճակում են և դեֆորմացված չեն, բայց, քանի որ տանիքածածկերը բացակայում էին, թաղերի կրաշաղախը քայքայվել էր անձրևաջրերից:

Սյունասրահի թաղի արևմտյան հատվածը դեֆորմացված էր, իսկ կրաշաղախը՝ նույնպես քայքայված: Բոլոր կառույցների տանիքածածկերը բացակայում էին, դրանց փոխարեն թաղերը պատված էին բուսականությամբ: Սբ. Դաղի սրբատեղիից զատ՝ կառույցների հատակները սվաղով հարթեցված են եղել, որոնցից պահպանվել էին առանձին հատվածներ:

Նյութական միջոցների բացակայության պատճառով հուշարձանախմբի վերականգնման գործընթացը ձգձգվում էր: Մինչև 2006 թ. նոյեմբեր ամիսը դեռ հայտնի չէր՝ կարելի՞ էր շարունակել վերականգնման ծրագիրը, թե՞ ոչ: Այնուամենայնիվ, 2006 թ. ամռանը եղբորս՝ Աշոտ Այվազյանի հետ կատարվեցին կառույցների չափագրական աշխատանքներ այն հույսով, որ ձմռանը հնարավորություն լիներ մշակելու նախագիծը: Միևնույն ժամանակ՝ 2006 թ., Ա. Հախնազարյանի և Պ. արք. Մարտիրոսյանի առաջարկությամբ և աջակցությամբ սյունասրահի հատակը սալարկվեց բազալտով:

2006 թ. նոյեմբերին Էդիլ Հովնանյանը խոստացավ օգնել վերականգնման ծրագրի հետագա իրագործմանը և որոշ գումար հատկացրեց, իսկ 2007 թ. հունիսից ամբողջությամբ ստանձնեց այս խմբի կառույցների վերականգնման մեկենասությունը:

2006-2007 թթ. ձմռանը մշակվեցին Դաղի սրբատեղիի, բազիլիկ եկեղեցու, փոքր գավթի և սյունասրահի էսքիզային նախագծերը և աշխատանքային գծագրերի մեծ մասը: Դեռ չափագրության ընթացքում պարզ էր, որ Դաղի սրբատեղիի ներսում պեղման աշխատանքների կարիք կար, որի պատճառով նախագծի որոշ հատվածներ, որոնց լուծումը կախված էր պեղումների արդյունքներից, նախատեսվեց լրացնել հետագայում:

51 Սյունասրահի հարավային պատին եղել է շինարարական մի արձանագրություն. «*Կամաւն ա(ստուծոյ). ես՝ Սնպատ, որդի Վախտանկա, շինեցի զգաւիթս եկեղեցւոյս եւ ետու զՇինաձոր իւր սահմանովն եւ զԴոփուն տափս յեկեղեցիս*»: Այն այժմ չի պահպանվել: Հնարավոր է, որ առավել ճշգրտեր ժամանակագրությանն առնչվող որոշ հարցեր (տե՛ս **Ջալալյանց Ս.**, նշվ. աշխ., էջ 227: Դիվան..., էջ 214: **Ուլուբաբյան Բ.**, նշվ. աշխ., էջ 149: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 120):





Պաշտամունքային կառույցների կենտրոնական մասի կառույցների տանիքի հատակագիծը և կտրվածք դեպի արևելք

2007 թ. նախագիծը հաստատվեց ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչության գիտխորհրդի նիստում:

Վերականգնման նախագիծ. այն մշակվեց՝ նպատակ ունենալով պահպանել կառույցները հետագա քայքայումից և հաշվի առնելով գործածման հետագա հնարավորությունը:

Սբ. Դադի սրբատեղի. նախատեսվում էր ամրակայել, իսկ որոշ հատվածներ՝ մասնակի վերականգնել: Պատերի վերին քայքայված մասերն անհրաժեշտ էր քանդել-վերաշարել և նրանց վրա ավելացնել մեկից երկու նոր քարաշար՝ ամրակայման նպատակով, իսկ սրբատաշ տուֆ քարով՝ վերականգնել որմնասյուների երեսապատը և պատերի խորշերի այն հատվածները, որտեղ կարելի էր վերստեղծել ճարտարապետական նախնական լուծումները: Ավանդատների քայքայված սվաղը նախատեսվում էր քանդել և նորից սվաղել՝ անձեռնմխելի պահելով հյուսիսային ավանդատան



Պաշտամունքային կառույցների կենտրոնական մասի կառույցների կտրվածքները և ճակատները

թաղի՝ տեր Աբանասի հիշատակումով հատվածը, իսկ հատակը՝ սալապատել Վանք գյուղի ամուր և գույնով ավելի համահունչ քարատեսակով, որով իրականացվել էր Կաթողիկեի հատակը: Սակայն քարհանքից քարի ձեռքբերումը բարդացել էր, որի պատճառով էլ ի վերջո նախատեսվեց բազալտե սալահատակ:

Սալապատման աշխատանքները պետք է իրականացվեին նախապես պեղումներ կատարելուց հետո: Ավանդատների ծածկն անհրաժեշտ էր մաքրել բուսածածկույթից և ամրացնել կրային բարդ շաղախով՝ միաժամանակ ապահովելով ջրահեռացումը ջրատար առվակով: Սրբատեղիի հյուսիսային կողմի ջրերի հեռացման համար նախատեսվում էր պատի հետևում տեղադրել արևելյան թեքությամբ ջրատար կիսախողովակ:

Բազիլիկ եկեղեցի. որոշվեց իրականացնել ամբողջական վերականգնում՝ պահպանելով նախկինից առկա վերակառուցումները: Ըստ նախագծի՝ պետք է լրացվեին պատերի վերին շարքերը, վերա-

Բազիլիկ եկեղեցու արևելյան ճակտոնը և Սբ. Դադի սրբատեղիի հարավային ավանդատան տանիքը

կանգնվեին երկթեք ճակտոնները և քիվերը: Ճակտոնների թեքությունները որոշվեցին՝ հիմք ընդունելով արևելյան ճակատում պահպանված երեսապատի մի քանի քարերի թեքությունները: Տանիքն անհրաժեշտ էր պատել տուֆե ծածկասալերով: Սբ. Դադի սրբատեղիի հետ կցման մասում ջրահեռացումը կատարվելու էր ջրատար առվակով: Ներսում նախատեսվել էր հատակը սալապատել՝ պահպանելով նախնական կրաշաղախե հատակի մակարդակը, նույն սկզբունքով վերականգնել խորանի հատակը, որտեղ նույնպես առկա էին խորանի կրաշաղախե հատակի որոշ հատվածներ, ինչպես նաև վերականգնել այնտեղ բարձրացող քայքայված աստիճանները:

Փոքր գավիթ. որոշվեց նույնպես ամբողջացնել. տանիքը կառուցել միաթեք և պատել քարե ծածկասալերով (հետագայում վերականգնման շինարարական աշխատանքների ժամանակ տանիքի լուծումը փոխվեց և կառուցվեց երկթեք), ներսում մաքրել պատերը և թաղը թուլացած կրասվաղից, կարանախցել պատերը, իսկ թաղը նորից սվաղել: Չնայած Սբ. Դադի սրբատեղիի հատակը 1,13 մետրով բարձր է գավթի հատակից, սրբատեղի տանող մուտքի առջև չէր պահպանվել աստիճանի որևէ հետք (հնարավոր է, որ ժամանակին այստեղ տեղադրված է եղել փայտե աստիճան), սակայն ներկայումս անհրաժեշտ է ապահովել այս երկու կառույցների փոխադարձ կապը: Այդ նպատակով որոշվեց կառուցել աստիճաններ, իսկ ըստ նախագծի՝ վերականգնել շքամուտքի բացակայող հատվածները պահպանված մասերի համաբանությամբ (անալոգիա), իսկ հատակը՝ սալարկել բազալտով:

Սյունասրահ. պահպանելով վերակառուցումների բոլոր հետքերը՝ նույնպես նախատեսվում էր վերականգնել ամբողջությամբ: Երկթեք լանջերով նախագծված ծածկի համար ընտրվել էր տուֆե հարթ սալաքարեր:

Սյունակամարաշարի արևելյան ծայրի՝ Կաթողիկեին հպված, սակայն այժմ բացակայող որմնասյունը նախատեսվում էր չվերականգնել, որպեսզի չծածկվեր Կաթողիկե եկեղեցու այդ հատվածի վիմագրությունը: Նույն նպատակով նախատեսվում է կամարի միայն արևմտյան կեսը բերել նախնական տեսքի, իսկ մյուս կեսը, թեք, ուղղագծորեն բարձրանալով, միանում է Կաթողիկեի պատին՝ չծածկելով արձանագրությունները, միաժամանակ շեշտելով նման կերպով իրականացնելու նպատակը:

Սյունասրահի բավականաչափ վնասված թաղի վերականգնման համար մշակվեց կոնստրուկտորական նախագիծ (Ս. Նալբանդյան), որի համաձայն՝ կատարվելու էր երկաթբետոնե թաղանթապատում ամբողջ թաղի մակերեսով:

Հարկ է նշել, որ հատակը դեռևս 2006 թ. սալապատվել էր:

Պաշտամունքային կենտրոնական կառույցների վերականգնման շինարարական աշխատանքները. սկսվեցին 2007 թ. հուլիս ամսից, սակայն մինչ այդ, ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ էր պեղել Սբ. Դաղի սրբատեղին: Այդ նպատակով հրավիրվեց հնագետ Համլետ Պետրոսյանը:

Պեղումներից ակնկալվում էր.

1. Ճշտել խորանի և նախախորանի սկզբնական հորինվածքը, հատակի նիշերը, աստիճանների առկայությունն ու տեղը.

2. Հայտնաբերել տեղում ակնկալվող վաղ կառույցի հետքեր.

3. Հայտնաբերել որոշակի փաստեր, որոնք կառնչվեին ենթադրաբար Սբ. Դաղիին վերագրվող գերեզմանատեղին, ինչպես նաև ճշտել խորանի կենտրոնում գտնվող քարակոթողի գործառական նշանակությունը:

Դեռ 2006 թ. շինարարները, ինքնագլուխ, ցանկանալով «բարի» գործ անել, մաքրել էին Դաղի սրբատեղիի արևմտյան մասում վերևից սրահի մեջ թափված հողը: Բարեբախտաբար, ընդամենը մի քանի օր հետո իմանալով այդ մասին, դադարեցվեցին մաքրման աշխատանքները: Այդ ժամանակ արդեն գտնվել էին կղմինդրների կտորտանքներ քիչ քանակությամբ:

2007 թ. հուլիսի 1-ից սկսվեցին պեղումների ծրագրված աշխատանքները և շարունակվեցին մինչև հուլիսի 6-ը[52]:

Աշխատանքներն ընթանում էին նախախորանի և խորանի հատվածում: Այդ ժամանակ սևահողային վերին շերտը հեռացնելիս հայտնաբերվեցին ԺԲ-ԺԳ դդ. թվագրվող կղմինդրի բեկորներ, որոնց զուգահեռներն առկա էին գմբեթավոր փոքր եկեղեցում և Հանդաբերդի վանքում:

Այս շերտից հետո արդեն կատարված էր ինչ-որ մի կառույցի՝ գլխավորապես մանրացված, նաև խոշոր բեկորներով լիցք: Ի դեպ, բեկորների մի մասի սվաղի շերտի վրա կային կարմիր, շագանակագույն և քիչ քանակությամբ սև գույներով գծային նկարվածքներ: Հայտնաբերվեցին նաև կավե ամանների (կարաս, կճուճ, թաս) կտորտանքներ քիչ քանակությամբ: Մոտ մեկ մետր հաստությամբ այս շերտի վերևի մակերևույթն ավելի ամուր էր՝ կազմված կրաշաղախի կտորներից, որով կարծես ձևավորվել էր խորանի հատակը: Շերտի մակարդակը հորիզոնական չէր, խորանից դեպի արևմուտք՝ մինչև նախախորանի սկիզբը, այն իջնում էր անկանոն և առավելագույնը 50 սմ-ով: Կարելի էր եզրակացնել, որ Դաղի սրբատեղին կառուցելիս ավելի վաղ կառույցի բեկորներով լիցք է կատարվել,

2007 թ. պեղումներով բացված հողաշերտը և կառույցի մնացորդներ

Սբ. Դաղի սրբատեղիի արևելյան հատվածը 2007 թ. պեղումներից հետո

և կառուցվել է բեմական հատվածը: Կենտրոնական մասում՝ անմիջապես կոթողի առջև, լիցքի շերտի մեջ բացվեց ինչ-որ կառույցի զանգվածեղ բեկոր, որը նախնական տեղում չէր, քանի որ թեքված էր ուղղաձիգ դիրքից և երկրի կողմերի նկատմամբ ուներ պատահական ուղղվածություն: Զանգվածի վրա պահպանվել էին մուտքի ներսի վերևի հատվածը բարավորի հետ միասին և պատի արտաքին անկյունը: Շարվածքը կոպտատաշ քարերով էր և կրաշաղախով: Բարավորը, որը ոչ թե միակտոր, այլ քարերով շարվածք էր, սվաղված էր: Մեծածավալ այս բեկորը նույնպես լիցքի մաս էր կազմում:

Ինչ վերաբերում է կոթողին, ապա այն տեղադրվել է բեկորի արևելյան եզրային մասի վրա և ամրացվել անտաշ քարերով ու ամուր կրաշաղախով: Հաշվի առնելով կոթողի՝ լիցքի և պատահական ընկած մեծածավալ բեկորի վրա տեղադրվածությունը՝ կարելի է պնդել, որ այն կանգնեցվել է ԺԳ դարի կեսերից՝ սրբատեղիի կառուցման թվականից ոչ շուտ:

Կոթողի գործառական նշանակությունը կարելի է համարել Դաղի հիշատակին նվիրված մահարձան, թեև եղել են կարծիքներ, որ այն եկեղեցու սուրբ սեղանի ոտքի քարն է[53]: Գլխամասում արված փոսի մեջ էլ հավանաբար տեղադրվել է ճար-

52 Պեղման մանրամասները՝ **Պետրոսյան Հ.**, ՀՃՈՒ հ/կ-ին հանձնված պեղումների հաշվետվություն, 2007թ.:

53 **Ջալալյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 223: Տե՛ս նաև **Պետրոսյան Հ.**, նշվ. հաշվետվությունը:

Կոթողի արևմտյան ճակատը

տարապետական որևէ խորհրդանշանային հորինվածք (միգուցե՝ խաչքար):

Կոթողը սուրբ սեղանի ոտք չէր կարող ծառայել ոչ միայն այն պատճառով, որ տվյալ ժամանակաշրջանում նմանատիպ լուծման չենք հանդիպում, այլև, որ կառուցողական տեսանկյունից ունի չարդարացված մեծ չափեր (հատակագծում՝ 66,0 սմ x 100 սմ և 190 սմ բարձրությամբ): Ընդ որում, տեղադրված է այնքան բարձր, որ սեղանի հորիզոնական սալը տեղադրելուց հետո վերջինիս մակարդակը

Սրբատեղիի խորանի հարավային կողմում հայտնաբերված անկյունային պատը

հավանական հատակից կբարձրանար ավելի քան երկու մետր, այսինքն՝ մարդու հասակից բարձր:

Կոթողի փակագիր արձանագրությունը Համլետ Պետրոսյանի ընթերցմամբ հետևյալն է.

Թ(վին)ՊԺ (1361) կամ *ՊԺԹ (1370):*

Խորանի հարավային անկյունում բացվեց տեղում պահպանված և ցարդ ամբողջությամբ չպարզաբանված կառույցի անկյունային մաս, որի արևմտյան պատը շարունակվում էր Դաղի սրբատեղիի հարավային պատի միջով դեպի բազիլիկ եկեղեցի՝ փաստելով, որ սրբատեղին կառուցվել է նրա վրա: Պարզելու համար, թե մինչև որտեղ էր շարունակվում հայտնաբերված անկյունային պատը (բազիլիկ եկեղեցու ներսում այն չէր արտահայտվում), անհրաժեշտ էր Դաղի սրբատեղիի պատի մեջ կատարել փորվածք:

Կոթողի արևելքում հայտնաբերված դիաթաղումը (տե՛ս նաև էջ 55-ի լուսանկարը)

Կոթողի հետևում՝ նրա անտաշ քարերով հիմքից ընդամենը 20 սմ հեռավորությամբ և խորանի պատին կից, հայտնաբերվեց արևելք-արևմուտք ուղղությամբ կատարված դիաթաղում (գլուխն արևմուտքում): Կմախքի՝ անատոմիական անխախտ ճշտությամբ պահպանվածությունը վկայում էր, որ վերաթաղում չէր: Թաղման փոսը փորված էր վերը նկարագրված լիցքի մեջ: Փոսի պատերը շարված էին անձև քարերով առանց շաղախի: Շարվածքի մեջ կային նաև վերը նկարագրված սվաղի շերտով բեկորներ: Հյուսիսային և հարավային երկայնական երկու պատերն էլ կառուցված էին ոչ ուղղաձիգ, այլ թեքությամբ՝ հենապատի ձևով և ընդհատվում էին՝ հասնելով սրբատեղիի խորանի պատին: Այս ամենից ակնհայտ երևում է, որ թաղումը կատարվել է խորանի լիցքի մեջ Դաղի սրբատեղիի կառուցումից, այսինքն՝ ԺԳ դարի երկրորդ կեսից հետո և ոչ մի առնչություն չունի նահատակված Դաղ քարոզչի հետ:

Տապանաքար կամ որևէ հուշաքար չհայտնաբերվեց: Կոթողի և այս թաղման մեջ դժվար է գտնել անմիջական որևէ կապ: Թաղման ժամանակ կոթողն արդեն կանգնեցված է եղել, որովհետև թաղ-

ման փոսը մի կերպ տեղավորվել է խորանի արևելյան պատի և կոթողի միջև (տե՛ս էջ 55-ի լուսանկարը): Դիակի վրա կատարված լիցքը սևահողային էր՝ ի տարբերություն ամբողջ խորանի լիցքի:

Ինչպես հայտնի է, հայ առաքելական եկեղեցու ծիսակարգով արգելվում է եկեղեցու ներսում թաղում կատարել, առավել ևս՝ խորանում: Ճիշտ է, վաղ միջնադարում սրբացված մարդկանց գերեզմանների կամ նրանց մասունքների վրա կառուցվում էին մատուռներ, վկայարաններ, սակայն այս դեպքում այդպես չէ, քանի որ, ինչպես նշվեց, թաղումն ավելի ուշ շրջանի է: Ամեն դեպքում թաղվածը պետք է լիներ ժամանակի հեղինակավոր մարդկանցից մեկը:

2007 թ. հուլիսի 6-ին դադարեցվեց պեղումների ընթացքը, որովհետև անհրաժեշտ էր Հայ առաքելական եկեղեցու հոգևոր այրերի միջամտությունը՝ կապված հայտնաբերված թաղման հետ, սակայն դեռ պետք էր շարունակել և պարզել վերը նշված հարցականների պատասխանները, այդ թվում՝ վաղ կառույցի որևէ հետք կամ Սբ. Դաղի գերեզմանին վերաբերող նյութ:

Հուլիս ամսից սկսվեցին վերականգնման շինարարական աշխատանքները, որոնք այս փուլում միաժամանակ իրականացվում էին բոլոր կառույցներում:

Վերականգնվում են Դաղի սրբատեղիի որմնամույթերը, մաքրվում է ավանդատների վրայի հողաշերտը: Հարավային ավանդատան վերևում պատի քարերը մեջտեղում եռանկյուն փոքրիկ ջրահեռացման փոսիկով ուղղանկյուն գլանիկավոր ծածկասալեր էին, ինչպիսին կային Կաթողիկե եկեղեցու հյուսիսարևմտյան վերանորոգված տանիքի վրա: Ակնհայտ էր, որ ավանդատան վրա ծածկասալերը երկրորդիվ գործածվելիս վերածվել են հարթ պատի շարվածքի, իսկ գլանիկի մասը կիրառվել է որպես քիվ:

Բազիլիկի, փոքր գավթի և սյունասրահի տանիքներից մաքրվեց կուտակված հողաշերտը: Բազիլիկի հյուսիսային պատի վրա բացվեցին հորիզոնական մի քանի քիվեր, որոնք գտնվում էին այն ուղղաձիգ նիշի վրա, որը նախագծով էր նախատեսված: Կառուցողական մանրամասներ բացահայտող և ժամանակագրությունը հաստատող էական նյութ բացվեց գավթի հարավային պատի վրա՝ սյունասրահի հետ կցման մասում: Այդտեղ՝ գավթի պահպանված հարավային պատի վերևի նիշից մոտ 40 սմ ներքև, հայտնաբերվեցին պատից դուրս եկած քարեր: Դրանց նմանները առկա էին սյունասրահի հարավային պատին, որոնց վրա դրվում էր տափակ սալաքար: Ժամանակին դրանք քիվի հորինվածքը կազմող քարեր էին և հուշում են, որ գավթի տանիքը նախապես ավելի ցածր է եղել: Սա հաստատում է դեռևս ավելի վաղ հայտնած մեր կարծիքը փոքր գավթի և սյունասրահի ծածկերի վերափոխման մասին[54] (շինարարական աշխատանքների ընթացքում այս քարերը մնացին գավթի և սյունասրահի ջրահեռացումն ապահովող ազբոցեմենտե կիսախողովակի տակ):

Ծածկերի հողաշերտը մաքրելուց հետո, երբ բացվեցին սյունասրահի և փոքր գավթի ծածկերի կրաբետոնե լիցքերը, անհրաժեշտ էր վերանայել վերականգնման նախագծում գավթի ծածկի միաթեք լուծման նախնական տարբերակը, քանի որ

Սյունասրահի և փոքր գավթի միացման հատվածը տանիքում

Դաղի սրբատեղիի և բազիլիկ եկեղեցու միացման հատվածը տանիքում

Փոքր գավթի տանիքը հողաշերտի հեռացումից հետո

54 **Այվազյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 213-215:

կրաբետոնե լիցքի ծավալները հուշում էին, որ ծածկը կարող էր ունենալ նաև երկթեք հորինվածք: Ըստ այդմ էլ կատարվեց փոփոխություն. ընտրվեց երկթեք հորինվածքով ծածկի տարբերակը, և փոքր գավթի ու Դադի սրբատեղիի միացման մասում նախատեսվեց ջրատար առվակի տեղադրում:

Մինչև 2007 թ. նոյեմբերի վերջը շարունակված վերականգնման աշխատանքների ընթացքում

Սրբատեղիի հարավային ավանդատան տանիքն ամրակայումից հետո

քանդվեցին-վերաշարվեցին Դադի սրբատեղիի հարավային ավանդատան ծածկի վրայի տեղաշարժված քարերը, երկրորդիվ կիրառված ծածկասալերը, կրաբետոնե բարդ շաղախով ամրացվեց ավանդատան ծածկը:

Այստեղ նախատեսվել էին միայն ամրակայման աշխատանքներ: Ծածկի ամբողջական վերականգնման համար փաստացի նյութեր չէին պահպանվել: Բացի այդ՝ հավանական է, որ տանիքն ի սկզբանե անավարտ էր մնացել: Նման ձևով վերականգնվեց նաև հյուսիսային ավանդատան տանիքը:

Բազիլիկի թաղի վրայի հողաշերտի հեռացումից հետո կատարվեց կրաշաղախե լիցքով ամրացում, և սրբատաշ տուֆ քարերով վերականգնվեց տանիքը: Բազիլիկի և Դադի սրբատեղիի ավանդատան միջև տեղադրվեց ազբոցեմենտե ջրահեռացման առվակ:

Փոքր գավթի տանիքի վերականգնումն էլ կատարվեց նույն կերպ, և շարվեցին հարավային լանջի 4-5 շարք ծածկասալերը:

Սյունասրահի թաղի վրա կատարվեցին ամրանավորման և բետոնացման աշխատանքներ: Արևելյան ծայրի կամարը, ինչպես վերը նշվել է, ըստ

Բազիլիկ եկեղեցու, փոքր գավթի և սյունասրահի տանիքները վերականգնումից հետո

նախագծի, պետք է ամրացվեր երկաթբետոնե գոտիով և վերականգվեր ոչ նախկին տեսքով, որպեսզի նախկինի պես չծածկվեին Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի արձանագրությունները (երբեմնի գոյություն ունեցած որմնասյան և կամարի հետևում):

Ցավոք, չնայած նախագծային գծագրերի առկայությանը և տեղում տրված հստակ ցուցումնե-

Սյունասրահի արևելյան կամարը

ին՝ վերականգնումը կատարվեց նախագծային տեսքի աղավաղումով, որը շտկելու նպատակով ավելի ուշ մասամբ քանդվեց: Փոխանակ արևելյան ծայրի կլոր սյան վրա կառուցվեր նախնական կամարի կեսը և միայն դրանից հետո թեքությամբ բարձրանալով՝ հպվեր Կաթողիկե եկեղեցուն, սյան վրա միանգամից կառուցվել էր երկաթբետոնե բեկյալ գծով գոտի: Նախագծային լուծումը հստակորեն ցույց է տալիս, որ այդտեղ եղել է կամար, և այժմ վերականգնում ենք դրա նախնական տեսքի միայն մի մասը՝ արձանագրությունները չծածկելու նպատակով, իսկ տեղում իրականացված տարբերակը գիտական հիմնավորում չուներ և գեղագիտական տեսանկյունից էլ վատ էր դիտվում: Խստորեն կարգադրվեց սյան վրա նստող մասից սկսած մինչև 1,5 մ քանդել և նորից ներսից մետաղե ամրաններով, իսկ արտաքինից քարե շարվածքով կառուցել՝ պահելով նախնական կամարի կորության շառավիղը:

Բազիլիկ եկեղեցում սալապատվեցին բեմը և սրահի մի մասը: Փոքր գավթի սալերի տեղադրման համար կատարվեցին նախապատրաստական աշխատանքներ՝ հողի տոփանում և խճի փռում: Վերականգնվեց Դաղի սրբատեղիի՝ գավթի մեջ բացվող հարավային մուտքը:

Դաղի սրբատեղիի սալապատումը պետք է կատարվեր մինչև նախախորանը, որտեղ դեռևս պեղումների անհրաժեշտություն կար: Մինչ աշխատանքների սկսվելը սրահի տարբեր հատվածներում փորվեցին խուզահորաններ, որոնց արդյունքում պարզվեց, որ սրահի հարավային կեսում առ-





Բազիլիկ եկեղեցին սալապատումից հետո (տեսքը դեպի արևելք և արևմուտք)

Փոքր գավթի հատակը սալապատումից հետո և դեպի սրբատեղի տանող աստիճանները

կա էին պատի շարվածքի մնացորդներ: Այդ պատճառով որոշվեց սալարկել սրահի դեռևս միայն հյուսիսային հատվածը, որտեղ խուզահորանները ոչինչ չէին հայտնաբերել, մինչև որ պեղումներն ավարտվեին:

Շինարարական աշխատանքների ընթացքում պատահաբար տեղի է ունենում մի շատ կարևոր հայտնագործություն. Դադի սրբատեղիի խորանի՝ 2007 թ. պեղված մասում թվացյալ կրաշաղախի զանգվածի տակից, որ գտնվում է կոթողի մոտ հայտնաբերված կառույցի մեծածավալ մնացորդի տակ, ի հայտ են գալիս փայտյա աթոռի՝ գահի մնացորդներ հետևյալ կերպ: Երբ ժամանակավորապես դադարեցվել էին պեղումները, և շարունակվում էին շինարարական աշխատանքները կառույցների մյուս հատվածներում, բանվորները նկատում են, որ ջուրը, լցվելով խորանում գտնվող կրաշաղախի զանգվածի տակ, արագ ներծծվում է: Ինչոր բան կասկածելով՝ մաքրում են այդ հատվածը և տեսնում հորի նման բացվածք: Մարմնի մի մասով մի կերպ սողոսկելով ներս՝ բանվորներից մեկը դիպչում է փայտյա իրի: Դուրս հանելով կտորները՝ կարծում են, որ փայտե խաչ են հայտնաբերել: Փոսի մեջ նկատում են նաև մարդկային ոսկորներ: Գտածոն՝ փայտի 27 մեծ և 11 փոքր կտորներ, 13 մետաղական գամեր, փոխադրվում է Երևան:

Դադի սրբատեղիի հարավարևմտյան մասի խուզահորանում հայտնաբերված պատի մնացորդ



Գահաթոռի վերակազմությունը (մուգ գույնով պահպանված հատվածներն են)

Կտորների չափագրության և համադրության արդյունքում հնարավոր դարձավ վերակազմել հայտնաբերվածի նախնական տեսքը:

Պարզվեց, որ այն փայտյա բազկաթոռ է՝ գահ, որը պահպանվել էր միայն նստատեղից վեր հատվածով: Գահը և նույն տեղից հայտնաբերված մարդկային ոսկորներն ակնհայտորեն ցույց էին տալիս, որ Դադի սրբատեղիի խորանի կենտրոնական մասում՝ ավելի խորը շերտում, գոյություն

Փայտյա գահաթոռի հայտնաբերված բեկորները

ունի ինչ-որ կառույց, որը կարող էր ճշտել շատ հարցերի պատասխանները:

Իրեղեն այս հայտնագործություններից հետո որոշվեց 2008 թ. անմիջապես շարունակել անհարկի ձգձգվող պեղումները:

2008 թ. մայիսի 27-ից շինարարական աշխատանքներին զուգահեռ հնագետ Գագիկ Սարգսյանի գլխավորությամբ վերսկսվեցին ընդհատված պեղումները և շարունակվեցին մինչև հունիսի 5-ը: Աշխատանքները տվեցին սպասվելիք շատ հարցերի պատասխաններ և հաստատեցին որոշ ենթադրություններ[55]:

Կոթողի դիմաց (արևմտյան կողմում)՝ նրա հիմքի նիշից 2,6 մ ներքև՝ փափուկ ավազային հիմնահողի մեջ, հայտնաբերվեց առանց կրաշաղախի, անձև քարերով կառուցված, 107 սմ x 72 սմ չափերի, ձվածևին մոտեցող հատակագծով և 132 սմ բարձրությամբ, երկու տափակ սալաքարերով ծածկված դամբարանախուց, որտեղ առկա էին մարդկային ոսկորներ՝ հիմնականում իրար վրա դասավորված, որոնք չէին ամբողջացնում կմախքը: Սակայն խցի արևելյան մասում բացվեցին մարդու ոտքերի թաթերի ամբողջական ոսկորները նախնական դիրքով, անատոմիական ճշտությամբ:

Սրանով հաստատվեց դամբարանախցում դիաթաղման առկայությունը: Խցի հարավային պատի տակ՝ հատակին, հայտնաբերվեց նաև սպիտակ օնիքսից, երկթեք ծայրերով ձեռնափայտի (գավազանի) գլխիկ, որն ունի ձեռնափայտի ծայրն ագուցելու համար փորված նիստուկ՝ մետաղյա գամերի երկու անցքերով: Ի դեպ, ճիշտ նույնպիսի գլխիկով

Դամբարանախցում նախնական դիրքով պահպանված մարդկային ոսկորները և ձեռնափայտի օնիքսե գլխիկը

55 Պեղումների մանրամասն նկարագիրը, արդյունքները և հետևություններն արդեն իսկ ներկայացրել ենք առանձին հոդվածով (**Այվազյան Մ.**, **Մարգսյան Գ.**, Դաղի վանքում 2008 թ. կատարված պեղումները, «Վարձք», 2012, № 7, էջ 1-11):



Դադի սրբատեղիի խորանում և նախախորանում պեղումներից հետո հայտնաբերված կառույցների չափագրությունները

Դամբարանախցից հայտնաբերված ձեռնափայտի (գավազան) օնիքսե գլխիկը և նույնաոճ գլխիկի քանդակ Շատիվանքի գերեզմանոցի տապանաքարերից մեկի վրա

գավազան-ձեռնափայտի հարթաքանդակ առկա է Շատիվանքում գտնվող Դավիթ վարդապետի տապանաքարին[56]:

Խցում կատարված դիաթաղման փաստը, այնտեղից հայտնաբերված փայտե գահաթոռը և դամբարանախցի չափերն ապացուցում են, որ թաղումն իրականացվել է փայտե գահի վրա նստած վիճակում: Դիակի աջ կողմում կամ աջ ձեռքում եղել է ձեռնափայտ-գավազան:

Նստած դիրքով թաղման ժամանակակից ծես Սիրիայում

Ի դեպ, այսպիսի թաղումներ՝ հոգևոր առաջնորդը գահի վրա նստած, մեր ժամանակներում կատարվում են, օրինակ, Սիրիայում:

Ըստ պ. գ. թեկնածու Ռուզան Մկրտչյանի՝ մարդաբանական նախնական հետազոտության՝ դամբարանախցում թաղվածը 50-55 տարեկան և 175-180 սմ հասակով տղամարդ է: Կատարվեց նաև կմախքից վերցված նմուշի ռադիոկարբոնային հետազոտություն Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան մանկավարժական համալսարանում: Ռադիոկարբոնային փորձաքննության արդյունքն էր՝ մ.թ. 1260 թ. +/-55 տարի (փորձաքննության փակագիր՝ SPb-63): Այնուամենայնիվ, գերադասելի ենք համարում այն կարծիքը, որ հանգուցյալը չէր կարող լինել ԺԳ դարի անձնավորություն, քանի որ, ինչպես քիչ հետո կտեսնենք, դամբարանախուցը կառուցվել է Դաղի սրբատեղիից (ԺԳ դարի կես) և ավերված կառույցից (ոչ ուշ, քան ԺԲ դարի կես) առաջ:

Խցի պատերի՝ անտաշ քարով և առանց շաղախի շարվածքն ակնհայտորեն տարբերվում է որակյալ կրաշաղախով ամրացված սալածածկից, որից և հետևում է, որ ներկայիս ծածկը սկզբնականը չէ, այլ արվել է ավելի ուշ: Բացի այդ՝ նմանատիպ կառույցները սովորաբար ունենում են կեղծ թաղ կամ գմբեթանման ավարտ՝ պատերին համահունչ շարվածքով: Այստեղից հասկանալի էր, որ դամբարանախուցը ժամանակին բացվել ու նորից փակվել է թերևս ոչ մեկ անգամ, վերջինը՝ հավանաբար Դաղի սրբատեղիի կառուցման ժամանակ՝ ԺԳ դարում:

Դամբարանախուցն ամբողջությամբ գտնվում է սրբատեղիի նախաբեմի կենտրոնական մասում՝ կոթողից արևմուտք, իսկ խցի արևելյան ծայրը՝ 2007 թ. հայտնաբերված ավերված կառույցի մնացորդի՝ կրաշաղախե միջուկով պատի զանգվածի տակ: Վերջինիս վրա էլ արդեն կրաբետոնով կանգնեցվել է Դաղի սրբատեղիի բեմի կենտրոնական մասի հիշյալ կոթողը: Սրանից հետևում է, որ հայտնաբերված դամբարանախուցն ավելի վաղ է կառուցվել, քան նրա վրա գտնվող ավերակը և կոթողը, իսկ Դաղի սրբատեղին, ինչպես փաստեցին դեռ

56 Տապանաքարը մատնանշել և լուսանկարել է Բաֆֆի Քորթոշյանը:

Սբ. Դադի սրբատեղիի խորանի հատվածը պեղումներից հետո

2007 թ. պեղումները, կառուցվել էր ավերված այդ կառույցի բեկորների վրա ԺԳ դարի կեսերին, այսինքն՝ սրբատեղին նույնպես ավելի ուշ է կառուցվել, քան դամբարանախուցը: Վերջինս սրբատեղիից հետո չէր կարող կառուցվել նաև այն պատճառով, որ սրբատեղին ավերակների վրա կառուցելուց հետո բեմական մասում անհրաժեշտ կլիներ հուղարկավորության համար փորել 260 սմ խորությամբ փոս (խցի հատակը 260 սմ ցածր է բեմի մակարդակից), սակայն դա քիչ հավանական է, քանի որ թաղման համար 80-120 սմ խորությունն էլ բավարար կլիներ (ինչպիսին է, օրինակ, կոթողի հետևի դիաթաղումը):

Վերոնշվածից եզրակացնում ենք, որ դամբարանախուցը գոյություն է ունեցել կոթողից, Դադի սրբատեղիից և դրանցից էլ դեռ վաղ ավերված կառույցից առաջ՝ առնվազն ԺԲ դարի երկրորդ կեսին (թերևս պայմանավորված ԺԲ դարի կեսերին Չոլի զորապետի կատարած ավերածությունների հետ):

Դամբարանախցի ծավալային հորինվածքն ու շինարարական տեխնիկան, կառուցման ժամանակագրությունը և թաղման ծիսակարգը հուշում են, որ Սբ. Դադի ավանդազրույցը կարող էր անմիջական կապ ունենալ հենց այս դամբարանի հետ: Եթե անգամ ընդունենք, որ սա Սբ. Դադի գերեզմանը չէ, կամ Դադի ավանդազրույցը միայն հորինվածք է, ապա հենց այդ հորինվածքը և Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի 1224 թ. արձանագրության մեջ հիշվող *Դադի գերեզման*-ը պետք է ընկալել այս դամբարանի հետ համատեղ:

Դադի սրբատեղիի բեմի հարավային մասում 2007 թ. հայտնաբերված նախնական տեղում գտնվող անկյունային պատի շարունակությունը և նշանակությունը պարզելու նպատակով սրբատեղիի հարավային պատի մեջ՝ դեպի բազիլիկ եկեղեցի տանող հետախուզական փորվածքը տեխնիկապես հնարավոր չեղավ ավելի խորացնել և հստակեցնել անկյունային պատի ու բազիլիկի փոխկապվածությունը (հենց այս մասում է բազիլիկի հյուսիսային մուտքը): Եթե բացահայտվեր այդ կապը, ապա ավելի դյուրին կլիներ հստակ պարզել նաև խցի և բազիլիկի կառուցման ժամանակագրական հաջորդականությունը: Նույն նպատակով Դադի սրբատեղիի արևելյան ճակատին կից մոտ 3 քմ մակերեսով խուզահորան փորվեց: Մոտ 1 մ խորության վրա բացվեց քրիստոնեական երկու դիաթաղում՝ կցված Դադի սրբատեղիի արևելյան ճակատի տակ բացված հիմնապատին, որոնք ակնհայտորեն կատարված են նրանից ավելի ուշ: Այս թաղումները հաստատում են դեռևս ավելի վաղ արտահայտած այն կարծիքը, որ համալիրի այս մասում եղել են թաղումներ, և, ամենայն հավանականությամբ, այստեղ գերեզմանոց էր:

Սբ. Դադի սրբատեղիի արևելյան ճակատի տակ 2008 թ. հետախուզական պեղումներից հայտնաբերված դիաթաղումներ

Խուզահորանում դեպի արևելք խնդրո առարկա պատի շարունակություն չհայտնաբերվեց: Փոխարենը Դադի սրբատեղիի արևելյան ճակատի հիմքում բացվեց նույն ճակատի հարթությունից մոտ 15 սմ դուրս եկած և նրանից մի փոքր շեղված հիմնապատ, որի ճակատային հարթությունը մոտավորապես համընկնում է բազիլիկի արևելյան ճակատին:

Հաշվի առնելով շինարարական տեխնիկայի և շարվածքի տարբերությունները՝ վստահաբար կարելի է ասել, որ Դադի սրբատեղին կառուցվել է այս հիմնապատից հետո՝ շարվելով դրա վրա: Վերջինս սերտորեն առնչվում է խնդրո առարկա անկյունային պատին և բազիլիկ եկեղեցուն, ուստի և կարող էր կազմել դրանց մի մասը:

Այդ կապը պարզելու համար անհրաժեշտ է այս մասում ևս պեղումներ կատարել: Որոշվեց դա թողնել հաջորդ փուլին, իսկ բացված խուզահորանում կատարվեց հողի հետլիցք:

Պեղումների ընթացքում Դաղի սրբատեղիի ներսում բացվեցին կոպտատաշ շարվածքով երկու պատերի մնացորդներ: Մեկը՝ լայնական ուղղությամբ ձգվող պատը (տե՛ս էջ 72-ի առաջին լուսանկարը), սկսվում է սրբատեղիի հյուսիսային պատի արևելյան որմնամույթից և շարունակվում դեպի հարավային պատի արևելյան որմնամույթը՝ 1 մ հեռու մնալով վերջինից, որը պահպանվել է դեպի արևմուտք նայող ճակատով՝ իրականացված մեկ շարի բարձրությամբ միաշերտ, կոպտատաշ քարով: Մյուս պատը երկայնական ուղղությամբ է և սկսվում է առաջինի վերջից միակտոր մեծ քարով, այնուհետև շարունակվում մինչև հարավային պատի արևմտյան որմնամույթը և 90 աստիճան թեքվելով՝ մտնում դրա տակ (լուսանկարները տե՛ս էջ 10 և 68), որով հիմնավորվում է այդ պատի գոյությունը սրբատեղիից առաջ (պատի հետագա ընթացքը պարզելու անհնարինությունը թույլ չի տալիս խոսել նրա նշանակության մասին):

Դաղի սրբատեղիի հարավարևմտյան որմնամույթի արևելյան կողմում՝ նրա խարսխից 112 սմ խորությամբ և երկայնական պատից մոտ 10-20 սմ հեռու, գտնվեց 25 x 33 x 191 սմ չափի հարթ երեսով և խաչաքանդակով քարակոթող (լուսանկարը տե՛ս էջ 10, իսկ գծանկարը՝ էջ 73): Ընկած դիրքից պարզորոշ երևում էր, որ քարակոթողը նախնական տեղում և դիրքում չէ: Հաստությունը վերին մասում դանակաձև բարակում է և հասնում 2 սմ-ի: Հարթ մակերեսի վերնամասում պատկերված է խորաքանդակ, պարզ գծային խաչ՝ եռաճյուղ ծայրերին գնդաձև փորվածքներով ավարտվող թևերով: Ստորին խաչաթևն ունի երկարավուն գծային պատվանդան: Քարակոթողի եզրային մասերը վերևից ներքև կոտրտված են: Մի փոքր կոտրվածք ունի նաև ներքևում: Խաչաքանդակը բնորոշ է թերևս ԺԱ-ԺԲ դարերին:



Քարակոթողի չափագրությունը

Դաշտային աշխատանքների ընթացքում փորձանմուշներ վերցվեցին կառույցների տարբեր հատվածների կրաշաղախից: Դրանց համեմատական փորձաքննությունը պ. գ. թեկնածու Քնարիկ Նավասարդյանի ուսումնասիրությամբ ցույց տվեց, որ Դաղի կոթողի տակի պատի մեծ զանգվածի, ինչպես նաև բեմի լիցք կազմող պատերի պատառիկների շաղախները նույնական են խորանի հարավային մասում 2007 թ. բացված անկյունային պատի շաղախի հետ: Կոթողն ամրացնող, Դաղի սրբատեղիի պատի շարի, ինչպես նաև թաղման խցի տանիքը պատող կրաշաղախները տարբեր են թե՛ կառուցվածքով, թե՛ բաղադրությամբ, հնարավոր է նաև ժամանակագրությամբ:

Պեղումներից հայտնաբերված հնագիտական նյութերը՝ փայտե գահը, ձեռնափայտի գլխիկը, ևս հանձնվեցին Արցախի պատմաերկրագիտական թանգարանին:

Պեղումները տվեցին հետևյալ հիմնական արդյունքները.

1. Հայտնաբերվել է խաչաքանդակով քարակոթող:

2. Կաթողիկե եկեղեցուց հյուսիս և Դաղի սրբատեղիից արևելք ընկած հատվածում բացվել է գերեզմանոց:

3. Դաղի սրբատեղիի ներսում գտնվել են պատերի մնացորդներ, որոնք վկայում են, որ սրբատեղիի տեղում նրանից վաղ շինություն է եղել:

4. Հայտնաբերվել է դամբարանախուց, որը Դաղի վանքի պահպանված կառույցներից հնագույնն է: Վերջինս կառուցվել է հատուկ տվյալ թաղման համար (հավանաբար սա է Սբ. Դաղի ավանդազրույցի և համալիրի Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի՝ 1224 թ. արձանագրության մեջ հիշվող *Դաղի գերեզման*-ի գոյության սկզբնաղբյուրը):

5. Դամբարանախցից հայտնաբերվել են մարդկային ոսկորներ, փայտյա գահաթոռ և ձեռնափայտ-գավազանի օնիքսե գլխամաս: Թաղումը կատարվել է գահին նստած վիճակում, դեմքով դեպի արևելք: Հանգուցյալը 50-55 տարեկան, 175-180 սմ հասակով նշանավոր գործիչ է:

6. Դամբարանախուցն առնվազն երկու անգամ բացվել է կողոպտելու կամ մասունքներ վերցնելու նպատակով: Վերջին անգամ այն բացվել ու զմռսվել է Դաղի սրբատեղին կառուցելու և նրա բեմական մասում ամփոփելու ժամանակ:



Դամբարանախցի պահպանման և ցուցադրման նախագիծը

7. Դաղի սրբատեղիին կից և նրանից ավելի վաղ կառուցված միանավ բազիլիկի հյուսիսային կողմում եղել է մի շինություն, որը կարող էր բազիլիկին ժամանակակից լինել կամ կազմել նրա մի մասը: Այն քանդվել է Դաղի սրբատեղին կառուցելիս, որի մնացորդներով էլ բարձրացվել է սրբատեղիի բեմը: Ընդ որում, սրբատեղին կառուցվել է այնպես, որ դամբարանախուցը հայտնվի նրա բեմական մասի կենտրոնում՝ առանցքի վրա, իսկ քանդված շինության կրաշաղախե միջուկով պատի բեկորները խնամքով շարել են խցի շուրջը՝ աշխատելով չվնասել այն:

Հաշվի առնելով դամբարանախցի պատմական և ճարտարապետական մեծ արժեքը, ինչպես նաև ծիսական արարողակարգի հետ կապված խնդիրների բացահայտումը՝ անհրաժեշտ համարվեց

Դադի սրբատեղիի հարավային և հյուսիսային որմերը վերականգնումից առաջ և այդ ընթացքում

դամբարանը նորից չծածկել բեմահարթակի տակ, այլ պահպանել և ցուցադրել: Այդ նպատակով էլ մշակվեց համապատասխան նախագիծ, որի համաձայն՝ հայտնաբերված դամբարանախուցը ներառվում է խորանի բեմահատվածի նոր ծավալում և բեմի ճակատից բացվող մուտքով հաղորդակցվում սրահի հետ:

2008 թ. վերականգնման շինարարական աշխատանքները շարունակվում էին, զուգահեռ կառուցվում էր նաև դամբարանախցի պահպանումն ու ցուցադրումը ապահովող շինությունը:

Հունիսից հետո կատարվեցին հետևյալ աշխատանքները. վերականգնվեց Դադի սրբատեղիի որմնասյուների սրբատաշ երեսապատը: Ամրակայման նպատակով որմնասյուների վերևում պահպանված կրաքարե նախնական շարքերի վրա նոր տաշված տուֆով ավելացվեց ևս մեկ շարք: Վերականգնվեց հյուսիսային պատի արևելյան ծայրի որմնախորշը, որի հանգուցային բոլոր նախնական լուծումները նախագծով տրված էին: Հատակի սալապատման աշխատանքները գրեթե ավարտվեցին, մնաց կոթողից հյուսիս-արևելք ընկած հատվածը՝ մոտ 3 մ^2 մակերեսով:

Սրահում հայտնաբերված պատերի մնացորդների մի մասի մակարդակը բարեբախտաբար ավելի բարձր էր, քան նախագծված հատակինը, ին-

Դադի սրբատեղիի արևելյան հատվածը վերականգնումից առաջ և այդ ընթացքում

Սյունասրահի ներքին տեսքը դեպի արևմուտք վերականգնումից հետո

չը և հնարավորություն տվեց սալապատման ժամանակ ապահովել հատակից վեր դրանց պահպանումն ու ցուցադրումը: Կառուցվեց դամբարանախուցը ներառող նոր ծավալի զգալի մասը, և մնաց ավարտին հասցնել առաջամասի կառուցումն ու մետաղական դռան տեղադրումը:

Նախախորանի երկու անկյուններում կառուցվեցին բեմ բարձրացող աստիճաններ: Սրբատեղիի պատերի վերնամասերի ամբողջ պարագծով խարխլված հատվածները քանդվեցին և վերաշարվեցին: Այնուհետև ամրակայման նպատակով դրանց վրա հավելվեց մեկից երկու նոր շարք:

Բազիլիկ եկեղեցու և փոքր գավթի սալարկման աշխատանքներն ավարտվեցին (տե՛ս 67-68 էջերի լուսանկարները): Չնայած փոքր գավթի և ժամատան մեջ չէին պահպանվել աստիճանների հետքեր, որոնք կբարձրանային դեպի Դադի սրբատեղի, որի հատակը մակարդակով 113 սմ բարձր է փոքր գավթից, իսկ ժամատան հատակից՝ 85 սմ, այնուամենայնիվ, հաշվի առնելով շահագործման ընթացքում մարդկային հոսքը, նման աստիճաններ նախագծվել էին:

Այդ աստիճաններից մինչև 2015 թ. կառուցվել է միայն փոքր գավթինը (տե՛ս էջ 68-ի լուսանկարը):

Ավարտվեց վերականգնման ընթացքում գտնվող բոլոր շինությունների տանիքների կառուցումը:

Տեղադրվեցին սյունասրահի և բազիլիկ եկեղեցու, փոքր գավթի և Դադի սրբատեղիի, վերջինիս և ժամատան կցման մասերում ազբոցեմենտե ջրատար կիսախողովակները: Ծածկասալերի կառուցման ժամանակ, ցավոք, զգալի էր որակյալ կրաշաղախի բացակայությունը, որը հետևանք է ավանդական եղանակով կրաշաղախի ստացման հմտությունների և փորձառության մոռացության: Այս հանգամանքը, ինչպես նաև աշխղեկի ու վարպետների մասնագիտական անբավարար հմտությունը հանգեցրին նրան, որ ծածկի որոշ հատվածներում չապահովվեց ցանկալի ջրամեկուսացումը: Արդյունքում նախատեսվեց ամբողջ ծածկի ծածկասալերի կարանները լրացուցիչ կարանախցել՝ բացել կարանները, մաքրել, լվալ և ներարկել հիդրոմեկուսիչ շաղախ: Սրանից հետո անհրաժեշտ էր տանիքի ամբողջ մակերեսը պատել թափանցիկ հիդրոմեկուսիչ նյութով:

Շինարարության աշխղեկն էր Վ. Հարությունյանը: Վերականգնման աշխատանքները կատարում էին քարտաշ վարպետներ Վազգեն Ղուկասյանը, Տարոն Գևորգյանը, Անդրանիկ Եգանյանը (կատարել է միայն սրբատեղիի հյուսիսային պատի արևելյան խորշերի վերականգնման աշխատանքները), իսկ բանվորներն էին Դադիվանք գյուղի բնակիչներ Գեղամ և Ենոք Բաղալյանները, Գագիկ Սարգսյանը և այլք:

Պաշտամունքային կառույցների կենտրոնական մասում նախատեսված աշխատանքներն ամբողջացնելու համար 2009 թ. անհրաժեշտ էր իրականացնել հետևյալը.

1. Կաթողիկե եկեղեցի

- վերատեղադրել պատուհանների՝ անհաջող տեղադրված մետաղական ցանցերը.
- վերակառուցել խորանի սուրբ սեղանն ըստ նախագծի.
- վերականգնել արևմտյան ավանդատների՝ երկրորդ հարկ տանող աստիճանները.

2. Դադի սրբատեղի

- ավարտել դամբարանախուցը պահպանող ծավալի կառուցումը.
- ըստ նախագծի՝ կառուցել և ավարտին հասցնել խորանի սալապատումը.
- կառուցել ավանդատների հատակները և բեմի սեղանները, իսկ սրահի հատակի վրա՝ ջրահեռացման առվակ.
- հյուսիսային պատի հետևում կատարել ջրահեռացումն ապահովող աշխատանքներն ըստ նախագծի.
- տեղադրել փայտյա դռները (մեկի լուսանկարը, դրա և մեկ ուրիշի նախագծերը տե՛ս էջ 108-109) և պատուհանների ցանցերը.
- վերականգնել արևմտյան դռան բարավորը.

3. Բազիլիկ եկեղեցի

- կառուցել և տեղադրել սուրբ սեղանը.
- տեղադրել դռները և պատուհանների ցանցերը.

4. Փոքր գավիթ

- ուղղել շքամուտքի աջ եզրը.
- պատրաստել տանիքի լուսավորության անցքերի ապակե ծածկերը.

5. Սյունասրահ

- արևելյան նախագծից շեղումներով կառուցված և այդ իսկ պատճառով մասամբ քանդված կամարը կառուցել ըստ նախագծի և տրված ցուցումների.

6. Ժամատուն

- կառուցել դեպի Դադի սրբատեղի տանող աստիճանները.

- տեղադրել պատուհանների ցանցերը.
- ներսում կատարել ներարկման աշխատանքներ.

7. Բոլոր կառույցներում նախատեսված սահմաններով հեռացնել թուլացած կրասվաղը և վերստին սվաղել:

8. Իրականացնել ծածկերի կարանախցումը և ջրամեկուսացումը:

2008 թ. դրությամբ վանքում հոգևոր կամ որևէ այլ կարգի գործունեության կատարման համար դեռևս մեծ ծավալի աշխատանք կար իրականացնելու: Մասնավորապես՝ պետք էր վերականգնել տնտեսական նշանակության կառույցների ամբողջ խումբը, վերականգնված կառույցներում նախատեսել գործածման համար անհրաժեշտ շինարարական և հարդարման բոլոր աշխատանքները, բարեկարգել տարածքը:

Հյուրատան վերականգնման նախագիծը. ինչպես արդեն նշվել է, մինչև 2009 թ. վանքի վերականգնման գործընթացի ղեկավարն էր դր. Արմեն Հախնազարյանը: Շնորհակալություն ենք հայտնում նրան՝ ավելի քան 10 տարի հայրենանվեր և անխոնջ գործունեության համար: Ցավոք, 2009 թ. փետրվարի 19-ին վաղաժամ հեռացավ կյանքից:

Շնորհակալություն պետք է հայտնել նաև բոլոր մեկենասներին, որոնք, գիտակցելով Դաղի վանքի պատմական, գիտական, հոգևոր և Արցախի ազատագրումից ի վեր ստեղծված կացությունը հաշվի առնելով, ինչու չէ, նաև քաղաքական նշանակությունը հայ ժողովրդի համար, ներդրեցին իրենց լուման համալիրի վերհառնման գործի մեջ:

2009 թվականից Դաղի վանքի վերականգնման համար սկսվեց նոր փուլ, քանի որ աշխատանքները սկսեցին ֆինանսավորել ԼՂՀ իշխանությունները:

Դեռևս 2008 թ. դր. Արմեն Հախնազարյանը և Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարգև արք. Մարտիրոսյանը տեղի իշխանություններին ներկայացրել էին երիցատուն գործածելու նպատակով Դաղի վանքի հյուրատունը վերականգնելու առաջարկ: Արդեն 2009 թ. կառավարության ծրագրերում ներառվեց նաև վանքի վերականգնման գործընթացի շարունակությունը: ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչությունը, որն առ այսօր գլխավորում է Սերգեյ Շահվերդյանը, ստանձնեց հյուրատունը վերականգնելու գործընթացը: Նույն թվականին պատվիրվեց նախագծային աշխատանքների մշակումը: Իհարկե, եթե հնարավորություն ստեղծվեր իրականացնելու նաև վերջինիս վերականգնումը, ապա դա կլիներ այն նվազագույնը, որը հիմք կդառնար վանքի ապագա կենսագործունեության համար:

Նախքան նախագծի կատարումն անհրաժեշտ էր մաքրել հյուրատան փլատակները, առանձնացնել հուշարձանապատկան բեկորները: 2009 թ. հունիսին ավարտվեցին փլատակների մաքրման աշխատանքները, կատարվեցին հուշարձանի չափագրում և հետազոտում, որից հետո մշակվեց վերականգնման և օգտագործման նախագիծը (կոնստրուկտոր՝ Ալեքսանդր Համբարձումյան), որն էլ հաստատվեց Զբոսաշրջության վարչության գիտխորհրդում (01.09.2009 թ. որոշում):

Անդրադառնալով նախագծի որոշ մանրամասների՝ հարկ է նշել, որ վանքի կառույցները գործառական նշանակությամբ բաժանված են երկու հիմնական խմբի՝ պաշտամունքային և աշխարհիկ: Վերջինները տեղադրված են վանքի հարավային մասում, որոնց արևմտյան կողմում է գտնվում հյուրատունը: Այն կառուցվել է նախքան 1253 թ., քանի որ Կաթողիկե եկեղեցու արևելյան ճակատի նվիրատվական արձանագրություններից մեկում հիշվում է նշյալ թվականին Չարաբերդի Ներսես

Հյուրատան երկրորդ հարկի արևելյան սենյակի հյուսիսային մուտքը

եպիսկոպոսի կողմից այդ հյուրատանն այգի նվիրելու մասին[57]:

Հյուրատունն ի սկզբանե եղել է միահարկ: Երկրորդ հարկը հետագայում ավելացված լինելու մասին են վկայում ճարտարապետական առանձին դրվագները, մասնավորապես՝ մուտքերի կողային մասերում առկա ելուստները և դրանց համապատասխանող հանգուցային լուծումները բնորոշ են

Հյուրատան առաջին հարկի բաց սրահի թաղի արձանագրությունը, 1696 թ.

57 Դիվան..., էջ 204: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 111-112:

Հյուրատունը հարավից (լուս.՝ Տարագրոսի, 1899 թ.) և հարավ-արևելքից (լուս.՝ 1983 թ.)

ուշ շրջանին: Նույնի մասին են խոսում նաև պատուհանների մեծաչափ բացվածքները: Ճարտարապետական առանձնահատկությունները, ինչպես նաև կառուցողական և կրաշաղախի ակնառու տարբերությունները վկայում են, որ, իրոք, երկրորդ հարկն ավելի ուշ շրջանում է ավելացվել: Դա կարող էր տեղի ունենալ 1696 թ., քանի որ առաջին հարկի քաղակապ բաց սրահի թաղին կրաշաղախե ուռուցիկ տառերով արձանագրված է.

Թ(վին) ՌՃԽԵ (1696):

Հյուրատունը հարավ-արևելքից 1993 և 2008 թթ.

Հավանական է, որ երկրորդ հարկը հավելելիս ներքևի սրահը վերանորոգվել է, սվաղվել, որի ժամանակ էլ արձանագրվել է նշյալ տարեթիվը:

Բաց սրահի վերանորոգման ժամանակ վերափոխվել է առաջին հարկի կենտրոնական սրահի մեջ բացվող մուտքը, որի ներկայիս հորինվածքը բնորոշ է ԺԷ-ԺԸ դարերին: Հետագայում բաց սրահի կամարաձև բացվածքի ձախ կողմն ամրացնելու նպատակով հավելվել է որմնասյուն: Ըստ երևույթին, վերջինիս անհրաժեշտությունն առաջացել է

Հյուրատունը հյուսիս-արևելքից (լուս.՝ 1983 թ.). առաջին պլանում՝ դարպասը և հյուրատան առաջին հարկի բաց սրահի ձևափոխված մուտքը, ավելացված որմնասյունը

Պալատին կից կառույցը հյուսիս-արևմուտքից և հյուսիսային մուտքը նախքան վերականգնումը

այն պատճառով, որ երկրորդ հարկում կառուցված պատը ճշգրտորեն չի նստում առաջին հարկի համապատասխան պատին, այլ մասամբ հենված է թաղի վրա:

Հյուրատունը կցակառուցվել է իշխանական ապարանքի (առաջին հարկում տեղադրված են հնձանն ու մառանը) հյուսիսարևելյան անկյանը:

Հավանաբար ԺԷ-ԺԸ դարերում ապարանքին հյուսիսից կցակառուցվել է աշխարհիկ նշանակության երկհարկանի մի կառույց ևս, որը հյուրատան շենքից հեռու է ընդամենը 2-3 մ: Այս շենքը չունի կառուցմանը վերաբերող արձանագրություն, ուստի նրա ժամանակը որոշվում է միայն ճարտարապետական և կառուցողական առանձնահատկություններով, որոնց համաձայն՝ այն շատ մոտ է հյուրատան երկրորդ հարկին և, ամենայն հավանականությամբ, նույնպես ԺԷ-ԺԸ դարերի կառույց է:

Ներկայացվող նախագծի նպատակն էր հյուրատան և առանձին կանգնած (ապարանքին կից) շենքերը վերականգնել և գործածել որպես երիցատուն՝ համապատասխան Զբոսաշրջության վարչության հաստատած և Հայ առաքելական եկեղե-





Որպես երիցատուն նախագծված հյուրատան առաջին և երկրորդ հարկերի հատակագծերը





Որպես երիցատուն նախագծված հյուրատան հարավային և հյուսիսային ճակատները



Որպես երիցատուն նախագծված հյուրատան կտրվածքը դեպի հարավ

ցու Արցախի թեմի հետ համաձայնեցված առաջադրանքի:

Հյուրատան երկու հարկերի հատակագծային հորինվածքները միանման են՝ մեջտեղում՝ մեծ սրահ, երկու կողմերում՝ փոքրիկ սենյակներ: Բոլորի բացվածքներն էլ ուղղված են դեպի հարավ՝ բացառությամբ երկրորդ հարկի արևելյան սենյակի, որը մուտք ունի նաև հյուսիսից: Շենքը կառուցված է հարավահայաց թեք տեղանքի վրա, որի առաջին հարկի՝ ժայռի վրա խարսխված հյուսիսային որմն ամբողջությամբ ծառայում է որպես հենապատ, իսկ երկրորդ հարկի հատակը հյուսիսից հավասարվում է հողի մակարդակին:

Առաջին հարկի երեք սենյակներն էլ թաղակապ են՝ կառուցված կոպտատաշ ամուր տեղական քարատեսակներով: Մեջտեղի մեծ սրահն ունի երեք մուտք: Մեկը բացվում է դեպի հարավ, իսկ մյուս երկու՝ արևմտյան և արևելյան մուտքերով հաղորդակցվում է համապատասխան կողմերում գտնվող սենյակների հետ: Արևելյան սենյակի հարավային որմին փոխարինում է կամարակապ մեծ բացվածքը: Սա ժամանակին կարող էր ծառայել որպես գրաստների կայանատեղ:

Կառույցի առաջին հարկն ընդհանուր առմամբ բարվոք վիճակում էր: Որմերը, թաղերը, մուտքերը, պատուհանները գրեթե անվնաս էին՝ բացառությամբ արևելյան սենյակի թաղի հարավային մասի, որն էլ հարվածից վնասվել էր երկրորդ հարկի փլուզման ժամանակ (1990-ական թվականների երկրորդ կեսին): Նստվածքային երևույթներ, ճաքեր չէին նկատվում:

Երկրորդ հարկը, չնայած հատակագծային հորինվածքով կրկնում է առաջինին, սակայն տարբերվում է գործառույթով և կառուցվածքով: Առաջին հարկի նման կենտրոնական մեծ սրահի արևելյան և արևմտյան կողմերում գտնվում են թաղակապ բնակելի փոքրիկ սենյակներ, որոնք հարավային ճակատում, բացի մեկական փոքր, ունեն նաև բավական մեծ չափերի պատուհաններ: Կենտրոնական սրահը, ի տարբերություն առաջին հարկի, հարավից պատ չունի և ամբողջ ճակատով բացվում է դեպի Տրտու գետի գեղատեսիլ ձորը: Պատշգամբ-սրահը, որը հավանաբար ծառայել է որպես հյուրասրահ, ունեցել է փայտաշեն հողածածկ տանիք, իսկ կողային փոքրիկ սենյակները՝ հողածածկ քարաշեն թաղեր (տե՛ս 78 և 80 էջերի առաջին լուսանկարները):

Երկրորդ հարկը բավական վատ էր պահպանվել: Ամբողջովին քանդվել էր արևելյան սենյակը, որից մնացել էր միայն հյուսիսարևմտյան անկյան մի հատվածը (տե՛ս էջ 79-ի 2-րդ լուսանկարը): Բարեբախտաբար, պահպանվել էր սրբատաշ կրաքա-

ռով կառուցված դեպի հյուսիս բացվող մուտքի մի մասը (տե՛ս էջ 77): Կենտրոնական սրահի ծածկն ամբողջովին քանդված էր: Խարխլված ու կիսաքանդ էին արևմտյան սենյակի թաղը, հարավային և արևելյան որմերը:

Առանձին կանգնած (ապարանքին կից, հյուրատնից 2-3 մ արևմուտք տեղադրված) երկհարկանի կառույցը, որ նույնպես աշխարհիկ շինություն է, յուրաքանչյուր հարկում ունի մեկ սենյակ: Միջհարկային ծածկը, որը չի պահպանվել, եղել է փայտաշեն, իսկ երկրորդ հարկն ունեցել է հողածածկ տանիքով և կոպտատաշ քարով կառուցված թաղ: Առաջին հարկի մուտքն արևմուտքից է, իսկ երկրորդ հարկինը՝ հյուսիսից և բացվում է վանքի ներքին բակի մեջ: Հյուրատան նման այս կառույցի առաջին հարկի հյուսիսային և արևելյան որմերն էլ հենապատ են: Երկրորդ հարկում, բացառությամբ արևելյան կանգուն պատի, արևմտյանն ամբողջությամբ քանդված է, իսկ հյուսիսային և հարավային պատերը կիսով չափ են պահպանվել: Թաղը նույնպես լրիվ քանդված է: Առաջին հարկի կիսագետնափոր պատերը, բացառությամբ արևմտյանի, համեմատաբար լավ վիճակում են: Այս կառույցի երկու հարկերն էլ բնակելի են եղել:

Չափագրումներն ու տեղում կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև արխիվային լուսանկարները հնարավորություն էին ընձեռում վերականգնելու կառույցների նախնական տեսքն ամբողջությամբ: Հաշվի առնելով նրանց սկզբնական գործառույթը (բնակարան)՝ կարելի է կառույցներն օգտագործել որպես երիցատուն: Որպեսզի գործնականում կառույցների հարմարությունները բավարարեն նաև երիցատան այսօրվա պահանջներին, նախատեսվեց երկու կառույցները միացնել միմյանց նոր ավելացվող փոքրիկ ծավալով, որը կապահովի երկու կառույցների ներքին և՛ հորիզոնական, և՛ ուղղահայաց կապերը (տե՛ս երիցատան նախագիծը):

Նախագծի համաձայն՝ նախատեսվում է վերականգնել հյուրատան (առաջին ծավալ) երկրորդ հարկը՝ ըստ 1899 թ. լուսանկարի, ինչպես նաև պահպանել վերականգնվող պատերի շարվածքը և քարանյութը, իսկ հին լուսանկարից հայտնի սրբատաշ կրաքարով հատվածները՝ փոխարինել Անիի տուֆ քարով:

Նախատեսվում է վերականգնել արևելյան սենյակի հյուսիսային մուտքը նախնական տեսքով, սակայն ներսում աշխատասենյակի գործառույթ իրականացնելու նկատառումով մուտքի բացվածքը փակվում է կոպտատաշ բարակ պատով: Սա էական խաթարում չի առաջացնում շենքի ճակատային լուծման մեջ, քանի որ հստակ երևում է մուտքի նախնական ճշգրիտ տեսքը:

Երկրորդ հարկի փայտյա սյուներով պատշգամբ-հյուրասրահը վերականգնվում է նախնական տեսքով, և տեղադրվում են ապակե լուսամուտներ, որոնք չեն խաթարում հարավային ճակատի ճարտարապետական և գեղագիտական նախնական լուծումները՝ կենտրոնական մեծ և կողքերից փոքր բացվածքների մութ և խորքային ընկալումներով:

Նման լուծում է տրվում առաջին հարկի արևելյան բաց սրահին, որը կծառայի որպես ննջարան կամ հանգստի սենյակ: Առաջին հարկի գործառական կապը մյուս մասնաբաժինների հետ իրականացնելու համար կենտրոնական սրահի հյուսիսային պատի արևմտյան որմնախորշը վերածվում է բացվածքի, որտեղ և տեղադրվում է դուռ: Ընդհանրապես բոլոր մյուս նախնական պատուհանների և դռների բացվածքներում համապատասխանաբար տեղադրվում են փայտի մշակվածքով ալյումինե պատուհաններ և դռներ: Առաջին ծավալի՝ հյուրատան հատակը նախատեսվում է իրականացնել սրբատաշ բազալտի շարվածքով:

Երկրորդ ծավալը՝ ապարանքին կից երկհարկանի կառույցը, նույնպես վերականգնվում է նախնական տեսքով: Ամբողջացվում են առաջին և երկրորդ հարկի՝ դեպի դուրս բացվող կիսաքանդ մուտքերը: Վերականգնվում է, ըստ երևույթին, ապարանքի մեջ բացվող հարավային մուտքը (այդ հատվածն այժմ քանդված է): Այստեղ, ինչպես նաև երկրորդ հարկի հյուսիսային մուտքի բացվածքի մեջ դռան փոխարեն տեղադրվում է մեկական պատուհան:

Վերականգնվում են արևմտյան պատը և մյուս պատերի բացակայող մասերը: Երկրորդ ծավալի կապը մյուս մասերի հետ ապահովելու համար առաջին և երկրորդ հարկերի արևելյան պատերի մեջ գտնվող խորշերը բացվում և դառնում են մուտքեր:

Միջհարկային ծածկը, ինչպես և նախապես եղել է, նախատեսվում է իրականացնել փայտից: Երկրորդ հարկը նախկինի նման ծածկվում է կոպտատաշ քարե թաղով, իսկ վրան կառուցվում է հողե տանիք: Առաջին հարկի հատակը սալապատվում է բազալտով:

Վերոնշյալ առաջին և երկրորդ ծավալների (նախնական ծավալներ) միջև կապը ստեղծվում է նոր միջին ծավալի միջոցով, որտեղ նաև նախատեսվում է իրականացնել խոհանոցի և սանհանգույցի գործառույթները: Նոր ծավալը կառուցվում է՝ արտաքինից հավատարիմ մնալով նախնական շինարվեստին, սակայն պատերի հատույթներում կիրառվում են ժամանակակից երկաթբետոնե կառուցատարրեր (կոնստրուկցիաներ): Արտաքին ճակատում պահպանվում են շարվածքի ձևը և համապատասխան հատվածի քարի տեսակը: Փաստացի նախնական երկու կառույցները միացնող երրորդ նոր ծավալը ծածկում է առաջին ծավալի արևմտյան հատվածի՝ 6,59 մ երկարությամբ խուլ



Տաճարի վերականգնման նախագիծը. հատակագիծ

պատի մասը, սակայն չի խաթարում ամբողջ կառույցի ճարտարապետության գեղագիտական ընկալումը: Նոր ծավալի ներքին կապերը նախնականի հետ, ինչպես տեսանք, կատարվում են սկզբնական ծավալների պատերի որոշ խորշեր մուտքերով փոխարինելու միջոցով, իսկ առաջին և երկրորդ հարկերի կապն ապահովում են նոր ծավալում տեղադրված փայտե աստիճանները:

Նախատեսվում է իրականացնել ջրամատակարարում վանքի հյուսիսային մասով անցնող ջրագծից և էլեկտրասնուցում հարավային դարավանդի վրա տեղադրված էլեկտրասյունից, ինչպես նաև կառուցել կեղտաջրերի հեռացման հոր վանքի հարավային մասում:

Տաճարի վերականգնման նախագիծը. ցավոք, 2009 թ. ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչությունը չկարողացավ ֆինանսավորել հյուրատան վերականգնման աշխատանքները, սակայն միջոցներ տրամադրեց համալիրի տաճարի վերականգնման նախագծի մշակման համար: Նախապես չափագրելուց և հետազոտական աշխատանքներից հետո այն ավարտվեց 2010 թ. գարնանը և հաստատվեց Զբոսաշրջության վարչության գիտամեթոդական խորհրդում (31.05.2010 թ., № 01):

Տաճարի մուտքը և շինարարական արձանագրությունը





Տաճարի վերականգնման նախագիծը. հարավային և արևմտյան ճակատները





Տաճարի վերականգնման նախագիծը. արևելյան, հյուսիսային ճակատները և կտրվածք դեպի արևելք


ՊԱՐԱԳԾԱՅԻՆ Ե/Բ ԳՈՏԵԿԱՊԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԱՅՈՒՄԻՍ
1 - 1
5 - 7
1
3 Ø12
2
Ø6
1
3 Ø12
3
Ø12
30
40
30
50
1
3+3 Ø12A500c
2
Ø6AI
(բ. 30 սմ)
3
Ø12A500c
(բ. 90 սմ)
30*
50
100 սմ 0 100 200 300 400 500
Սանդուղքի վերնամասի կենտրոնական ելուստի ամրանավորումը
Ամրանավորումներ
Ամրանավորման ցանցերի դասակարգումներ
Ամրանավորման ցանցերի դասակարգումներ
Ամրանավորման ցանցերի դասակարգ



Տաճարի վերականգնման նախագիծը. ժամանակավոր ամրացումներ (կոնստրուկտորական մաս)

Տաճարի ճարտարապետական վերլուծությունը և նախագծի հիմնական դրույթները հետևյալն են.

Ըստ հարավային ճակատին փորագրված արձանագրության՝ կառուցվել է 1211 թ.

Թ(վին) ՈԿ (1211), ես՝ Գրիգոր/էս, որդի Հասան/ա, շինեցի զտաճ/արս յիշատակ / հոգո իմո, յաղ/աթս յիշեցէք:

Մինչ այժմ բոլոր հետազոտողները տաճարի կառուցման թվականը համարել են հենց արձանագրության մեջ հիշատակվածը և կառույցն իր ներկայիս ամբողջական ծավալով ու ծավալատարածական հորինվածքով ընդունել այդ թվականին ստեղծված և մեզ հասած շինություն: Սակայն շինարվեստի և նյութի, կառուցողական հմտության և որակի մանրազնին հետազոտությունները շինարարական շերտագրության հարցում էապես այլ կարծիքի են հանգեցնում: Այս մասին նշվել է դեռևս նախագծային աշխատանքները սկսելուց առաջ[58], որտեղ ներկայացված են վերակառուցման որոշ փաստարկներ, սակայն շտապողաբար սյուների շինանյութը համարվել է «կրաբետոնե քար» տեղական ամուր ավազաքարի փոխարեն:

Նախքան այս հարցին անդրադառնալը պարզենք, թե տաճարն ինչպիսի կառուցվածք և ծավալային հորինվածք ունի:

Տաճարը հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից

58 **Այվազյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 210:

Տաճարը հյուսիս-արևմուտքից, ներքին տեսքը դեպի հյուսիս-արևմուտք և արևելք

Հատակագիծը քառակուսի է՝ արտաքին 12,12 x 12,12 մ չափերով (հյուսիսային և արևելյան պատերը մի քանի սանտիմետրի շինարարական շեղումներ ունեն): Պատերի հաստությունը տատանվում է 98-103 սմ միջև, որոնց դրսի մակերևույթներն ուղղահայաց չեն, այլ թեքված են դեպի ներս (կառուցված են էնտազիսով)՝ շինության կայունությունն առավել ապահովելու նպատակով: Կենտրոնական մասում տեղադրված են չորս շրջանաձև սյուներ, որոնք կրում են ութանիստ բրգաձև երդիկի և թաղերի ծանրությունը և միմյանց կապվում սլաքաձև կամարներով, որոնք ստեղծում են երդիկատակ քառակուսին, որից էլ անցումն ութանիստ երդիկին իրականացված է առագաստաձև չորս տրոմպներով: Երդիկն ավարտվում է շրջանաձև անցքով, որտեղ տեղադրված է եղել 200 x 165 սմ չափերով միակտոր գլխաքարը (այժմ ընկած է տանիքի արևելյան լանջին, տե՛ս էջ 92-ի լուսանկարը): Կենտրոնական սյուները պատերին միացված են ութ փոքրիկ նույնպես սլաքաձև կամարներով, որոնցից վեցի սյուներին հակադիր ոտքերը մտնում են պատի հարթության մեջ և նստած չեն որմնասյուների վրա: Այս ութ փոքր կամարների վրա կան հենց կամարի հաստությամբ պատի զանգվածներ, որոնց վրա են հենվում կողային թաղերը: Հարավային պատին ներսից կցված երկու որմնասյուների միջոցով ստեղծվել է եռաթռիչք որմնակամարաշար, որոնցով կազմված պատի հարթության մեջ հենվում են նշված ութ փոքր կամարներից երկու հարավայինները:



Տաճարը ներքին տեսքը դեպի հարավ, արևմուտք, հյուսիս-արևելք և հարավարևելյան սյունը

Տաճարի երդիկը, նրա գլխաքարը և ներքին տեսքը երդիկից

Ընդհանուր ծավալատարածական հորինվածքը՝ հատակագծային քառակուսի պատերով, կենտրոնական չորս սյուներով և նրանց վրա նստող ութանիստ երդիկով, բնորոշ է դասական գավիթներին, սակայն տարբերվում է ծավալային որոշ մանրամասների լուծումներով: Մասնավորապես՝ կենտրոնական չորս սյուներով գավիթների կողային և անկյունային թռիչքների ծածկերն առավելապես հանդիպում են կիսագլան (միակոր թաղ), ստալակտիդավոր, հարթ սալաքարերով, հատած բրգաձև, խաչվող թաղերով և այլ լուծումներով (Սանահնի Ամենափրկիչ, Հաղարծնի Սբ. Գրիգոր եկեղեցիների, Կեչառիսի, Սաղմոսավանքի, Հովհաննավանքի գավիթները և այլն), որոնք կառույցի մեջ հանդես են գալիս ինքնուրույն ծավալներով՝ տվյալ առանձնացված հատվածը ծածկելու համար և միասին չեն կազմում որևէ ընդհանուր ծավալային և կոնստրուկտիվ հորինվածք:

Դաղի վանքի տաճարի դեպքում բոլոր կողային թռիչքների ծածկերն ունեն քառորդ գլանային (անկանոն շրջագծով) հորինվածք և ներսի ամբողջ



Կենտրոնական սյուներով և անսյուն գավիթների սխեմաներ

տարածության մեջ ստեղծում են կոր նիստերով հատած բուրգի միասնական ծավալ: Այս տիպի ծածկերն ավելի բնորոշ են անսյուն՝ խաչվող կամարներով գավիթների հորինվածքին (Արատես, Խորակերտ, Աճարկուտի Առաքելոց վանք և այլն), որտեղ որմնասյուների վրա նստած կամարներին հենվող թաղերը ստեղծում են վերը նկարագրված կոր նիստերով հատած բուրգի ծավալը[59], իսկ կենտրոնական մասում երդիկներն ունենում են տարատեսակ լուծումներ:

Տաճարի ծավալատարածական հորինվածքը ներկայացնում է կենտրոնական քառասյուն, սա-

Գլխատներ Բայրաքտար, Արծվանիկ և Վարդենիկ գյուղերում

կայն մեկ ընդհանուր ծավալային ծածկով կառույց: Այսինքն՝ Դաղի վանքի տաճարը վերը նշված կենտրոնական չորս սյուներով և անսյուն՝ խաչվող կամարներով կառույցների միջանկյալ՝ համադրված տարբերակն է և այս առումով ինքնատիպ է:

Տաճարի ծածկի ծավալային նման լուծումը հաճախ հանդիպում է գլխատների փայտաշեն ծածկերում, որտեղ կողային թռիչքները միասին, բացի հարթ փայտածածկի տարբերակից, նույնպես կազմում են հատած բրգաձև ծավալ միայն ոչ թե կոր, այլ հարթ մակերևույթներով, իսկ կենտրոնում «հազարաշեն» կամ բրգաձև երդիկն է[60]:

Հայտնի է, որ ժողովրդական բնակելի գլխատներն ու գավիթներն ունեն հորինվածքային նմանություններ[61]: Դաղի վանքի տաճարում ակնհայտորեն նկատվում են գործառույթներով միմյանց նման քարաշեն՝ տաճար-ժողովասրահ, ընդունելությունների սրահ և փայտաշեն՝ գլխատուն-հյուրասրահ կառույցների և՛ ծագումնաբանական, և՛ հորինվածքային, և՛ ճարտարապետական մտածողու-



թյան նույնությունը և փայտի ճարտարապետությանը հատկանշական տարրերի վերարտադրումը քարակերտ կառուցվածքներում:

Համեմատելով տաճարի և գավիթների ճարտարապետությունը՝ կարող ենք նաև նշել, որ տաճարի վերոհիշյալ համադրված տարբերակում ծածկի նման հորինածքը կարող է լինել ԺԳ դարում արդեն

59 Սխեմաներն արտատպված են **Мнацаканян С.**, “Архитектура Армянских притворов” (էջ 16) գրքից:

60 Սխեմատիկ վերևակազմությունը և գծագրերն արտատպված են **Ն. Պապուխյանի՝** «Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը» (Երևան, 1972, էջ 56, 146) գրքից:

61 **Мнацаканян С.**, նշվ. աշխ., էջ 19-20:

կատարելության հասած անսյուն գավիթների ծածկերի առաջնեկներից մեկը:

Տաճարի հյուսիսային պատը բարձրության ավելի քան երեք քառորդ մասով վանական համալիրի վերին՝ պաշտամունքային կառույցներով հարթակի տվյալ հատվածի համար հենապատի դեր է կատարում, իսկ կառույցի արևելյան և արևմտյան պատերին կից են համապատասխանաբար «զտներ եւ զսրահս»-ը և սեղանատունը խոհանոցով: Միակ ազատ մնացած պատը հարավայինն է, որն էլ ամենաշատն է վնասվել դարերի ընթացքում:

Տաճարը կառուցված է հիմնականում կոպտատաշ և անտաշ տեղական բազալտային ամուր քարատեսակներով: Սրբատաշ հատվածներում՝ սյուներ, սյան խարիսխներ և խոյակներ, կամարներ, քիվեր, գործածվել է ամուր ավազաքար, իսկ դրսում ճակատային քիվատակերի 4-5 շարք անկյունաքարերը կրաքարից են: Հատակը կրաշաղախով հարթեցված է եղել, որից պահպանվել են որոշ հատվածներ: Հյուսիսային զույգ սյուներից դեպի հյուսիս հատակն աստիճանաձև (երկու աստիճան) բարձրանում է, առաջին աստիճանը՝ 50 սմ բարձրությամբ և մոտ 195 սմ հարթակով, իսկ երկրորդը՝ համապատասխանաբար 38 սմ և մոտ 42 սմ: Ամենայն հավանականությամբ, աստիճանաձև բարձրացումները նախատեսված են եղել հասարակական ու կրոնական տարբեր դիրք ունեցող անձանց համար, ընդ որում, երկրորդ աստիճանը՝ «բարձերի տեղ»: Հատակի կենտրոնական մասում, ըստ երևույթին, եղել է կրակարանի՝ օջախի կամ ջրահեռացման համար նախատեսված տեղը (տե՛ս էջ 92-ի ներքին տեսքի լուսանկարը), որի կառուցվածքը պետք է ուսումնասիրել վերականգնողական աշխատանքների ընթացքում և համապատասխան միջոցներ ձեռնարկել պահպանության համար:

Կառույցի տանիքը հողածածկ է, չնայած որ ունի բավական մեծ՝ 38° թեքություն, որի կառուցվածքը հիմնականում հողի տակ է թաքնված, և այն կարելի է ենթադրել միայն տեղ-տեղ մերկացած անտաշ քարակույտերից: Երդիկի անցքից ճառագայթաձև ուղղություններով դեպի պատերի անկյուններն են իջնում ցածր, միջինը 30 սմ բարձրությամբ, անտաշ քարերով և անկանոն շարված մոտ 50 սմ լայնությամբ պատեր: Այս շարվածքները միջնամասում միմյանց են կապվում հորիզոնական նմանօրինակ պատերով: Սրանից կարելի է եզրակացնել, որ հողե տանիքի մեջ՝ թաղի լիցքի վրա, նման կառուցվածքը վերը նշված թեքության պատճառով պետք է ծառայեր որպես հողի սահքը կանխելու միջոց: Միևնույն ժամանակ ճառագայթաձև պատերը նպաստում են, որ տանիքի հողե ծածկը բրգաձև ծավալ ընդունի՝ դրանով իսկ արտահայտելով ծածկի ներքին բրգաձևությունը նաև դրսում: Տանիքի հողածածկի մեջ թաքնված այս կառուցվածքներն ավելի մանրամասն կուսումնասիրվեն

Տաճարի հարավային պատին կից որմնասյունը և արևմտյան պատի որմնախոյակի վրա հանգչող հարավային պատի որմնակամարը

վերականգնման աշխատանքների ընթացքում, երբ հողը կհեռացվի (այդ ժամանակ, եթե անհրաժեշտություն առաջանա, նախագծում կարվեն համապատասխան փոփոխություններ):

Այժմ անդրադառնանք կառույցի շինարարական ժամանակաշրջաններին: Նախ միանգամից նշենք, որ տաճարը ենթարկվել է վերակառուցման: Հարավային պատի որմնասյուները միաձույլ չեն շարված պատի հետ, այլ կցված-հենված են պատին, նույնիսկ պատի կրաշաղախե սվաղը նկատվում է, որ շարունակվում է որմնասյուների հետնամասում: Այսինքն ստացվում է, որ կառուցվել է պատը, սվաղվել-հարդարվել է կրաշաղախով, և դրանից հետո են միայն կառուցվել որմնասյուները: Կառուցողական նման տեխնիկայով են իրականացվել նաև նույն որմնասյուների վրայի որմնակամարները: Հատկանշական է, որ որմնասյուների և որմնակամարների խոյակներն ագուցված են պատերի մեջ և կարծես թե միաձույլ և միաժամանակ են կառուցվել, սակայն մանրազնին ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որմնախոյակների շրջանում պատի շարվածքը հստակորեն տարբերվում է նույն պատի մնացյալ ողջ հատվածից, առավել ևս, որ հատկապես այդ մասերում կրասվաղը միտումնավոր թափված է: Հետևաբար այս մասերում ժամանակին քանդել-փորել են պատը՝ որմնախոյակները նրա մեջ ագուցելու համար: Նույն կերպ չեն վարվել որմնասյուների և որմնակամարների պարագայում այն պատճառով, որ դա կնշանակեր քանդել ամբողջ պատը և նորից կառուցել: Նույն՝ հարավային պատի վրա արտաքուստ ակնհայտորեն նկատվում են կոպտատաշ շարվածքի տարբերություններ ներքևի մասում՝ մինչև 5,3 մ նիշը և դրանից վեր՝ մինչև քիվատակը (տե՛ս էջ 96-ի լուսանկարը): Նույն՝ 5,3 մ նիշի վրա փոխվում է նաև շինանյութը: Անկյունաքարերը ներքևում կոպտատաշ բազալտային քարեր են, իսկ նշյալ մակարդակից վեր՝ կիսասրբատաշ դեղնակարմրավուն կրաքար: Սրանից հետևում է, որ տեղի է ունեցել պատի վերակառուցում. ավելացվել են որմնամոյթերը որմնակամարներով, բարձրացվել է պատի նիշը: Կառույցի մյուս երեք պատերի արտաքին մակերևույթները նույն կառուցվածքն ունեն և վստահաբար ենթարկվել են համանման փոփոխությունների:

Ներսում պատերի շարվածքի տարբերություններ այժմ նկատելի չեն, քանի որ սվաղը խանգարում է մանրազնին դիտարկելուն: Նշյալ տարբերությունները կարող էին և չլինել, քանի որ արդեն 4,8 մ նիշից սկսվում են թաղերը, իսկ փոփոխությունները սպասելի էին դրսի նույն՝ 5,3 մակարդակից հետո:

Սյուները, որմնասյուները, կամարները, թաղերը և երդիկը կառուցված են միաձույլ, միաժամանակ և նույն քարատեսակներով՝ կոպտատաշ բազալտով և ավազաքարով: Այսինքն՝ ներսի կրող կոնստրուկտիվ համակարգը (բացի պատերից) կառուցվել է միասնաբար: Այս ամենի հետ մեկտեղ թաղերի և պատերի միացման ամբողջ պարագծով կրասվաղը թափված է, որը, ըստ երևույթին, հետևանք է կա՛մ սվաղի նյութի բաղադրության փոփոխության, կա՛մ վերակառուցումների (տե՛ս 90-91 էջերի լուսանկարները): Սվաղի նման մանրամասները և միաձույլ կրող կառուցվածքային համակարգը դիտարկելով հարավային պատին կցակառուցված որմնասյուների և որմնակամարների (մաս են կազմում կոնստրուկտիվ ողջ համակարգի) հետ՝ եզրակացնում ենք, որ այն վերակառուցման արդյունք է (բացառությամբ պատերի):

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ տաճարն ունեցել է շինարարական առնվազն երկու փուլ (հնարավոր են նաև փոքրածավալ նորոգումներ): Առաջին փուլից մեզ են հասել քառակուսի հատակագծով պատերը և միգուցե նաև կենտրոնական օջախի կամ ջրահեռացման տեղը, իսկ երկրորդ փուլում կատարվել են բոլոր վերոնշյալ վերակառուցումները: Կարելի է նաև եզրակացնել, որ շինարարության առաջին փուլում տաճարն ունեցել է փայտյա կառուցողական ներքին համակարգ՝ փայտյա սյուներ, ծածկ և երդիկ, որոնք հետևանք են ժողովրդական գլխատան նշյալ համակարգի ժառանգականության:

Տաճարի վերակառուցման պատճառ կարող էր դառնալ ժամանակին փայտյա համակարգի քայքայումը, ինչպես նաև Դադի վանքի նման հռչակավոր համալիրում քարաշեն և գեղեցկատես շինություն՝ ժողովասրահ, հավաքատեղի, խրախճանասրահ ունենալու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է կառույցի հիմնադրման և վերակառուցման ժամանակագրությանը, ապա կարծում ենք, որ մինչև 1211 թ. ևս վանքում «տաճար»-ի գործառույթը բավարարող կառույցի անհրաժեշտությունը եղել է, քանի որ վանքն այդ ժամանակ արդեն առաջնորդանիստ էր: Հիմք ընդունելով վերևում ասվածը՝ կարելի է նշել նաև, որ կառույցը կարող էր հիմնադրված լինել դեռ մինչև նշյալ թվականը, իսկ արդեն վանքի բեղուն շրջանում՝ 1211 թ. (ինչպես վկայում է շինարարական արձանագրությունը), տեղի ունենալ վերը նկարագրված մեծածավալ վերակառուցումը:

Գիտավերլուծական տեսանկյունից կարելի է նշել. քանի որ վերակառուցված հորինվածքով տաճարն ունի քառասյուն և անսյուն գավիթների միջանկյալ լուծում, ապա ժամանակագրորեն նույնպես պետք է միջանկյալ դիրք գրավի ԺԲ դարի վերջից մինչև ԺԳ դարի սկիզբը[62] և դիտարկվի մեկից մյուսին անցման հորինվածքային նմուշ: Շինարա-

62 Անսյուն գավիթներից վաղագույնը համարվում է Հաղպատի գավիթը՝ կառուցված 1209-1221 թթ., իսկ ԺԳ դարի կեսերին նման հորինվածքն արդեն կատարելության էր հասել (**Мнацаканян С.**, նշվ. աշխ., էջ 76-93):

Տաճարը հարավ-արևելքից

ական առումով որպես փաստարկ կարող է դառնալ 1211 թ. կրող արձանագրությամբ քարի տեղադրությունը: Այն ագուցված է միակ մուտքի անմիջապես վերևի ձախ անկյունում մուտքի կամարի կենտրոնաձիգ քարերի փոխարեն (տե՛ս էջ 85-ի լուսանկարը): Տպավորություն է ստեղծվում, որ կամարի քարերը հեռացվել են, և դրանց փոխարեն արձանագրությամբ քարն է տեղադրվել: Ինչ վերաբերում է բուն արձանագրությանը, ապա նկատի ունենալով իրականացված աշխատանքների նշանակալի ծավալները՝ նրանում հիշատակվող Հասան Մեծի որդի Գրիգորեսը միանգամայն կարող էր կառույցը վերհառնելու պատիվն ամբողջությամբ իրեն վերագրել՝ արձանագրելով «շինեցի զտաճարս»:

Տաճարը, վերակառուցումներով հանդերձ, պահպանվել է ամբողջական տեսքով: Խարխլված են առանձին հատվածներ: Տեղահանված է երդիկի գլխաքարը (տե՛ս էջ 92-ի երկրորդ լուսանկարը): Երդիկի անցքի քիվերից տեղում պահպանվել են երկուսը, մեկը՝ ամբողջական, մյուսը՝ կոտրված (տե՛ս էջ 92-ի առաջին լուսանկարը):

Տանիքի հողածածկը հիմնականում գոյություն ունի, բացակայում է երդիկին հարակից և հարավային լանջից որոշ հատվածների հողը: Տանիքը ծածկված է խիտ բուսականությամբ, կան նաև փոքրիկ ծառեր (նման մի ծառին է հենվել և պահպանվել տեղահանված և ցած սահած գլխաքարը):

Անձրևաջրերը թափանցում են տանիքի հողածածկից ու թաղերից և ներսում ստեղծում խոնավություն ու կաթոցներ: Արտաքուստ պատերի վերին հատվածներում կրաշաղախը քայքայվել է, իսկ քարերը՝ անջատվել միջուկից: Առկա են նաև բավականաչափ քայքայված և ճաքճքված քարեր: Պատերի սալածև քիվերի շուրջ 40 %-ը բացակայում է, իսկ պահպանվածները շաղախից անջատված և մասամբ էլ քայքայված են: Հարավային պատը մի քանի տեղից ունի միջանցիկ ճաքեր: Հատկապես վտանգավոր է հարավարևելյան անկյանը հարակից ճաքը, որի հետևանքով այդտեղ պատերը փաստորեն իրարից անջատվել են: Ճաքեր են նկատվում նաև արևելյան և արևմտյան պատերին: Ներսում հատակի կրասվաղը, բացառությամբ առանձին փոքր հատվածների, մեծ մասամբ քայքայված է: Հատվածաբար թափված և քայքայված է նաև պատերի կրասվաղը: Կամարների վրա նկատելի են ճաքեր: Հատկապես վնասված են հարավային սյուների խարիսխները, որոնց քարերն ամբողջովին ճզմված և կոտրված են:

Նախագծով (գծագրերը տե՛ս 86-89 էջերում) կոնստրուկտորական մասի հեղինակն է Ս. Նալբանդյանը) նախատեսվում է իրականացնել ամբողջական վերականգնում՝ հաշվի առնելով նաև կառույցի հետագա շահագործման հնարավորությունը: Առաջարկվում է.

Տաճարի հարավարևմտյան և հարավարևելյան սյուների խարիսխները

ա. Ամրացնել հարավային պատի հիմքերը կոնստրուկտորական նախագծի համապատասխան:

բ. Տաճարի շինարարական աշխատանքների անվտանգության համար ներսում իրականացնել ժամանակավոր հենակների համակարգ, որն իր վրա է կրելու ծածկի բեռնվածությունը մինչ աշխատանքների ավարտը, որից հետո կապամոնտաժվի:

գ. Ըստ ճարտարագիտական ուսումնասիրությունների՝ անհրաժեշտ որոշ հատվածներում կատարել երկաթբետոնե միջամտություններ, առանց որի կվտանգվի կառույցի կայունությունը: Դա ապահովելու համար քիվերի ետնամասով՝ նրանից մի փոքր ներքև, ինչպես նաև երդիկի հիմքի մոտ, նախատեսվել են երկաթբետոնե գոտեկապեր, իսկ թաղերի վրա՝ մետաղական մանրացանցով բետոն:

դ. Վերականգնել տանիքի հողածածկը՝ նախատեսելով ժամանակակից հիդրոմեկուսիչ նյութերի և ծածկի որոշակի շերտերի կիրառում, մասնավորապես՝ երկշերտ իզոգամ: Հիդրոմեկուսացնող շերտը պետք է ունենա ջուրը դեպի ջրհորդաններ ուղղորդող ջրահեռացման համապատասխան ուղղություններ: Ջրհորդանները պետք է տեղադրել հարավային և հյուսիսային պատերի քիվերի տակ: Նախագծով առաջարկվող հողածածկը տարբերվում է կառույցի նախնական հողածածկից, քանի որ ունենալու է հիդրոմեկուսիչ շերտ և խճային լիցքեր:

Մեթոդական շեղումը վերականգնման որոշ սկզբունքներից (կիրառել շինարարական ժամանակակից նյութեր), այնուամենայնիվ, անհրաժեշտ է, քանի որ նախնական կավահողային լիցքերով հողի ծածկ ստանալուց հետո հարկավոր կլինի իրականացնել ամենօրյա խնամք և հսկողություն, որը ներկայիս պայմաններում Դաղի վանքում դեռևս անհնար է: Բացի այդ՝ ավանդական հողե ծածկն իր մեջ ժամանակին ինչ-որ չափով խոնավություն է պահել: Այժմ հուսով ենք, որ ներկայացված տարբերակով ամբողջովին կկանխվի ջրերի ներթափանցումը:

ե. Վերականգնել երդիկի պակասող հատվածները: Անհրաժեշտ է վերատեղադրել տեղահանված մեծածավալ գլխաքարը, որի վրա անձրևաջրերից պաշտպանելու համար տեղադրել մետաղական կմախքով ապակե ծածկ:

զ. Վերականգնել պատերի ամրությունն ու նախնական տեսքը: Այդ նպատակի համար անհրաժեշտ է կատարել թուլացած մասերի քանդման-վերաշարման աշխատանքներ, իսկ բացակայող մասերը լրացնել նոր քարերով, ընդ որում, պատի յուրաքանչյուր հատվածում շարվածքը պետք է համապատասխանի նախնականին: Կոպտատաշ և խառը շարվածքի հատվածներում նոր շարն իրականացնել բազալտով և համապատասխան ձևով: Կրաքարե կիսասրբատաշ անկյունաքարերի պակասող մասերը լրացնել համանման տուֆ քարով:

է. Վերականգնել հարթ սալաքարերից պատրաստված քիվերը քանդում-վերաշարումով և նոր տաշուշարով:

ը. Նույն կերպ վերականգնել քիվերից վերև գտնվող եզրապատը:

թ. Վերականգնել մուտքի պակասող հատվածները և տեղադրել ամուր փայտից դուռ:

ժ. Տաճարի հյուսիսային պատին կից կառուցել ջրատար առվակ՝ մակերևութային և տանիքից թափվող ջուրը հեռացնելու նպատակով:

ժա. Ներսում ամբողջովին փոխել հարավակողմյան սյուների խարիսխները: Այդ նպատակով նախատեսվել է ժամանակավոր ամրացումների համակարգ (տե՛ս էջ 89-ի գծագրերը), որը մինչև խարիսխների ջարդոտված քարերի փոխարինումը բազալտե նոր քարերով իր վրա կվերցնի սյուների բեռը: Վերջիններիս ներքևի հատվածներում առկա է քարի շերտավորում, որն անհրաժեշտ է վերականգնել կցոնման միջոցով: Ներսում պատերն ու կամարները ամրացնելու նպատակով նախատեսվում է կատարել թույլ հատվածների քանդման-վերաշարման և պակասող մասերը նոր տաշուշարով լրացնելու աշխատանքներ:

ժբ. Պատերի, կամարների և թաղերի վրա գոյություն ունեցող ճաքերը ներարկել հատուկ պատրաստված շաղախով:

ժգ. Վերականգնել ներսի կրասվաղը: Դրա համար նախատեսվում է մաքրել պատերը թուլացած կրասվաղից, այնուհետև լվանալ բոլոր կարանները և կատարել կրաշաղախե երկշերտ սվաղում:

ժդ. Վերականգնել հատակը: Նախապես այն եղել է կրասվաղով հարթեցված, որից այժմ շատ բան չի պահպանվել: Հաշվի առնելով շահագործման ժամանակակից պայմանները՝ նախատեսվում է նախնական նիշերով կատարել սալահատակում: Չպետք է սալապատվի միայն կենտրոնական հատվածը, որտեղ շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է կատարել հետազոտում օջախի կամ ջրահեռացման տեղի կառուցվածքի մանրամասները պարզելու համար: Դրանից հետո կարվի այդ հատվածի լրացուցիչ նախագիծը:

ժե. Կատարել որոշակի քանդման-վերաշարման և նոր տաշուշարի աշխատանքներ տաճարին կից կառույցներում, որտեղ երևում են տաճարի պատերը:

ժզ. Անվտանգության նկատառումներից ելնելով՝ տաճարին արևմուտքից կից սեղանատան երկրորդ հարկի բնակելի խցերից մեկի կիսաքանդ թաղն ամրացնել քանդման-վերաշարման միջոցով:

Ըստ նախագծի, հեղինակային և տեխնիկական հսկողությունից բացի, նախատեսվում է նաև հնագետի մասնակցությունը հողային աշխատանքների կատարման ժամանակ:

Հյուրատան վերականգնման շինարարական աշխատանքները. վերսկսվեցին 2010 թ. ապրիլից Դաղի վանքի հյուրատան առաջին հարկի թաղերի վրայի փլատակների մաքրումով, որոնք առաջացել էին երկրորդ հարկի փլուզման պատճառով: Անձրևների հետևանքով վերականգնումը 20 օրով հետաձգվեց: Վերսկսվելով մայիսի վերջից՝ այն տևեց մինչև դեկտեմբեր ամիսը: Այդ ընթացքում հիմնական աշխատանքները կատարվում էին հյուրատան արևելյան ծայրի առաջին և երկրորդ հարկի մասնաբաժիններում: Քանդվեցին կոպտատաշ շարվածքով խարխլված, թեքված և քայքայված պատերն ու վերաշարվեցին՝ բացակայող հատվածները լրացվելով նոր քարերով: Կոպտատաշ մասերում կիրառվեցին տեղական ամուր քարատեսակներ, իսկ սրբատաշ կրաքարի փոխարեն՝ Անիի քարհանքի տուֆը: Վերականգնման ընթացքում եղան դիտողություններ այն պատճառաբանությամբ, որ ի սկզբանե համալիրում տուֆ չէր գործածվել, և այն համահունչ չէ հուշարձանի հին քարերին: Տուֆի գործածումը պայմանավորված էր նրանով, որ մինչ այժմ չի գտնվել խեցային կրաքարի՝ ի սկզբանե շահագործված հանքավայրը, և փոխարենը համալիրում գործածվել է երանգով կրաքարին մոտ տուֆը, որը դեռ Կաթողիկե եկեղեցու վերականգնման ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման գործակալության գիտամեթոդական խորհուրդը թույլատրել էր գործածել (քաղվածք 13.12.2002 թ. նիստի № 09 արձանագրությունից):

Հյուրատան վերականգնման համար տուֆի գործածումը պայմանավորված էր նաև հետևյալով.

ա. Այդպես կարելի է հասնել գունային տեսանկյունից համալիրի բոլոր կառույցների ներդաշնակության:

բ. Ճիշտ է, սրբատաշ տուֆը տեղական ամուր քարատեսակների հետ խիստ հակադրության (կոնտրաստի) մեջ է հայտնվում թե՛ գունային, թե՛ նյութի մշակման բնույթի՝ մակատեսքի (ֆակտուրայի) առումով, սակայն ի սկզբանե հյուրատան որմերում կիրառված սրբատաշ կրաքարը նույն առումներով նույնպես խիստ հակադրության մեջ է եղել բոլոր մյուս քարատեսակների հետ: Հետևաբար տարբեր ժամանակաշրջանների կառուցողական դրոշմի առկայությամբ պայմանավորված՝ հուշարձանում պահպանվում է շինանյութի նախնական մտահղացման առանձնահատկությունը՝ համատեղ կիրառված քարատեսակների յուրօրինակ հակադրությունը:

Այսուհանդերձ, բացասական երևույթ կարելի է համարել լոկ այն, որ փոխվում է նյութի՝ կրաքարայինից տուֆայինի ընկալումը:

գ. Պահպանվում են նաև ֆիզիկամեխանիկական պահանջները, նույնիսկ տուֆն ավելի ամուր և անջրաթափանց է, քան ի սկզբանե օգտագործված կրաքարը:

Հյուրատունը հյուսիսից վերականգնումից առաջ և վերականգնման ընթացքում

Նախնական քարհանքը չբացահայտելու կամ կրաքարի պահանջված հատկանիշներով այլ քարատեսակ չհայտնաբերելու պարագայում մյուս կառույցների համապատասխան մասերում նույնպես պետք է շարունակել նշված երանգի տուֆի օգտագործումը:

Վերականգնման շինարարական աշխատանքներն ընթանում էին բավական դանդաղ: Կոպտատաշ պատերի շարվածքը սկզբնական շրջանում իրականացվում էր որոշ թերություններով (առկա էին շաղախի ավելորդ հոսքեր քարերի մակերևույթին և քարերի չափերի խախտումներ): Դիտողություններից և բացատրություններից հետո հնարավոր եղավ աշխատանքների որակը որոշ չափով բարելավել:

Առաջին հարկի մեծ բացվածքի կամարի մի կողմը նախագծից շեղումներով կառուցելու պատճառով քանդվեց և նորից կառուցվեց:

Հյուրատունը հարավ-արևելքից, հարավ-արևմուտքից և հյուսիս-արևելքից վերականգնման ընթացքում

Երկրորդ հարկը վերականգնվեց նախագծին համապատասխան. կառուցվեցին մեծ ու փոքր պատուհանները և պատերի որմնախորշերը: Քանդելու ժամանակ համարակալված քարերը վերատեղադրվեցին նախնական տեղերում:

Հյուսիսակողմյան մուտքի բացվածքը լրացվեց բարակ պատով, և կառուցվեց թաղը: Առաջին հարկի թաղերի վրա փլատակների մաքրման աշխատանքների ժամանակ որոշ տեղերում բացվեցին երկրորդ հարկի նախնական հատակի սահմանափակ հատվածներ: Դա հնարավորություն տվեց ճշտելու հատակի նախագծված մակարդակը: Վերջինս 0.00 նիշի փոխարեն պետք է լիներ +0.04 մ:

Տեղադրվեցին հյուսիսային ճակատի՝ նախատեսվածից ավելի մեծ չափերի երկու ջրհորդաններ: Սակայն հանձնարարվեց դրանք փոխել և տեղադրել նախագծին համապատասխան:

Վերանորոգվեց նաև երկրորդ հարկի մեծ սրահի հյուսիսային ճակատը, իսկ վերնամասում լրացվեցին մի քանի բացակայող շարքերը: Ինչպես նախատեսված էր, բացվեց հյուսիսային պատի արևմտակողմի որմնախորշը, որը պետք է ապահովեր հաղորդակցումն ավելացվող նոր ծավալի հետ:

2010 թ. շինարարական աշխատանքների ծավալը գոհացուցիչ չէր, քանի որ նախատեսվածի փոխարեն իրականացվեց ավելի քիչ աշխատանք:

Շինարարները 2010 թ. պետք է իրականացնեին նաև կենտրոնական պաշտամունքային կառույցներում նախորդ տարիներից ի վեր անավարտ և դրանց ամբողջացման համար դեռևս դր. Ա. Հախնազարյանին խոստացած աշխատանքները, ինչպես նաև շտկեին թույլ տրված որոշ սխալներ:

2010 թ. ընթացքում, սակայն, այդ աշխատանքներն այդպես էլ մնացին անկատար:

Հյուրատունը հարավ-արևելքից հողային աշխատանքներից հետո: Ապարանքին կից կառույցը հյուսիս-արևմուտքից հողային աշխատանքներից առաջ և հետո

2011 թ. նախատեսված արդեն իսկ փոքրածավալ աշխատանքները սկսվեցին բավական ուշ՝ հունիսի վերջին: Պատճառը Զբոսաշրջության վարչության հետ աշխատանքային պայմանագրերի կնքման ուշացումն էր:

Վերականգնումն իրականացվում էր նախորդ տարիների նույն աշխատակիցների կողմից. աշխողեկ՝ Վ. Հարությունյան, վարպետ՝ Վ. Ղուկասյան, բանվորներից հիմնականում՝ Գ. և Ե. Բաղալյաններ, Գ. Սարգսյան:

Վերականգնվում էին հյուրատան երկրորդ հարկի արևմտյան սենյակը և արևմտյան կողմի երկհարկանի կառույցը:

Հյուրատան երկրորդ հարկի արևմտյան սենյակի թաղի վրայից հեռացվեց հողը, ամրացվեց թաղը, այնուհետև կատարվեց բետոնացում: Վերականգնվեց նաև նույն սենյակի հարավային ճակատը: Այստեղ նախօրոք համարակալված թուլացած սրբատաշ կրաքարերը քանդվեցին ու նորից շարվեցին: Վերականգնվեց նաև բաց սրահի մեջ բացվող արևելյան մուտքը: Սենյակի ներսում կուտակված հողը հեռացնելուց հետո պատերի վրա ի հայտ եկան կրաշաղախե նախնական հատակի հետքերը, որոնք մոտ 12 սմ ցածր էին նախագծված նիշից: Ըստ այդմ էլ նախագծում կատարվեց համապատասխան փոփոխություն: Հյուրատան առաջին հարկի միջին սրահում սալարկման նպատակով հողը տոփանվեց և խճապատվեց:

Այնուհետև աշխատանքները շարունակվեցին արևմտյան երկհարկանի կառույցում: Վերականգնվեցին առաջին հարկի կիսաքանդ պատերը քանդել-վերաշարելով և նոր քարերով լրացնելով: Արևմտյան մուտքի կամարի կիսասրբատաշ քարերը նախատեսված էին ամրացման նպատակով

Հյուրատան երկրորդ հարկի բաց սրահի արևելյան հատվածը վերականգնումից առաջ և այդ ընթացքում



Հյուրատան երկրորդ հարկի բաց սրահի արևմտյան հատվածը վերականգնումից առաջ և այդ ընթացքում

քանդել-վերաշարել, սակայն պարզվեց, որ դրանք քանդելիս կարող էին վնասվել: Այդ պատճառով որոշվեց կամարն ամրացնել տեղում՝ կարանների մեջ շաղախ ներարկելով:

Վերականգնվեցին այս կառույցի գրեթե ամբողջությամբ բացակայող երկրորդ հարկի արևմտյան պատն ու հյուսիսային ճակատի արևմտյան կեսը, այդ թվում՝ նույն ճակատից բացված մուտքը: Աշխատանքները կատարվեցին մինչև թաղի ոտքի մակարդակը: Տեղում՝ գետնի վրա, գծագրվեց թաղի կորությունը, որով և դրա կառուցման համար հանձնարարվեց ստեղծել փայտե կավարամած: Աշխատանքները կատարվում էին հիմնականում բավարար որակով, քանի որ կոպտատաշ շարի մեջ արդեն նկատելի էր վարպետի հմտությունը:

Տարվա ընթացքում առանց այն էլ նախատեսված ոչ ծավալուն աշխատանքների միայն մեկ երրորդն իրականացվեց (15 միլիոն դրամի փոխարեն ընդամենը 5,9 միլիոն դրամ): Սա նշանակում է, որ աշխատանքները դանդաղ էին ընթացել, ընդ որում, առանց վերացնելու նախորդ տարիների թերությունները:

Այսքանով սահմանափակվեցին և առ այսօր չեն շարունակվում Դադի վանական համալիրի վերականգնման ծրագրի շինարարական աշխատանքները:

Ապարանքին կից կառույցը հյուսիս-արևմուտքից, հյուսիս-արևելքից և հյուրատան երկրորդ հարկի արևելյան սենյակի հյուսիսային պատը վերականգնման ընթացքում



Դարպասն արևմուտքից 1983 և 2008 թթ. և հարավ-արևմուտքից պեղումներից առաջ և հետո՝ 2011 թ.

Գլխավոր դարպասի վերականգնման նախագիծը. Դադի վանքի վերականգնման գործընթացը, ինչպես արդեն նշել ենք, 2009 թվականից ֆինանսավորում և ծրագրում էր ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչությունը:

2011 թ., բացի շինարարական փոքր ծավալի աշխատանքներից, նախատեսվել էր նաև կազմել գլխավոր դարպասի կամ մուտքի վերականգնման նախագիծը:

Դարպասը գտնվում է պաշտամունքային կառույցների արևմտյան ծայրում: Այն 5,59 x 3,66 մ չափերով հյուսիսային և հարավային հոծ պատերով թաղակապ կառույց է և ունի արևելք-արևմուտք ուղղությամբ բացվածք: Կցակառուցված է ժամատան հյուսիսային ճակատին հպված բնակելի սենյակների հարավարևմտյան անկյանը, ուստի և կառուցվել է դրանցից հետո: Հյուսիսային ճակատին է կցվում վանքի պարիսպը, որը կառուցվել է ավելի ուշ, քանի որ հստակ երևում է կցակառուցման կարանը: Հարավային կողմից պարսպի հետքեր չեն նկատվում: Արևմտյան կողմից դարպասին է մոտենում հողածածկ ճանապարհը, որն ընթանում է տեղանքի թեքության հորիզոնականով և հյուսիսից ու հարավից եզերված է հենապատերով: Վերջիններիցս հարավայինը պահում է ճանապարհի երթևեկելի մասը, իսկ հյուսիսայինը՝ լանջի թեքությունը: Հենապատերը պահպանվել են դարպասից մոտ 15 մ հեռավորությունից և հասնում են արևմտյան ճակատի հիմնապատին: Շարված են կոպտատաշ քարերով և ցածրորակ կրաշաղախով:

Մինչ նախագծային աշխատանքներին անցնելն անհրաժեշտ էր պեղել դարպասին հարող տարածքը: Այդ նպատակով նորից հրավիրվեց հնագետ Գ. Սարգսյանը: 2011 թ. հուլիսի 12-ից մինչև 21-ն իրականացվեցին պեղումներ: Աշխատանք-

Դարպասն արևելքից և հարավ-արևելքից պեղումներից առաջ և հետո

ները սկսելուց առաջ դարպասի ներսի տարածքը և շրջակայքը մաքրվեցին կուտակված հողից: Բացված մակերեսը հյուսիսային լանջից իջած և տոփանված ջրաբեր հող էր: Այդ շերտը խեցեղեն կամ բեկորներ գրեթե չէր պարունակում, իսկ եղածները շատ ուշ շրջանի նմուշներ էին:

Դարպասի ներսի տարածքում հողն իջեցվեց չափագրական զրո մակարդակից մինչև 1,2 մ խորություն, որտեղ բացվեցին կրաշաղախե սկզբնական հատակից պահպանված որոշ հատվածներ: Դրանք մինչև 5-8 սմ հաստությամբ ի հայտ եկան դարպասի արևմտյան կողմի հյուսիսային և հարավային պատերի տակ դրված քարե երկար նստարանների առջև և չէին ծածկում երթևեկելի մասը:

Դարպասի ներսում՝ կրաշաղախե մնացորդների մակարդակից 11 սմ բարձր, լայնական կենտրոնագծով բացվեց մուտքի դռան շեմը, որն ուղղագիծ դասավորությամբ, ուղղանկյուն կտրվածքով երկու երկար քար էր և միացնում էր դարպասի ներսի հանդիպակաց ճակատները:

Շեմից ներս ընկած հատվածում հատակը միապաղաղ ավազահող է: Այստեղ չհայտնաբերվեց տոփանված կամ այլ կերպ մշակված հատակ:

Շեմի երկու անկյուններում ներսից՝ հանդիպակաց պատերի տակ, բացվեցին մոտ 17 սմ տրամագծով և 20-25 սմ խորությամբ կլոր փոսորակներ, որտեղ խարսխվում էին դռան փեղկի ոտքերը: Սրանով փաստվեց, որ դարպասն ունեցել է փայտե դուռ:

Հյուսիսային որմի տակ բացվեց պատից 23 սմ դուրս եկող, շեմի վրա նստած ուղղանկյուն քարե շարվածք, որը դարպասի կամարակապ բացվածքի մեջ գնացող և փայտե դուռը դրսից ներառող քարակերտ շրջանակի միակ պահպանված հատվածն էր (տե՛ս էջ 106-ի երկրորդ նկարը), որով էլ փաստվեց դրա առկայությունը:

Դարպասի հարավային ճակատը տեղանքի թեքության պատճառով սկսվում է ավելի ցածր մա-

Դարպասն արևմուտքից պեղումներից առաջ և հետո

կարդակից, քան հյուսիսային պատը և հատակն են: Այստեղ հարավային ճակատին միացող շրջապարսպի հիմքերը որոնելիս բացվեց ուղղանկյուն մի սենյակ, որը թերևս ծառայել է դռնապահին՝

Դարպասի հյուսիսային հատվածը պեղումներից հետո և նույն հատվածում հայտնաբերված շեմի քարը և փայտե դռան՝ հողի մեջ փորված փեղկի ոտքի խարսխատեղը

փայտե դուռը փակող գերանը հետ քաշելու համար: Այն կարելի է կոչել փականատուն: Վերջինս կցված է դարպասին հարավից, և նրա հյուսիսային պատ է ծառայում դարպասի հարավային պատը:

Պահպանվել են միայն փականատան սենյակի որմերի հիմքերը՝ շարված կոպտատաշ ճեղքած քարերով, լայնությամբ եռաշերտ, թույլ կրաշաղախով, ընդ որում, հարավային պատի հիմնամասի երեսապատի քարերը տեղ-տեղ չեն պահպանվել: Հետաքրքիր է, որ սենյակի արևմտյան հիմնապատը հպվում է դարպասի հարավային ճակատին, իսկ արևելյանը միաձույլ կառուցված է դարպասի հետ:

Սենյակի մուտքը բացվում է համալիրի բակից՝ նրա արևելյան ճակատի հարավային անկյունում, որի նիշը մեկ մետրով ցածր է դարպասի հատակի մակարդակից: Ներսից հայտնաբերված խեցեղենը սակավ է և վերաբերում է ուշ միջնադարին:

Նորահայտ փականատունը գտնվում է վանական համալիրի բակ մտնող ներկայիս ճանապարհին և նիշով ավելի ցածր է նրանից: Որպեսզի այն չվնասվի վերականգնման ընթացքում վանքի տարածք ելումուտ անող մեքենաներից, ինչպես նաև չվերածվի ջրահավաք ավազանի, մինչև վերականգնման խնդիրներին անդրադառնալը ծածկվեց հողաշերտով: Քայքայումից պահպանելու նպատակով դարպասի հատակի վրա բացված բոլոր մանրամասները չափագրելուց և լուսանկարելուց հետո նույնպես ծածկվեցին բարակ հողաշերտով:

Պեղումների ավարտից հետո կազմվեց վերականգնման նախագիծը, որը սկզբում քննարկվեց Վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիայի գիտական (12.09.2011 թ.), այնուհետև հաստատվեց ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության գիտամեթոդական խորհուրդներում (19.09.2011 թ., վերականգնման էսքիզային նախագիծը տե՛ս գունավոր ներդիրում):

Անդրադառնալով կառույցի ճարտարապետությանն ու վերականգնման նախագծին՝ հարկ է նշել, որ վանքի երկու դարպասներից գլխավորն արևմտակողմյանն է (պարսպի մեջ ևս մի դարպաս էլ կա համալիրի արևելյան ծայրում): Դարպասների և պարսպապատի կառուցման ժամանակը հստակեցված չէ, սակայն, ինչպես նշում է Մ. Հասրաթյանը, դրանք կառուցվել են ԺԲ դարից հետո[63]:

Գլխավոր դարպասի թվագրման խնդիրը հստակեցվում է կառուցողական առանձնահատկությունների և ճարտարապետական հորինվածքի ուսումնասիրության արդյունքում:

63 **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 54:

Ինչպես վերը նշվեց, դարպասը կառուցվել է ժամատանը կից երկու թաղակապ բնակելի սենյակներից հետո՝ կցակառուցվելով վերջիններիս, իսկ դարպասին կից պարսպի հատվածը՝ ավելի ուշ: Դարպասը հորինվածքով կամարակապ, երկայնական երկու պատերի (հյուսիսային և հարավային) վրա հենված կառույց է: Կամարով և մեկ զույգ որմնամույթով միմյանց կապված պատերն ու թաղը բաժանվում են երկու մասի: Փայտե դուռը տեղադրված է եղել որմնամույթերի միջև, որոնց արևմտյան կողմում առկա է 23 x 24 սմ չափի քարե ելուստաձև շարվածք: Վերջինս կրկնում է կամարի կորությունը և հենարան ծառայում փայտե դռան համար: Որմնամույթերի ստորին հատվածներում կան ուղղանկյուն փորվածքներ, որոնցից հարավայինը միջանցիկ է: Վերջիններս նախատեսված են եղել փայտե շարժական գերանի համար, որը, դռան հետևի մասով ետ ու առաջ տարվելով, փակել ու բացել է փայտե դուռը, իսկ դռների բացված վիճակում գերանը հարավային միջանցիկ բացվածքով տեղաշարժվել է պեղումներից հայտնաբերված փականատան մեջ:

Դարպասի նկարագրված ճարտարապետությունը և շինարվեստը բնորոշ են ԺԷ-ԺԸ դարերին:

Գանձասար և Մեծարանց վանքերի դարպասները

Նմանատիպ հորինվածք ունեն, օրինակ, Գանձասարի և Մեծարանց Սբ. Հակոբավանքի դարպասները, սակայն տարբերվում են Դադի վանքի դարպասից միջնամասում գտնվող որմնակամարի հատվածում որոշ մանրամասներով:

Վերջին երկուսի պարագայում վերոնշյալ տեղում դարպասի բացվածքը վերնամասում դրսի կողմից կամարաձև է, իսկ ներսից՝ ուղղանկյունաձև կամ ունի մեղմ կորություն, որով և դյուրությամբ լուծվել են փայտե դուռը տեղադրելու և այն բացել-փակելու խնդիրները: Դադի վանքում նույն հատվածում բացվածքը և՛ ներսի, և՛ դրսի կողմերից ունի նույն կորաձևությունը, որի պարագայում կոր վերնամասով դուռն ամբողջությամբ չէր կարող բացվել՝ կամարին դիպչելու պատճառով: Այդ խնդիրը, ըստ երևույթին, լուծվել է՝ փայտե դռան վերին կոր հատվածն առանձնացված և անշարժ թողնելով: Վերին հատվածի անշարժ լինելու օգտին են խոսում որմնամույթից կամարին անցման մասում պահպանված երկու՝ միմյանցից քիչ հեռացված փորվածքները, որոնցից վերևինը նախատեսված է եղել անշարժ մասի գերանի, իսկ ներքևինը՝ դռան փեղկի ամրացման համար:

Կառույցի ներկայիս վիճակն այնքան էլ մխիթարական չէ: Արևմտյան ճակատում պահպանվել է ներքևից ընդամենը 1,3 մ բարձրությամբ սրբատաշ երեսապատի շարվածքը, իսկ արևելյան ճակատում թափված են հյուսիսակողմյան որմի որոշ հատվածներ: Երկու ճակատներում էլ թաղից վեր ընկած հատվածում ենթադրյալ ճակտոնները բացակայում են: Տեղում չեն նաև հյուսիսային որմնասյան որոշ քարեր:

Դարպասի տանիքի ծածկանյութը չի պահպանվել, որի արդյունքում մերկացած է թաղի վրայի կրաշաղախը: Նկատվում են ճաքեր կամարի և թաղի կենտրոնական մասերում: Քայքայման հիմնական պատճառը տանիքը ծածկույթից զրկվելու հետևանքով անձրևաջրերի հոսքն է: Ճակատներում առկա են սրբատաշ քարերի միտումնավոր հափշտակման հետքեր:

Կառույցը չափագրելուց, ճարտարապետական և ճարտարագիտական (կոնստրուկտոր՝ Ս. Նալբանդյան) ուսումնասիրություններից հետո որոշվեց, որ հնարավոր է իրականացնել ամբողջական վերականգնում:

Արևմտյան ճակատի բացակայող բոլոր տարրերը կարելի է վերստեղծել պահպանված հետքերով: Նախատեսվում է թափված թաղատակ քիվերը

լրացնել գոյություն ունեցողների կրկնությամբ, սրբատաշ շարվածքը՝ առկա և բացակայող շարքերի քարաբներին համապատասխան, կամարը՝ ըստ թաղի կորության: Արևելյան ճակատը նույնպես հնարավոր է վերականգնել նույն սկզբունքով:

Առավել խնդրահարույց է դարպասի տանիքի նախնական տեսքի վերականգնումը, քանի որ ոչինչ չի պահպանվել: Դրա մասին կարելի էր պատկերացում կազմել միայն թաղի վրա գոյություն ունեցող շաղախի շերտից, սակայն ծածկի բուսականությունը մաքրելուց հետո ևս որոշակի ոչինչ չհայտնաբերվեց:

Եթե կառույցը լիներ սալաքարերով պատված կամ կրասվաղով հարթեցված, ապա կունենար երկթեք լանջեր՝ համապատասխան ճակտոններով: Հողածածկ տանիքի դեպքում ճակատների վերնամասերը կլինեին ուղղագիծ և հորիզոնական լուծումներով:

Զուգահեռ համալիրների մուտքերի ուսումնասիրությունը խնդիրն առավել չի որոշակիացնում. հորինվածքով ավելի մոտ Գանձասարի դարպասն այժմ ունի ուղղագիծ հորիզոնական լուծումներ, սակայն ակնհայտ է, որ մուտքի վերևի հենց այդ հատվածը ժամանակին վերակառուցվել է, քանի որ վերևի և ներքևի շարքերը միմյանցից տարբերվում են:

Դադի վանքի պարագայում առավել ընդունելի կարող էր համարվել տանիքի հողածածկ տարբերակը, սակայն հաշվի առնելով խնդրի անորոշությունը՝ էսքիզային նախագծով ներկայացվեց երկու տարբերակ.

1. Հորիզոնական հողածածկ.
2. Սալաքարերով կամ կրասվաղով պատված երկթեք տանիք՝ համապատասխան ճակտոններով:

Երկու տարբերակների դեպքում էլ տանիքի քիվերի նիշերը ստացվել են կառույցի համաչափական վերլուծության արդյունքում, որի համար ելակետային չափ է ընդունվել արևմտյան ճակատի լայնության կեսը՝ a=2,75 մ, իսկ բարձրության չափերի սկզբնակետ՝ պեղումներով հայտնաբերված կրաշաղախե հատակի մակարդակը:

Վերլուծությունները ցույց տվեցին, որ մուտքի կառուցման համար անհրաժեշտ և պահպանված նիշերը հետևյալն են. թաղի ոտքի քիվատակի նիշը հավասար է նույն՝ a=2,75 մ չափին (շինարարական և չափագրական շեղումը՝ 3 սմ), կամարի գագաթի նիշը հավասարվում է $a\sqrt{2}$ = 3,89 մ (շեղումը՝ մինչև 5 սմ), թաղի գագաթի նիշը՝ $a\sqrt{3}$ = 4,76 մ (շեղումը՝ մինչև 1,5 սմ): Տանիքի քիվատակի բացակայող նիշ ընդունվեց համաբանությամբ հիմնավորվող տրամաբանական օրինաչափությամբ հաջորդը՝ $a\sqrt{4}$ = 2a = 5,50 մ նիշը: Այսպիսով, գտնելով կառույցի բացակայող նիշը, ամբողջացվում է գլխավոր դարպասի նախնական տեսքը, որը տեղավորվում է 2a = 5,50 մ կողմով քառակուսու մեջ:

Այս նիշերը կառուցողական առումով հնարավորություն են տալիս ճիշտ լուծելու նաև տանիքի ջրահեռացման խնդիրը, այսինքն՝ կարելի է ստանալ համապատասխան թեքություններ տանիքում՝ հողածածկ շերտից անցած ջրերի հեռացման նպատակով և այնուհետ արևելյան ճակատում տեղադրել քարե ջրհորդան:

Ժամատնից Դադի սրբատեղի տանող մուտքի՝ նոր պատրաստված փայտե դուռը (վարպետ՝ Ալբերտ Նազարյան)

Նախագծով չենք անդրադարձել փականատան վերականգնման խնդրին, որովհետև այն գտնվում է շինարարական աշխատանքների կազմակերպման տարածքում, և, ինչպես վերը նշվեց, չվնասելու համար ծածկել ենք հողաշերտով: Դրա ամրակայումը կամ վերականգնումը պետք է նախատեսել համալիրի տարածքի բարեկարգման փուլում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ են նաև դարպասի փայտե դռան նախագծումը և տեղադրումը (մյուս կառույց-



Ժամատնից Դադի սրբատեղի տանող մուտքի փայտե դռան նախագիծը



Փոքր գավթից Դադի սրբատեղի տանող մուտքի փայտե դռան նախագիծը

ների համար նախագծված փայտե դռները, անշուշտ, կարելի է տեղադրել ավելի վաղ):

Նախագծում ներկայացված տարբերակներից վերոնշված երկու գիտամեթոդական խորհուրդներն էլ հաստատեցին հողածածկ տանիքով տարբերակը:

Սրանով ընդհատվում են 1997 թվականից մինչև 2011 թ. ներառյալ Դադի վանքում իրականացված գիտահետազոտական, վերականգնման և ամրակայման աշխատանքները:

Ի լրումն այս ամենի՝ Դադի վանքի վերականգնման գործում 2014 թ. համեստ ներդրում ունեցավ երևանաբնակ Աբրահամ Աբրահամյանը: Նրա հոգածությամբ կառուցվեցին մոտ 55 մ երկարությամբ մետաղյա ցանկապատ և դարպաս համալիրի հյուսիսարևմտյան մասում՝ ժամատան հյուսիսարևմտյան անկյունից մինչև համալիրի մուտք ծառայող խարխուլ դռնակը:

Այսպիսով՝ ամփոփում ենք սույն ուսումնասիրությունը 1997-2011 թվականներին Դադի վանական համալիրում իրականացված վերականգնման աշխատանքների վերաբերյալ: Միաժամանակ հույս ենք հայտնում, որ հաշվի առնելով հուշարձանախմբի պատմական և մշակութային բացառիկ արժեքը, իսկ երկրամասի ազատագրումից ի վեր՝ հայոց Հայրենիքի Արցախյան անկյունն աշխարհին ճանաչեցնելու նաև նրա քաղաքական նշանակությունը՝ ցարդ չվերականգնված և թերավարտ կառույցներն ամբողջացնելու նպատակով Արցախի կառավարությունը կամ անհատ բարեգործներն առաջիկա տարիներին ևս անհրաժեշտ հոգածություն կդրսևորեն ոչ միայն հայ ազգին նվիրական, այլև համաշխարհային քաղաքակրթության գանձարանի մաս կազմող Դադի վանական համալիրը հնարավորինս ամբողջական վերականգնելու համար:

Տրտու գետի հովիտը Դադի վանքի մոտ
Վանական համալիրը հարավ-արևելքից (լուս.՝ 2011 թ.)

Դադի վանքի և համանուն գյուղի համայնապատկերը
Վանական համալիրն արևմուտքից (լուս.՝ 1993 թ.) և հարավ-արևելքից (լուս.՝ 2011 թ.)

Վանական համալիրը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1993 թ.)
Հուշարձանախմբի կենտրոնական հատվածը (լուս.՝ 1993 և 2010 թթ.)

Վանական համալիրը հարավից (լուս.՝ 1993 թ.)

Վանական համալիրը հարավից (լուս.՝ 2011 թ.)

ԴԱԴԻ ՎԱՆՔ

ԼՂՀ, ՔԱՐԱԲԱՂԻ ՇՐՋԱՆ, ԴՅՈՒՄ ԳԵՂԻՎԱՆՔ

ՀԱՄԱԼԻՐԻ ՀՈՂԵՎՈՐ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ, Վ

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՀԱՄԱԼԻՐ ՎԱՆԱՁՈՒՆԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ Է. ԻՐԱ ԴԵՐԱՁԳԱՑԱԾ ԱՅՍ ՓՈՔՐ ԻՐԱՎԱՑՈՒՄ Է

1998 - 2008թթ. ԸՆԹԱՑՔՈՎ

ԿԱՌՈՒՑՊԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՏԿԱՆՇԱԿԱՆ Ժ

ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻ 1214 —1224 ԹԹ.



ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻ ՎԵՐԿԱՆԳՆՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ Մ 1:80

ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԺԱՄԱՏՈՒՆ 1224 Թ.



ԺԱՄԱՏՆԻ ՎԵՐԿԱՆԳՆՄԱՆ ԷՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ Մ 1:100

ՊԵՂՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ Նշ

ԵՐԸԿԱՆՁՆՄԱՆ ՆԱԽԱԴԻՐ,

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԴԻՐ ՆԱԽԱՁԵՌ ԲՈՄԵՆ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՍՈՒՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ

ԴԱՄԱԼԻՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1224 թ.



ԴԱՄԱԼԻՐԻ ՊԱՏԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ 13-ՐԴ ԴԱՐԻ ԿԻՍԱԿԱՆ

ԴԱՄԱԼԻՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 14-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ

ԴԱՄԱԼԻՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 2008Թ.

ԱՄՍԱԿԱՀԱՏԿԱԾՆԵՐԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՄԱՐԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ,ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՊԵՂՈՒՄՆԵՐԻՊԵՍ ՍՏԱՑ ԿԱԶ ԱՐՏԱՅԱՅՏԵՐԻ,ՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ՎԻՆՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԹԵՏԱՅՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՁԻՆԸ:

ԱՐԶՈՒ ԽԱԹՈՒՆԻ ՍԲ. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ 1214 Թ.

ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿ.ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԷՍԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ Մ 1:100



ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄՈՒՏՔ 2001թ.

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԵՏՔ 2005թ.

ԴԱՌԻ ԵԿ, ԳԱՎԻԹ, ՍՅՈՒՆԱՍԱՐԱՀ, XIIIդ. ԲԱՋԻԼԻԿ ԵԿ. XIIդ. ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ XIVդ.



ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԷՍԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ Մ 1:100

ՊԱՏԱՐԱՆ ՆԵՐՔԻՆ 2008թ.

ՊԱՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՅԻ ՊԱՅՏԱՅԻ ՍԱՅՈՒՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

ՍԱՅՈՒՆ ՎԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՁԵՌԱԳՈՐԾՎԱԾ ԳԼԽԿԻ

ՄԱՐԱՄԱՊԵՏ ՀԱՅԿ ԴՊՐՈՑԻ

ՈՒԹԵՐ

ՔԱՋԱՅՅԱՆ ՍԱՅՈՒՆ ԲԵԼԱՐԱՆԵՐԻ, ԳԱՎԱՌԱՅԻՆ-ՇԻՐԱԿԱՅԻՆԻՆ ՕՐԱԿԱՆԻՑ ԳԼԽԱՎՈՐ, ՍԱՐՈՒՄՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵԼ ԵՆ ԴԱՐԻ «ԵԿԵՂԵՑԻՆԻՍ» ԲԱՑԱՅԱՆ ԴԱՐԱՊԱՐԱՆԻՑ: ԿԱՌԱՆ ՔՈՒՐԴԻԿ ԱՌՈՒՆՔ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՄԻ ԵՎԱ Ի (1524-1576) ԱՐԾԱԳԱՆՈՒՄ ԴՐԱՆՆԵՐԻՆ ԳՏՆՎԱԾ Է ԿԱՌՈՒՑԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ ՇԻՆԱՐԱՐԸ:

Վանքը գլխավոր դարպասի կողմից (լուս.՝ 2008 թ.)
Վանքի պաշտամունքային կառույցները հյուսիս-արևմուտքից վերականգնումից հետո (լուս.՝ 2011 թ.)

Գմբեթավոր փոքր եկեղեցին հյուսիս-արևմուտքից
վերականգնումից առաջ

Գմբեթավոր փոքր եկեղեցին հյուսիս-արևմուտքից վերականգնումից հետո

Կաթողիկե եկեղեցին հյուսիս-արևելքից և արևմուտքից վերականգնումից առաջ և հետո

Զանգակատունը հարավ-արևմուտքից և հյուսիս-արևելքից վերականգնումից առաջ և հետո

ԴԱՏԻ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ԼՌՀ. ՇԱՀՈՒՅԱՆԻ ՇՐՋԱՆ, ԴՅՈՒՂ ԴԱՏԻՎԱՆԻ ՆԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԷՍԷԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՎԵՐՄԱՆԱԳԱՍՍ ԻՄԱՆԱՍՆ ԵՎ ԵՐԿՈՒՂԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԵՂԻԱԿՆ՝ ՅԱՐՏԱՄԱՊԵՏ ՍԱՍՈՒՆԻ ԱՅՎԱԶՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԲԹՍ-749

ՀԱՏԱԿԱԳԾ U 1:30



ԱՐԵՎԱՏՅԱՆ ՇԱԿԱՏ U 1:30



ԱՐԵՎԱԼՅԱՆ ՇԱԿԱՏ U 1:30



ԿՑՈՒԱԾՔ ԴԵՊԻ ՀՅՈՒՍԻՍ U 1:30



ՀՅՈՒՍԻՍՅԱՆ ՇԱԿԱՏ U 1:30
ՎԵՐՄԱՆԱԳԱՍՍ ԵՐԿՈՒՂԻ ՏԱՐԲԵՐՈՒԹ 1

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇԱԿԱՏ U 1:30

ՍԻ ՔԱՐԻ ՎԱՆԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԾԻՆ ՄՈՏՏԵՐ



ՎԵՐՄԱՆԱԳԱՍՍ ԵՐԿՈՒՂԻ ՏԱՐԲԵՐՈՒ՝ ՔԱՐԱՇՈՒՇԿ ՏԱՆԻՈՎ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇԱԿԱՏ U 1:30

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՇԱԿԱՏ U 1:30

Սյունասրահն արտաքուստ և ներքուստ վերականգնումից հետո

Կաթողիկե եկեղեցու հարավային
պատի որմնանկարը
մասնակի վերականգնումից
և մաքրման աշխատանքներից հետո



Կաթողիկե եկեղեցու հյուսիսային
պատի որմնանկարը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Դիվան հայ վիմագրության, պրակ 5, կազմող՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1982:
Ժամանակագրութիւն տեառն **Միխայէլի Ասորւոյ** պատրիարքի, Յերուսաղէմ, 1871:
Մովսէս Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983:
Մովսէս Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969:
Սամուել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալիշան Ղ., Հայապատում, հ. Բ, Վենետիկ, 1901:
Ալիշան Ղ., Արցախ, Երևան, 1993:
Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895:
Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999:
Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան 1992:
Սանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Երևան, 1952:
Մեսրոպ մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դաղի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938:
Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան 1985:
Մնացականյան Ս., Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դարերում, Երևան, 1976:
Պապովիյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972:
Պետրոսյան Հ., Խաչքար, Երևան, 2008:
Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858:
Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975:
Дурново Л., Очерки изобразительного искусство средневековой Армении, Москва, 1979.
Мнацаканян С., Архитектура Армянских притворов, Ереван, 1952.

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Այվազյան Ս., Դաղի վանքի հոգևոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը, «ՊԲՀ», 2006, № 3:
Այվազյան Ս., **Սարգսյան Գ.**, Դաղի վանքում 2008 թ. կատարված պեղումները, «Վարձք», 2012, № 7:
Հակոբյան Ա., **Սիմոնյան Հ.**, Դաղի վանքի նորահայտ արձանագրությունը և Տպելի տեղադրության հարցը, «ՊԲՀ», 1998, № 1-2:
Պետրոսյան Հ., Դաղի վանքի ծածկագիր արձանագրությունը, «Իրան նամէ», 1998, № 1-3:
Սանամյան Հ., Դաղի վանքի կառուցապատման փուլերը ըստ շինարական շերտագրության, «Հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողով. զեկուցումների դրույթներ», Երևան, 2005:
Ուլուբաբյան Բ., **Հասրաթյան Մ.**, Դաղի վանք, «Հայկազյան հայագիտական հանդես», հատոր Ը, Պէյրութ, 1980:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍԱՄՈՒԼ

«Արարատ», 1896:
«Նոր-Դար», 1892, № 15:



ԴԱԴԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 1997-2011 ԹԹ.

ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՃՈՒԿ (RAA) ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱԶՄ

ԽՄԲԱԳԻՐ **ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
ԽՄԲԱԳԻՐ, ՍՐԲԱԳՐԻՉ **ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2015

RAA (Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող) հիմնադրամն իր գործունեությունը ծավալել է՝ սկսած 1960-ական թվականների վերջերից: Պաշտոնականացել է 1982 թ. Գերմանիայում: Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է 1998 թ.: Նպատակն է իրականացնել ներկայիս Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, առաջնահերթորեն Պատմական Հայաստանի տարածքում, ապա նաև Սփյուռքում պահպանված պատմական հուշարձանների համակողմանի ուսումնասիրություններ:

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1997, հայերեն



1998, հայերեն



1999 հայերեն, 2000 ռուսերեն, 2001 անգլերեն

2001, հայերեն

2003, հայերեն, ռուսերեն

2004 հայերեն, 2007 ռուսերեն

2004, հայերեն

2004, հայերեն



2006 հայերեն, 2011 անգլերեն

2007, հայերեն



2008, հայերեն

2009, հայերեն, ռուսերեն, անգլերեն



2010, հայերեն

2011, հայերեն

2012, հայերեն

2013, հայերեն